

32

Ullur 46 P 53 Ullur 46 P 53 Ullur 46 P 53

263 P 762



39 (48.925)

ՈՒԼՆԻՍ

ԿԱՄ

1-32

ԶԷՅԹՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՌԱՆԻ ԿԻԼԻԿԻԱ



ՆԿԱՐԱԳԻՐ

ՏԵՂԱԿԱՆ, ԿԵՆՍԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ


ԵՒ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

1

ԳՐԵՑ

Յ. Յ. ՍԱԼԱՀԱԴՐՅԱՆ



A 16796

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

(ԱՇԱՄԵԱՆ)


1884

Մէն մի օրինակ հեղինակին ձեռագիր ստորագրութեամբն
վաւերացեալ է :



2539

10807



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յորժան ներեցին ինձ ժամերն սուղ այնց պաշտամանց զորս ունէինք 'ի շնորհս 1880 ի Կիլիկեան ընկերութեան 'ի Զէյթուն հաստատած առաջին երկսեռ վարժարանաց մէջ, զրել' Կիլիկիոյ սոյն հոշակաւոր Աւանն լեռնային, կենցաղն ազգայնոց, լեզուն եւ որ 'ի կարգին' օգտեցանք, որում կը տեսնայինք 'ի վաղուց եւ լցուցինք կարեւորագոյն պէտք մը' որոյ եւ նմանեաց անհրաժեշտ կարեւորութեան նկատմամբ զրել աստուծոյ բերէւս անդէպ լինի : Արդարեւ դժուարագոյն եղաւ մեզ 'ի զլուխ հանել զսա, զի ծանրածանր զբաղմունք պաշտամանց որք նոյնպէս 'ի շնորհս Հայոց Միացեալ Ընկերութեանց տեսցինք ց1882' կը կաշկանդէր զմեզ, մանաւանդ' առօրեայ տասնեւ մէկ ժամ աշխատութիւն, կիրակնօրեայ մասնաւոր հոգի եւ այլ ազգի ազգի ձեռնարկութիւնք, յորս անընդհատ յարատեւութեամբ ընդունայն ընտանեօք կը մարտնչէինք մինչեւ իսկ գիւղական կենաց հանգամանքէ եւ պատշապարանէ զուրկ դժնդակ կացութեան դէմ, որոց անդիմադրելի ննշմամբ երկու տարւոյ մօտ տեսնուեցանք : Բայց ըստ որում պարտաւորեալ չեմք կրկնել համարատարութիւն զպաշտօնավարութենէ զոր ժամանակին կատարած եմք' վասն որոյ կը բողոքմք զայն եւ կը դառնամք շարունակել ներկայիս նկատմամբ :

Յառաջակալ հրատարակութեանս շարժառիթն 'ի սկզբանէ ոչ այլ ինչ էր եղէ ոչ' : Վրայն լեզուն իբր բանասիրական ինչ ծանօթացնել, այլ նկատելով սա-

կայն քէ՝ ցարդ նոցա կենցաղին նկատմամբ եւս տեղեկութիւնք երբէք հրատարակեալ էին՝ զայն եւս կրցեցինք եւ ամբողջացուցինք հապենայի :

Արդ՝ որպէս պարտ է պատմագրի ՚ի բաց կալ յաւէտ վիպական զարդարուն ոնէ եւ սերեւերանի՝ նոյն ուղղութեամբ եւ մեք ընթացանք ներկայ հրատարակութեանս (*) մէջ, որք մեր օրուան վիճակն կը ներկայացնեն, ջանադիր լինելով ստուգաստան առնել ամենայն պարունակութիւն հանդերձ ժողովրդային մերով եւ բնաւին հեռի դարովելու դիտմանէ : Վասն այսորիկ Ձեյրունցիք՝ որոց կը ներկայանայ մի լաւագոյն շարժառիթ՝ պարտին անմոռնջ ներհնապէս զարգանալ կրթութեամբք եւ ընդ նմին սպասել առաւել-

(*) Մինչդեռ բոս սահմանադրութեան ազգային Ուսումնական խորհուրդ ունիմք, որ ազգին կրթական պէտքն պարտի հոգալ՝ այլ զուրկ է իւր տրամադրութեան ներքեւ ունենալէ հրատարակեալ գրոց հաւաքածոյն, որոյ որակութեան նկատմամբ զաղափար կազմելու անհրաժեշտ պէտք ունի՝ կ'առաջարկեմ որ իւրաքանչիւր Հեղինակ պարտաւորի իւր երկէն երկու օրինակ յետ այսագրութեան անմիջապէս Ուսումնական խորհրդոյ յանձնել ի տնօրինութիւն : Թերեւս բազում առարկէն քէ այդ պէտքն լրացած է Ազգային Մատենադարանի գոյութեամբ, բայց կը սխալին. զի այլ է նախաձեռնութեամբ գոյութիւն Մատենադարանի եւ այլ՝ պարտաւորութիւն առ Ուսումնական խորհրդն, որք քէ սկզբմամբ եւ քէ յաւաքեալութեամբ բոլորովին անգտն են յիշերոց : Մեք կը փափագիմք եւ որպէս անհրաժեշտ իսկ է՝ որ Ուսումնական խորհուրդն ի գումարման՝ իւր հսկող եւ տնօրինող մարմին՝ իւր ՀՐԱՄԱՆՆԵՍՈՒՄ ունենայ մի գրաստան, յոր երկարէ ձեռն՝ եւ առնու խնդրոյ տակ եղող դասագիրքն եւ կամ այլ գրական գործ :

Լաւագոյն է գրախնայութեան վաւերացման ենթարկելէ յետոյ յանձնել նաեւ Ուսումնական խորհրդոյ ի նոյն գործողութիւն :

լազոյն օգնութեանց որոց ներկայ հրահարակութիւնս պատճառ. պիտի լինի :

Ի շարս կը փափափէին զնել ազգային ճին երգոց մի հաւաքածոյ, բայց հակառակ խուզարկութեանց չկարողացան զտնել, վասն որոյ՝ հարկադրեցանք ի վերջոյ միայն առասպելախառն պատմութեամբ շահանալ, որք կը պարզեն իւրեանց կեանքն եւ զորս միանգամայն իբր ռն բանից իւրեանց դրած եմք :

Աւելորդ չեմք համարիր աս յայտնել նախ քե՛զէյրունցոց լեզուի արտասանութիւնն՝ նշելու պահելու համար տառաւորակներ՝ եւ ռնն չ'խանգարելու համար աւելորդ կէտեր դրած եմք :

Բ. Տեղական բարբառով գրուածներն բնականաբար յատուկ մաս ընել հարկ էր՝ բայց դասակարգութիւնն չ'յեղաւորելու համար պարտաւորեցանք իւրաքանչիւր հատուածն գրել ի կարգին :

Իսկ՝ պատմութիւնն իւրեանց կէս անկախ ժամանակաց որ տեւած է քաղաքուիս չորս իշխանաց կառավարութեամբ ց1860, եւ պատերազմունք՝ որք իբր կարեւորագոյն ինչ ուրոյն մի հասոր կարեն լինել՝ ի բաց բողած եմք, ինչպէս նաեւ շրջակայ գիւղօրէից նկարագիրն, զորս այցելելու իսկ ժամանակ չունեցանք :

Ընդ այսմանիւ բաւականացեալ՝ ներկայս կը ներկայացնեմ ազգիս, մանաւանդ գիտնոց յորոհողութիւն եւ յիրաւունս նախաձեռնութեան կը խնդրեմ՝ որ Միացեալ Ընկերութեանց նախօրդ եւ այժմեան պաշտօնէից իւրաքանչիւրն եւս հանին՝ կամ Ընկերութիւնն նոցա վերայ անուղղակի պարտք դնէ սոյն օրինակ պէտքեր լրացնելու :

Պարտաւորեալ եմ նաեւ սոյն յարմարագէտ առքիւ

մեր Օգոստփառ Կայսեր հայրախնամ կառավարութեան գրութիւնն հայցել Զէյթունցի եղբարց վերայ, որոց 60 եւ մինչեւ իսկ 70 % Գաղղիական ախտով(*) են վարակեալ, չ'կայ մի տուն, մի բնականի յորս մօտ գտած չ'լինի այս գարեւի ախտն որոյ նկատմամբ անցեալ տարի Մասիս պատուական լրագրոյ մէջ մի համառօտակի տեղեկութիւն տուի, յորժամ մի եւ նոյն ախտին տարածման առաջին առնելու համար շնորհ կը լինէր բժիշկ եւ դեղ յուղարկելու Ի Քասթամունի:

Վերջապէս, նկատելով անդամօր բժշկի եւ դեղոց չ'գոյութիւնն՝ կը հարկադրիմ կրկնել իմ աղաչանքս վասն փութացման այն անմիջական օգնութեանց՝ որոց կը կատօսին Զէյթունցիք եւ զորս կարէ բնօնեղ եւեթ բարձրագոյն մի հրաման:

Կ. պօլիս
Էնիզամիու 1884

ՅԱԿՈԲ Յ. ԱԼԼԱՇՎԷՐՏԵԱՆ

(*) Ի Երմանիկ տեսած եւ լսած եմք բազմաց այդ ախտով վարակիլն. իսկ ըստ վկայութեան հանգուցեալ Սանտալնեան Գրիգոր Էճէնսիի՝ նախորդ այցելու տեսչին Կիլիկիոյ՝ բազումք եւս են վարակեալ ի Բերիս եւ յԱսանայ:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Դիրք, Շէնք, Թիւ բնակչաց, Եկեղեցիք, Վարժարանք, Վանորայք :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ծնունդք եւ Մկրտութիւն, Անուանք, Հազուատք, Տնական կարասիք եւ կեանք, Ուտեստք, Լուսցարարութիւն լաթեղինաց եւ մաքրութիւն մարմնոց, Բարոյք, Կրօնական եւ բարոյական հանգամանք, Ազգային կեանք, Ընկերութիւնք, Երկրագործութիւն—արմտիք, բոյսք, Կենդանիք, Արուեստք եւ վաճառականութիւն, Որսորդութիւնք, Նշանտուութիւն եւ հարսանիք, Գաղղիական ախտ, Գեղք, Հիւանդութիւն եւ մահ, հանդէս Թաղման :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Աւելորդապաշտութիւնք, Օրհնութիւնք կամ բարեմաղթութիւնք, Անէծք, Երդմունք, Վրէժխնդրութիւնք, Առակք, Յանգաւոր զրոյցք, Պատմութիւնք, Աստեղանուանք, Հանելուկք, Տէրունական աղօթք Զէյթունցւոց :

ԲԱՌՔ. — Գործածականք, Գիտականք, Երկրագործականք եւ Բուսաբանականք :

ՈՒԼՆԻԱ ԿԱՄ ԶԷՅԹՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱԻԱՆ

Ի ԵՐԼԻԿԻՄ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

—→→→→→←←←←←—

ԳԼՈՒԽ Ա.

ԴԻՐԴ

ՆՇԱՆԱԻՈՐՆ ի կիլիկիա Գերմանիկ՝ իւր երկու իրարմէ որոշ ճանապարհներն կ'ուղղէ դէպ 'ի հիւսիսային արեւմուտք. մին յայտցանէ կ'սկսի Ախլը՝ ճաղ բարձրագոյն լեռան ստորոտէն, ուստի ճանապարհորդն առաջնորդութեամբ Զէյթունցի ⁽¹⁾ ջորեպանին յառաջ կը վարէ իւր ընթացքն եւ ժամ ու կէս ատենէ հասանելով գագաթն՝ կ'անցնի լեռնագաչտէն եւ կը մտանէ մի առասպար կիրճ. յետ այնորիկ՝ անընդհատ բարձր լեռանց գահավթ նրբուղիներէ ելեւէջներ ընելով ու ձորեր անցնելով

(1) Գերմանիկ (Մարաշ) քաղաքէն ի Զէյթուն մի միայն Զէյթունցի ջորեպանք կը բանին :

վեց ժամէն կը հասանի յեզր Ջահան գետոյն , իսկ ի միւսմէ՝ հարթ ճանապարհաւ երեք ժամէն : Ուղեւորն՝ առաջնով կաւարաէ իւր ընթացքն այլ եւս չորա , իսկ երկրորդաւ՝ անցնելով քարալէն մեծ կամուրջէն ինն ժամ շարունակելով . սա՛ յընթացս իւր կիւրէտինի ահարկու ապառաժ լեռան միջովայրէն կանցնի , որոյ գագաթն է համանուն ամբողջն : Հուսկ ուրեմն , լեփ առ լեփ ճանապարհներէ զարհուրեալ ուղեւորն կը հասանի անդ՝ ուր այլ եւս որոշակի կը տեսանի շէնքն , այս է Զէյթունն , աւանն , Տորոս լեռանց մէջ ապառաժուտ մի լեռան զառիվայրի վերայ եռանկիւնաձեւ գրիւք , որոյ չրջակայ բարձրաբերձ լերինք եւ արեւելեան ու արեւմտեան հիւսիսակողմանց երկու գոտարամատոյց կիրճերն առաւել նշանաւոր կը հանդիսացնեն տեղն : Առաջնոյն կողէն անցնող գետն , որոյ ջուրն յամարան մասամբ կը նուազի՝ բուն Զէյթունի յառաջակողմը բոլորելով՝ կը միանայ վերջնոյն մէջ տեղէն անցնող գետին հետ եւ որ կը թափի ի Ջահան :

1879ի շինուած սլաքստափակ մեծ զօրանոցն Զէյթունի արեւելեան հարաւակողմն կառուցեալ է բլրի մը վերայ , քառորդ ժամու հեռաւորութեամբ եւ կ'իջիտէ ի վերայ նորա , որոյ մէջ ի շնորհս Բարեխնամ կառավարութեան կը բնակին երկու հարիւրի մօտ քաջամարտիկ զօրականք , հանդերձ թնդանօղով ի հսկողութիւն :

Զէյթունի օդն եւ ջուրն լաւ է , բայց ներքին աղակալութիւնք ապականած են օդն :

ՇԷՆՔ

Մի ախուր երեւութով կը ներկայանայ որ չորս զլխաւոր թաղերու բաժանեալ է . Ա. Վերիթաղ, Բ. Օրբա մահալլէ՝ որոյ ստորոտն է կառավարական սաշտօնատունն . վարձեալ տուն մ'է սա, ուր կը նստին Գայմադամ սէյն, Գատը էֆէնտին եւ այլ սաշտօնեայք . Գ. Ղարդալար եւ Դ. Պօզ պաշլը . անջատ թաղ մ'ալ կայ Աստուածածնայ վանքի մօտ որ վերի թաղի կը վերաբերի ⁽¹⁾ . Բողոցներն անկանոն, նեղ եւ անանցանելի են ափափայութենէ եւ անմաքրութենէ . խկ խրաքանչիւր թաղի ներքին Բողոցներն զփռարագոյն է չրջիլ յորս կ'ընթանայ կոյաջուրն : Տանց որմերն աղմով եւ քարով բարձրացած են, որոց ներքնայարկն կը ծառայէ իբր ախոռ եւ ճեմիչ եւ վերնայարկն՝ բնակարան, զոր կը բաժանէ մի քանի ոտքէ շինեալ սանդուխ մը : Բնակարանն չունի բաժանումներ եւ սենեակ, մի անկիւնն շինուած է խնամով մեծ քուշն որ տան խոհանոցն եւ կրակարանն է միանգամայն, սորա արտաքին բարձրութիւնն է առ առաւելն մի մեթր եւ շինուած է աղմով կամ փայտէ խողովակով մը . տան ներքին որմերն եւս տըղմով են առանց կրի եւ տանիքն հաստատեալ է 'ի վերայ սեանց եւ անտաշ ջողերու՝ որոց վերայ

(1) Սորա ճանապարհի վերայ տասը վայրկեան հեռաւորութեամբ մի մեծ քարակոտորի հովանւոյն ներքեւ կը նստին զրօսելոյ համար, վասն որոյ անքանի (գործ չունեցող) քար կը կուչուի . . . :

տախտակ եւ ծառոց ստեր զեռեղելէ յետոյ հողով
կը ծածկեն: Իւրաքանչիւր տան վերայ մի շողփար
կայ որով՝ անձրեւած եւ ձիւնած ատենն ջուրն
ներս չ'հոսելու համար կը ճնշեն հողն աստ անդ
տարուերեկով. տան առաստաղն տախտակա-
մած շունի նոյնպէս եւ գետինն որ հող է եւ քուշի
մուխն ամեն ինչ սեւցուցած. բնակարանի լուսա-
մուտն է միայն դուռը (¹) այսու հանդերձ ներսն
խաւար է, միայն տուն մը վայելուջ կողմեր ունի
եւ քանի մը տուն ընդհանուրէ կը տարրերին ա-
ռաւելագոյն յարմարութեամբ:

Գլխաւոր շուկայն աւանին կեդրոնն է եւ կըր-
պակը են թուով 50ի մօտ, բաց աստի իբր յատուկ
թաղային շուկայ՝ ամէն թաղի մէջ մի քանի կրպակ-
ներ կան առաւել կամ նուազ ապրանք:

Զէյթունի մէջ երկու աննշան փուռ կայ, յորոց
մին՝ ի շարաթու մի երկու օր քանի մը ժամ բանե-
լով սիսեռախառն հաց կ'արտադրէ աղոց, իսկ
միւսն տարուան մէջ մի քանի օր, օտար ճանապար-
հորդաց հաց վաճառելու եւ զլխաւորաբար կա-
ղանդի օրն տուներէ զրկուած խմորեալ (խմորէն
մօս մը չորցնելով յաջորդ կաղանդին կը պահեն)
հացն եփելու համար, ըստ որում՝ սովորական հա-
ցերնին անխմոր է, զոր կըր թերթեր բանալով
տան մէջ կ'եփեն:

Գարա—Պոյաճեան մականուանեալ անձ մը
մի գեղեցիկ աղբիւր կառուցած է կոփածոյ քա-
րերով Պօզ պաշր թաղի մէջ յայնկոյս գետակին.

(¹) Դրան բանալին ԶԶԵՆՈյ է կրիսմեա զոր կըրեօ կ'անուանեն:

միւս թաղերն ապառաժներէ բղխեալ ջրով եւ մին՝ գետոյ ջրէն կը հողան իրենց պէտքն: Զէյ-թունի մէջ բաղանիք չ'կայ բնաւ, միայն երկու ժամ հեռաւորութեամբ դէպ հարաւ ջերմուկ մը ուր կերթան արք լուացուելու համար:

ԳԼՈՒԽ Գ.

ԹԻԻ ԲՆԱԿԶԱՅ


Տանց թիւն է 1000—1200, յորոց 1000ն՝ Լուսաւորչական Հայոց կը պատկանի, 70ն Պապականաց, 50էն աւելին Բողոքականաց եւ 25—50ն Տաճկաց. իսկ բնակչաց թիւն կը հաշուին 5000էն աւելի ընդայր եւ ընդ կին եւ ընդ մանկոի: Ի չգոյութենէ օրինաւոր աշխարհագրի հարկադրեցանք կարծեաց եւ բաղդատութեան վրայ հիմնել այս մասն:

ԳԼՈՒԽ Գ.

ԵԿԵՂԵՅԻՔ

Զէյթունի մէջ 5 մեծ եկեղեցիք կան. յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ վերի թաղի, Ս. Աստուածածնայ՝ Օրբա մահալիէի, Ս. Յակոբայ՝ Ղալիպարի, Ս. Սարգսի՝ վարի թաղի եւ Ս. Յովհաննու՝ Պօղ պալլերի մէջ. բաց յայտոցունց կան մատուռք յանուն Սրբոց Հրեշտակապետաց, Ս. Թորոսի, Սրբոց

առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, Ս. Պարսամայ եւ Ս. Յակոբայ, վերջինն 'ի գերեզմանատան Ս. Աստուածածնայ թաղի, յորս պաշտամունք կը կատարին իւրեանց տօնախմբութեանց օրերն միայն, իսկ առաջնոյն մէջ շատ օրեր: Սոյն չէնքերն արտաքին չորջապատ շուէին եւ մեծ մասն ո՛չ պահարան եւ ո՛չ դռնիւթ. բաց առաջնոյն՝ միւսոց ներքնակողմն մթին, աղտոտ եւ բոլորովին անվայելուջ է աղօթատեղի լինելէ: Յիշեալ սրբավայրք նոր չէնքեր են եւ շուէին յիշատակարանք, միայն Ս. Յակոբ եկեղեցւոյ որ 1847ին շինեալ է՝ արեւմտեան որմին վերայ հետեւեալ յիշատակարանն կայ փոքր քաղի մը վերայ փորագրեալ եւ զետեղեալ անդ, այսպէս,



« Շինեցաւ տաճարս 'ի թվին հյց ԶՂԴ: . ի հրպեթե տն Սիմէոն Կթէն. ի բռնակալութե տաճկաց Սուլիման խոնդքարին : . զոր ի շարժէ կործանեալ էր նոր նորոգեց ձեռամբ մղտեսի Քաբրիէլն : »

Փորագրութիւնն լաւ չէ, բայց դիւրաւ ընթեռնւի որ կը հաստատէ առաջնոյն վերաբերիւն:

Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ եւս մազադաթի վերայ ձեռագիր, պատկերազարդ եւ ոսկեզօծ մի աւետարան կայ յոյժ գեղեցիկ. պատուական հնութիւն, երանի թէ զգուշութեամբ պահէին:

ԳԼՈՒԽ Ե.

ՎԱՐԺԱՐԱՆՔ

Ս. Լուսաւորչի եւ Ս. Աստուածածնայ եկեղեցիաց կից կան երկու ծաղկոցք, որք կը կառավարուին 'ի ձեռն վարժապետաց, սոցա տարեկան վարձքն է 6—800 դահեկան. ուսանողք ըստ եղանակի կ'առաւելուն եւ կը պակասին: Իւրաքանչիւրն իրեն ձեռք բերած գրքով⁽¹⁾ որոց մէջ մեծագոյն տեղ կը գրաւեն Բողոքական կրօնագիրք՝ կուսանի ընթերցանութիւնն. քով ուսանողաց բարեւագիր եւս դաս կը տրուի: Վարժապետք՝ որք անուս անձինք են՝ մանկանց հնչումն խանգարած եւ առողջանութիւնն աղաւաղած լինելով՝ ամբողջ բնակչաց մէջ սակաւ անձինք կարեն ուղղապէս «Բ» գիրն արտասանել:

Կիլիկեան Ընկերութեան 1879ի հաստատած մանչ տղայոց վարժարանն Ս. Յակոբ եկեղեցւոյ կից չէնքին մէջ էր, բայց յետ այնորիկ 1880ին վարժարանն առ մեօք երկսեռի վերածուելով՝ աղջկանց յատկացուցինք զայն եւ յիշեալ Ընկերութեան մանչ տղայոցն ալ Ս. Սարգիս եկեղեցւոյ կից չէնքին մէջ փոխադրեցինք:

Իսկ Ս. Յովհաննէս եկեղեցին իրեն կից վարժարան չունի եւ ոչ այլ չէնք, վասն զի եկեղեցին թաղին մեծագոյն մասին հետ այրած լինելով՝ հա-

(1) Տեղացիք որ եւ է մատեն թուղթ կ'անուանեն:

դիւ 1880ին կարողացան վերականգնել, բայց բու-
լորովին թերի մնացած է եւ ժողովուրդը հողոյ
վերայ կանգնած կ'աղօթէ :

Ս. Լուսաւորչի եւ Ս. Աստուածածնայ եկե-
ղեցեաց խույերն են որք իբր վարժարան կը դոր-
ծածուն, եւ երկուքն ալ մի նեղ սրահէ կը բաղկա-
նան. Ս. Յակոբայ եւ Ս. Սարգսի վարժարանք միայն
իբր այն շինեալ են, որոց առաջնոյն մէջ մի փոքր
սենեակ կայ, վերջնոյն մէջ ալ ժողովրդէն հանգա-
նակութեամբ իբր դասարան յարմարագոյն մը մեք
շինեցինք : Բոլոր վարժարանք՝ ինչպէս նաեւ եկե-
ղեցեաց բակք ճեմիչ չունին բաց ՚ի Ս. Յակոբայ
վարժարանէն, ուր յարմարագոյն դատեցինք 1880
ին հաստատել աղջկանց առաջին վարժարանն,
մանչ աղայոց համար ալ վարժարանին մօտ աղա-
ռածի վերայ հատ մը շինել տուիք :

ԳԼՈՒԽ Զ.



Վ Ա Ն Ո Ր Ա Յ Ք

Երկու են վանք, յանուն Ս. Աստուածածնայ եւ
Ս. Փրկչի. առաջինն Զէյթունի արեւելահողմն է
կէս ժամ հեռաւորութեամբ, բարձրադիր եւ օ-
ղաւէտ, ունի եկեղեցի մը եւ 15էն աւելի սենեակ,
խոհանոց մը եւ սրահաւան ջուր, իսկ Բ.ն եր-
կուք ու կէս ժամաւ հեռի դէպ արեւելեան հա-
րաւ, նոյնպէս բարձրադիր եւ յոյժ օղաւէտ, ջուրն
զով եւ սրահաւան քան զառաջինն : Սորա շէնքն

քայքայեալ վիճակի մէջ է, չունի օրինաւոր սեն-
եակ, բայց եկեղեցւոյ շէնքն հաստատուն մնացած
է... Առաջնայն մէջ կը նստին Վանահայր-Առաջ-
նորդն եւ մի քանի վարդապետք, աստի անպակաս
են այցելութեան, իսկ ընդհակառակն Բ. Ն. ամայութեան
մէջ է, յանձնեալ մի աշխարհական պաշտօնին։
Սոյն երկու վանքերն ունին բազում անդաստանք,
այգիք, դուարք եւ բաւական կենդանիք բեռնա-
բարձ եւ ամ յամէ Աստուածածնայ տօնին Գեր-
մանիկէ եկող բազմաթիւ ուխտաւորք բաւական
դրամական հասոյթ կը մատակարարեն, որոյ՝ եւ
յիշեալ հասոյթից մատակարարութիւնն անվայել ե-
ղանակաւ ասարդիւն մնացած է ցարդ։

Ուխտաւորք՝ վերադարձին կ'այցելեն նաեւ Ս.
Փրկչի վանուց, իսկ Զէյթունէ դաշտներն անպա-
կաս են։

Զէյթունի մէջ երեք գերեզմանատուն կայ Հա-
յոց եւ այլ երկու՝ շուրջ գլանութիւն,



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ԴԼՈՒՆ Ա.

ՄՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԶԷՅԹՈՒՆՅՈՅ

Ի ծնանելն մանկան՝ դայեակն ըստ սովորութեան
կը լուայ զմանուկն եւ կ'աղէ. այս գործողութեան
ատեն մայրը դայեկին «Օղը շոս ֆարէ եռւր պօշու-
զը պընճ նը» (*) — աղը շատ ցանէ՝ որ տղան սինդ,
զօրաւոր լինի — կըսէ: Եթէ տղան առաւօտուն ծնի՝
մինչեւ կէս օր աղի մէջ կը թողուն, կէս օրէն յե-
տոյ աղէն հանելով կը լուան եւ վերստին կ'աղեն:
Դայեակն սոյն գործողութիւնն ութ օր շարունակ
կատարելու համար օրն մի կամ երկու անգամ
մանկան տունն կը յաճախէ. մեկնած սաւառն իրեն
նուէր կը արտին փաստեղ, բնկոյզ, չամիչ, ցոր-
եան, կորկոտ եւ այլն, զորս մէջքը կամ գոգը կը
տեղաւորէ:

Սկսեալ յօրէն ծննդեան՝ մինչեւ մկրտութեան օրն
աղգականք եւ դրացիք կ'այցելեն, հետերնին իբր
ընծայ հալիուսոյ (օսլայէ եւ սուփէ շինեալ քաղց-
րեղէն մ'է), իսկ մկրտութենէն յետոյ որիցէ թանձ-
րապուր, ոմանք ձաւարով լցուն միս ընդ օրս եւ
մի քսան զուռուշնոց սսկի, կամ մի չապիկ եւ կամ

(*) Եթէ մէկը անպատեհ խափ՝ «անըր կօ խուր» եւ Սէ՝ «պե-
պէր ծնօծ վօխրիդ օղը ֆիջ ֆարիւ հ» կ'ըսեն:

կտաւեայ մի գլխարկ տանելով ըստ կարողութեան :

Զինի յուր աւուրց՝ մանկան մկրտութեան համար լուր կը տրուի քահանային եւ դայեակին տուեալ զմանուկն կ'երթայ եկեղեցւոյ մի անկիւն կ'սպասէ , տղայ մ'ալ աման մի ջուր կը տանի : Ի դալտեան կնքաճօր՝ դայեակն մերկացնելով զնորածինն կնքաճօր գիրկը կուտայ , զոր կը տանի աւազանին ընդ առաջ եւ քահանայն կը մկրտէ ըստ օրինի : Ոմանք յետ աւարտման արարողութեան մկրտել կուտան եւ ոմանք միջեւ , եթէ հացկերոյթ սխտի տայ՝ արարողութեան միջեւ , եթէ ոչ՝ յետոյ : Կանայք կը պատուիրեն դայեակին սակաւ ինչ ետ բերել 'ի ջրոյն , տանողին ալ ետին չ'դառնալ , եթէ նայի՝ մանկան աչքերն շիւ կըլլայ կըսեն : Կնքաճայրն եկեղեցի մտած ատեն պարտի ընդ իւր ունենալ մի կանգուն դուքնու (կարմրագոյն կերպաս մ'է , յորմէ Ասիացիք իւրեանց ընտիր հագուստն կը պատրաստեն) եւ կամ երկու կանգնաչափ տպածոյ , զորս կնքաճայրն առնլու պարտաւոր է եւ զորս կոնկուդ կանուանեն՝ կը ձգէ երախային վերայ . կուենայ նաեւ բամպակէ պատրոյկ մը եւ մի թէլ մետաքս (նարօտ) որովք՝ մեղրամամէ պատրաստեալ խաշն մանկան վիզն կը կախեն :

Կնքաճայրն այս առթիւ կուտայ քահանային մի դահեկան կամ պակաս , քսան փարայ եկեղեցւոյ , տան կամ քսան փարայ ալ դայեակին :

Յետ մկրտութեան , մանուկը կնքաճօր գիրկն եւ երկու ձեռքն մի մի մոմ տալով՝ քահանային եւ տիրացուն առաջնորդութեամբ՝ որք « Լոյս ի լուսոյ » շարականն երգելով կ'առաջնորդեն ի տուն . ան-

դանօր մանկան մայրն օրօրոցին քով նստած սղա-
սողական դրից մէջ կը գտնուի (Զէյթունցի կա-
նանց յետ ծննդարեւութեան պահուց եւ զգուշա-
լի օրերն երեք կամ չորս են առ առաւելն) եւ յոր-
ժամ կնքահայրը զմանուկն օրօրոցին մէջ կը դնէ՝
նորա սաքերը կը համբուրէ ։

Եթէ երախայի ծնողքն կարող են՝ մի այժ կը
մատաղեն եւ կերակուրներ կը պատրաստեն , յոր
կը հրաւիրուին քահանայք , տիրացուք , աղաւանք ,
դքայիք եւ կարօտեալք ։ Նախ քան զսեղանն՝ ման-
կան հայրը (*) քահանայէն սկսեալ բոլոր բազմա-
կանաց մէկ մէկ օղի կամ գինի կը բաժանէ որք՝
«Ասրո՞ զսլօկիդ մնացալոն եմե , ըշնեմեալիւր
նը» ըսելով կը բարեմաղթեն ։

Եթէ արու լինի ծնեալն՝ ծնողքն զուարթագէտ
կը լինի եւ սեղանն առատ , խիկ եթէ աղջիկ՝ նուազ
կամ երբէք , մինչ խիկ բազմականք կը մխթարեն
զծնողսն « մի տրտմիք , Աստուած ստեղծած է , չէ՞
մի որ աղջիկ զաւակն զմեզ տանուտէր կընէ » քա-
հանայն ալ՝ « Մկրտեալն գէշ չըլլար , բաւական է
որ տունը միւսոն մանայ » ըսելով ։

Զկնի սեղանին « Անեղանելի բնութիւն » շարա-
կանն կըսեն եւ հրաւիրելոց խրաքանչիւրն «Աս-
րո՞ մնացալոն եմե , Ասրո՞ խայրոյու եմե , Աս-
րո՞ վերցընե » ըսելով կը մեկնին ։

Կնքահօր մեկնած ատեն մանկան մայրը թաշկի-
նակ մ'եւ ծալ մը փաստեղ կը նուիրէ , եթէ եղա-

(*) Գանայք սովորաբար յետոյ և միշտ առանձինն կը հաշնի , ի-
րենց տունն անդամ ։

նակն ամառ լինի՝ հետն ալ ծաղկեփունջ մը :

Եթէ առաջին անգամ լինի երկու ընտանեաց մէջ կնքաՀայրութեան Հաստատութիւնն՝ մանկան մայրն եւ կնքաՀայր իրարու հետ ցմահ շէն խօսիր եւ կինն կը պահուի կնքաՀօր տեսութենէն :

Դայեկին տունէն մեկնած ատեն երկու կամ երեք քոռ ցորեան, գլխոյ ծածկոյթ մը եւայլն կ'ուտան. այս է դայեկին վարձքը սովորաբար :

Մանուկն մինչ ութ օր միւռոնով մնալէ յետոյ՝ դայեկին կուգայ վերստին եւ զայն կը լուայ. լուալու ամանին մէջ մանկան մայրը եւ ընտանեաց միւս անդամներէն կամեցողք դրամ (10—20 փութայ) կը ձգեն որ դայեկին կը վերաբերի :

Մայրն մինչեւ քառասուն օր պարտի արեգակ չ'տեսնել, եթէ դիպուածով սրահի մի ծակէն ներս արեգական լոյս մտնէ՝ կը գոցէ զայն եւ միայն արեւամտէն զինի դուրս կելլէ :

Քառասուն օրէն ետքը մայրն գրկելով զիւր մանուկն եկեղեցի կերթայ եւ քահանայն քառասունքէն կը հանէ զայն ըստ օրինի, որոյ մի դահեկան կուտայ : Դարձեալ, առաջին Տեառնընդառաջի տօնին ընկուզի հետ խառն մաս մը չամիչ մանկան ողին կը կապէ ու եկեղեցի կը տանի, կամ ուրիշի հետ կը գրկէ, զոր գիրկն առնելով քահանայն կ'օրհնէ, չամիչն եւ ընկուզն ալ իւր եւ տիրացուներուն մէջ կը բաժանէ :

Աւագ տօնի օրեր մօր կողմանէ առ կնքաՀայրն ընծաներ կը գրկուին, որք կը բաղկանան մի զոյգ արծաթեայ ճարմանդէ, կամ մի շապկէ, կամ մի թաշկինակէ եւ կամ աման մը որիցի թանձրապուրէ :

Այս ընծայատուութիւնն բաղում տարիներ կը
շարունակուի :

ԳԼՈՒԽ Բ.

ԱՆՈՒԱՆՔ ԱՐԱՆՑ

Գուգուր, Գէօրէգիւր	Գրիգոր
Արուտուր, Ասպրատուր, Ասատուր	
Աստուր, Պուտուր, Արիլէ	Աստուածատուր
Սարգէս, Գադաս	Սարգիս
Ուհաննէս, Վանէս, Ուհօն, Հանէս	Յովհաննէս
Արթըն	Յարութիւն
Թիւրիւս	Թորոս
Ակիւր	Յակոր
Խեչիւր	Խաչատուր
Գէհիւրք, Գիւգիւր	Գէորգ
Նազիկ, Նազօր	Նազարէթ
Փանիւս	Ստեփան
Աւաիք	Աւետիս
Մինոց, Մացոկ	Մնացական
Միքէլ	Միքայէլ
Գէալիւց	Գալուստ
Ղազօր, Հազօր	Ղազարոս
Թէադէարիւս (*).....	Թադէոս

(*) Պէտք էր ըսուիլ «Թէադէայիւս» որ յառաջ եկած է առողա-
նութեան և հնչմանց խանդարմանէ, որոյ պատճառն յայտնեցիներ,
այսպէս նաեւ բազումս ի շարունակութեան:

Մէտթէարիւս , Մաթիւս
Սիմիւն
Մանկէ , Մանկիկ , Մանկիչ
Մարտիրիւս , Մատուս

Մատթէոս
Սիմոն
Մանուկ
Մարտիրոս

Կ Ա Ն Ա Ն Յ

Ջարմօն
Գարանէ
Շուշոն
Դէշիսօն
Իսկի
Մարեօմ , Մայրիկ
Սարօ , Սարիկ
Վարդէ , Վարդիկ
Մարգրիտ , Մարգրտիկ
Հեղնի , Հեղնիկ
Ձումրօթ
Ճարդօր
Հուփիկ , Հիփիկ , Հիփիս
Թամօմ
Ղուցծիկ
Անաղօն
Ասանէթ
Ձօհալ
Յաթըն
Եթեր
Էօնէօփիւր , Օլիօփի

Ջարուհի
Գայիանէ
Շուշան
Դշխոյ
Իսկուհի
Մարիամ
Սառա
Վարդուհի
Մարգարիտ
Հեղինէ
Ձմրուխտ
Ջարդար
Հսիփսիմէ
Թամամ (անուն
[Տաճկուհեաց)

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱԳՈՒՍՏՔ

ՏԱՐԱԶ ԶԳԵՍՏՈՒՅ

Թէ արեւկան եւ թէ իգական սեռէ մանուկներու ՚ի խատաշունջ ձմերան եւս վարտիք չեն հագցներ բնաւ եւ մինչեւ 7—8 տարեկան հասակին՝ դանազան տեղերէ բոժոժ եւ ժժմակկեղեւք կամ արծաթազօծեալ արծուի մազիլներ կը կախեն վրանին իբր զարդ :

ԱՂԶԿԱՆՅ

Սոցա հագուստն է Գերմանիկի երվներանգ՝ (ալաւնա) կտաւէ մի վարտիք եւ տեղական սպիտակ կտաւէ մինչեւ սրունքներն երկար մի շապիկ, որոյ թեւերուն ծայրերն եռանկիւնաձեւ կէս մեթր երկընցած լինելով՝ մինչեւ արմուկն սօթտած ատեն՝ զայնս վրան կապելով կը պնդեն եւ թեւերն մինչեւ արմուկն բաց կը չրջին ամառ եւ ձմեռ : Շապկին վրայէն կը հագնին Ասիական մի սլարեզօտ, զոր տեղացիք «կիւֆ» կանուանեն եւ մէջքն ալ դօտի(*) մը կը կապեն : Պարեզօտն, յառաջակողմն երկու խիստ նեղ եւ մի յետսակողմն սակաւ ինչ լայն՝ երեք մասերէ շինեալ է, որոյ իւրաքանչիւրի կո-

(*) 12—13 տարեկան աղջկունք որք հարսնցու կը համարուին 3 կանգունէ դօտի կը կապեն, իսկ կանայք 6 :

ղերէն եռանկիւնաձեւ մասեր կտրած լինելով՝ նոցա տեղերն բաց մնացած է. յառաջոյ մասերէն միոյն տոնոյ ծայրն մի ճարմանդ կայ եւ միւսոյն՝ ճարմանդակալ, զորս դէպի ետեւ մէջքին վերայ բուրեւով կը կոճակեն. այս ձեւով սլարեգօտւոյն միայն ետեւի մասը ամբողջապէս կերեւայ եւ յառաջակողմն մինչեւ սրունքներն երկայն չափին, յետոյ փորին վերայ տալածոյ կամ ներկեալ կտաւէ մի առիգած կը կապեն որ չափին միայն յառաջակողմն կը գոցէ եւ ոչ ամբողջապէս կողերն ի վայր մասերն. թէ չափին եւ թէ պարեգօտւոյն կուրծքն բաց է:

Գլխոյ մազն միայն լուացքի օրեր կը սանտրեն, որ տեղի կունենայ 2—3 շաբաթն միանգամ, զոր լուալէ յետոյ կը հինայեն ու խիտ բարակ, մինչեւ 25 ճիւղերու բաժանելով կը հիւսեն եւ ապա իրր դրոյսք ծայրերն ի վայր այժեայ ծոպաւոր ժապաւէններ՝ կախեն, զորս «ծամուկ» կ'անուանեն. այս ձեւով՝ ի հեռաստանէ տեսնող մը, մազերն մինչ ի կրկունս երկայն կը կարծէ. սորա նման երեք մատ լայնութեամբ ժապաւէն մ'եւս գօտւոյն վերայէն կը կապեն՝ որոյ ծայրերն նոյնպէս ծոպեր կան:

Գլուխնին կը դնեն արուաց գտակ (փկս) որոյ նախեզրը 20 զուրուչնոց ոսկիներ կամ բենէզներ (մանկիր) կտրած են, դադաթն ալ Սուլթան Մահմուտի 5 եւ 6 զուրուչնոց եւ այլ սոցա նման դրամներ, մէջտեղերն կապոյտ բիւրեղէնիկներ, եւլն. իսկ սովորական ծոպատեղն 4—5 կարգ խիտ առ խիտ արծաթեայ մէկ փարանոցներ շարած են զոր «Սա-

րախում » կ'անուանեն, ոմանք եւս դադաթան գրամոց տեղն արծաթեայ դադաթ մը :

Ականջնին կը կախեն իրր գինդ արոյրէ օղակի վերայ հաստատեալ 20 զուրուշնոց ոսկի կամ կեղծ, որք ստորին արծաթեայ շղթայով մը իրար միացած են :

Ձեռքերնին եւ ոտքերնին կը հինայեն եւ ընդհանրապէս բոկոտն կը չըջին :

Աղջկանց ոմանք՝ ձմեռն կարճ թեւերով չուխայէ մի ամլան (սալքա) կը հագնին, որոյ թեւոց ծայրերուն եւ ուսին վերայ տեղական ճաշակով զարդեր կան. գլխարկի վրայէն ալ երկու հատ ծաղկեայ շղարչ (կազմա) կը կապեն շուրջանակի :

Իւրաքանչիւր աղջիկ գօտիէն վար արոյրէ շղթայով կախուած զմեղիաձեւ փոքր դանակ մ'ունի որ եւ է բան կտրելու համար :

Աղջկունք՝ որ եւ է հասակի մէջ բացերես կը չըջին մինչեւ ամուսնութիւն, թէեւ խօսեցեալ լինին :

Կ Ա Ն Ա Ն Յ

Կանայք եւս սպիտակ կամ ներկեալ թանձր կըտաւէ՝ կուրծքն բաց՝ եւ մինչեւ սրունքներն երկար մի շապիկ կը հագնին եւ մի վարտիկ Գերմանիկի երփներանգ կտաւէ. շապկին վրայէն ալ աղջկանց ձեւով միւսնոյն կտաւեղէններէ մի սլարեգօտ, որոյ եղեքքն երկու մատ լայնութեամբ դուռնու կամ որ եւ իցէ տպածոյ կտրելով զարդարած են. սոյն սլարեգօտն աղջկանց պէս բոլորելով կոճակելէ եւ յառաջակողմն առիգածն կապելէ յե-

տոյ՝ մէջքերնին կը կապեն 6 կանգուն Գերմանիկ-
եայ կտաւէ գօտի մը եւ վրայէն ծայրերն ծոփերով
ժապաւէնն. պարեգօտւոյն կուրծքի երկու, ինչ-
պէս նաեւ թեւոց եղերքն կարմրագոյն մետաքս-
եայ ժապաւէններով զարդարեալ են մինչեւ 6 մատ
լայնութեամբ, որոյ պարեգօտէն աւելի դրամ կը
վառնեն եւ որք՝ թեւերնին ներսէն սօթտած ըլ-
լալնուն համար՝ ամբողջապէս կ'երեւան: Ի ձմերան
ոմանք կը հագնին ներկեալ կտաւէ, եւ ոմանք չու-
խայէ մի ամզան:

Զէյթունցի կանանց ընտրելագոյն հագուստն է
դուքնուն:

Շարժական զարդերն են արծաթեայ չղթայի վե-
րայ հատտատեալ 4—5 կարգ սրածայր նոյն մե-
տաղեայ գնտակներ, իւրեանց ստորաբաժանմամբք
բազում 6 եւ 5 զուրուչնոցէ եւ արծաթ մեծ իւրեանց
քառորդէ բաղկացեալ խառն դրամախուս մը, մէջ-
տեղն արծաթեայ մի այլ մեծագոյն զարդով զոր
« մաշալլահ » կ'անուանեն:

Հարուստներէն ոմանք թէ՛ իւրանջաց եւ ի թի-
կանց՝ եւ թէ՛ յաջ եւ յահեակ կողից իւրեանց կը
կախեն սմին նման զարդեր, որոց ամբողջն կը կշռէ
մինչեւ 2 քաշ, իսկ միջնակարգք, որք միայն ի վե-
րայ լանջաց կը կախեն՝ $\frac{1}{2}$ —1 քաշ, բաց յայտցանէ
չուրջն արծաթեայ չղթայներէ մեծ իւրեանց մէկ զու-
րուչնոցներ կախուած հմայեակ մ'ալ ունին զորս
կողերնուն վերայ կը ղետեղեն. կը դնեն նաեւ ա-
սորանջան ի թեւս, յորոց մին 50—50 տրամ կը
կշռէ, բայց ոչ գինդ յահանջս, զորմէ պիտի խօսիմք:

Սկսիմք այժմ գլխոյ լաթերու նկարագրութեան:

Նախ՝ կէս կանգունէ աւելի քառակուսաշափ սպիտակ կտաւ կ'առնուն, զոր «վզնէօց» կ'անուանեն եւ գլխոյ վերայ կը դնեն, անկիւններն առջին, ետին եւ երկու կողմերն բերելով. յետոյ 6 կանգուն եւրոպական եւ կամ 8 կանգուն(*) տեղական կտաւն զոր «ճակափ» կը կոչեն՝ եռանկեան վերածելով եւ կարելով առաջնոյն վերայ՝ կը դնեն, որոյ երկու ծայերն շրթան (կանանց ծնօտի երեւալն յոյժ մեծ ամօթ կը համարին) անմիջապէս ներքեւէն հակառակ դէպ ի սնարն բոլորելով անդ կը կապեն, երրորդ ծայրն ալ իբր ծոս մինչեւ մէջքն ետեւէն կը կախուի. ապա առաջին կտաւի անկիւններն դէպ ի յետ երկրորդին վերայ կ'առնուն զգուշութեամբ՝ որ մազերն չ'երեւայ. զկնի երկրորդին՝ ուրիշ 5 կանգուն ներկեալ կտաւ մը եւ յետոյ 10—20 (զիրար այտանելու, գրգռելու եւ այլ սոյնսպիտի պարագայից մէջ բազդատութեան կը մօտենն) հատ երկուքական կանգնոց զանազան գոյն տպածոյներ ըստ առաջնոց գլուխնին կը կապեն խնամով եւ զգուշութեամբ, յորոց իւրաքանչիւրն ճակատակողմն սակաւ ինչ ուղղութենէ կը խտտորեն որպէս զի՝ լաշակն եթէ ի վեր առնուն երփն առ երփն երեւի. այսու՝ ի ճակատն փեղոյրի նման յառաջակողմ կը դր մ'ալ կը գոյանայ, որոյ ներքնակողմն 20 զուրուշնոց ոսկիներ եւ կամ բենէդներ կը շարեն. վերջապէս, պարանոցն կտաւոց առատութենէն բոլորովին գոցուելով՝ ծնօտին կը

(*) Այս ամենուն քանակութիւնն որոշուած եւ օրինաց կարգ անցած է իրենց մէջ :

հաւասարի եւ գլուխն գնտային մի այլ մեծ մարմին կը ձեւանայ ուսերուն վերայ գետեղեալ, զոր չեն կարող շարժել: Իսկ յորժամ իւրեանց երեսն բանան՝ նոցա միայն աչքերն, ռունդն, բերանն եւ յարտասովոր կաշկանդմանէ կտաւոց՝ դուրս ցցուած այտերն միայն կերեւան, եւ եթէ զայնս իսկ մերկանան՝ ի ճնշմանէ նոցա կը ներկայանայ պարանոցն կէս առ կէս բարակցած, ծնօտն ներս քաշուած եւ այտերն դուրս ցցուած մի այլանդակ դէմք: Յետ ամենայն նկարագրեալ կտաւոց ոյր սակս սլարտաւորեալ են գինդ չ'կախել՝ երեսն ի վայր կը ձգեն քօղն, որ Ասիական մի մեծ ծաղկանկար շղարչէ, հետեւաբար, մի կնոջ գլխոյ զանազան լաթերուն քանակութիւնն կը լինի 40—52 ԿԼԵՆՅՈՒՆ. սոյն վերջինն բոլորովին երեսն կը գոցէ զոր բռնել կուտան ոմանք գլխոյ վերայ արծաթեայ մի շղթայով, որ զարդ եւս կարէ նկատիլ:

Կանայք երեսնին չեն բանար իրենցմէ մեծ կանանց եւ ոչ խօսել ընդ նոսա մանաւանդ կեսուրոջ դէմ, որոյ հետ սլարտին նշանացի խօսել ի տան:

Դարձեալ, կանայք առհասարակ բացի առիգածէն՝ գլխոյ լաթերուն, ինչպէս նաեւ հագուստներուն եւ ո՛չ մին հանելով կը պառկին, չեն սանտրեր նաեւ գլուխին մինչեւ լուացքի օրն, զոր 2—3 շաբաթն մի անգամ կը կատարեն: Լաթերն առաջին արգելք են գլխոյ մաքրութեան:

Կանայք սալատմբակի առհասարակ յամարան եւ ի ձմերան բոկոտն կը շրջին, դեռահաս հարսունք ի յղուլեան իսկ եւ անլուայ կը պառկին. հարուստներէն ոմանք միայն երբեմն գեղնազոյն մոյկ

եւ երբեմն դեղին կամ կարմիր շմուշկ կը հագնին, խսկ գուլպայն՝ զոր արտաքուստ գնելով հարսունք կը հագնէին միմիայն ամուսնութեան առաջին օրն՝ ի շնորհս Մկացեալ ընկերութեանց բազումք ուսան հիւսել եւ գործածել:

Կանայք ունին գօտիներն ի վայր արոյրէ չղթալով կախեալ զմելիաձեւ փոքր դանակ մ'որով՝ ըստ պարագային միս, սոխ եւ այլն կտրելէ յետոյ մէջքերնին կը խօթեն:

Աղջիկ մը ամուսնութեան օրէն կ'սկսի կրել գըլ՝ խոյ լաթերն:

Պառաւունք լաչակով երեսնին չեն գոցեր, այլ միայն բերաննին:

Կանանց հագուստն ամառ եւ ձմեռ անփոփոխ է, հարուստ կանայք ունեք ձմեռն մի ամլան կը հագնին:

Երէց կանայք մէջքն ի վայր մինչ ի կրունկն չորս մատ լայնութեամբ սպիտակ լաթ մը կը կախեն, որ կորուցէ զայնս ի միւսոց:

Իգական սեռը արտաքոյ տան հագնելու մարնաւոր վերարկու կամ սաւան չ'ունի:

Ա Ր Ա Ն Յ

Արանց հագուստն կը բաղկանայ մի վարտիքէ եւ մի երկար շապկէ, որոյ եզերքն սրունքներն կը գոցեն. սոյն շապկին երկու թեւոց ծայրերն եռանկիւնաձեւ ²/₃ մեթր լայնցած է եւ վերջի անկիւններն ալ մէկ մէկ փոքր ծոպեր կան, զոր հագնելէ զկնի իրար կապելով գլխոյ ետին սընա-

րին վերայ կը բեռնաւորեն, որով տիգֆ իրր կախեալք ի սնարից արմուկներէ վեր բաց կը մնան: Շապկին վրայէն կը հագնին Ասիական մի տպածոյ պարեգօտ, որոյ առաջոյ երկու քղանցքն հակառակ դրիւք դէպի ետեւ՝ մէջքերնին կապած գօտւոյն մէջ կը մխեն, յառաջակողման բացն ալ կը դոցէ մասամբ շապկին երկայնութիւնն: Պարեգօտւոյ վրայէն կը հագնին ոմանք մի քղամիդ եւ ոմանք չուխայէ մի ամղան, իսկ ձմեռն թեւերն մինչեւ արմուկներն կարճ գունաւոր մի թանձրագոյն ասուեղէն (ասյու) զոր Գերմանիկցիք կը դործեն եւ որոյ եզերքն մինչեւ ազդրերն կերկարի, անդրա՝ վարտիքի վրայէն ալ ասուեայ մի նեղ վարտիք:

Յամարան արանց $25^{\circ}/_{10}$ ը եւ տղայոց $50^{\circ}/_{10}$ ը բոկոտն կը շրջին, իսկ ձմեռն վերջնոց $20^{\circ}/_{10}$:

Գլուխնին կը դնեն իրարու վերայ մինչ հինգ հատ սովորական կարմրագոյն գտակն (փէս) եւ 'ի ներքոյ մի կամ երկու սպիտակ (քախեայ), վերան ալ կը կապեն մի գօտի Տրապօլոյ (Թարապօլուս գուշաղը) կամ զանազան գունով 3—6 թաշկինակ: Կան նաեւ 2 եւ 1 գտակ դնողք, յորոց բազումք եւս վրայէն ծաղկանկար շղարշ կամ թաշկինակ կապած են:

Կօշիկնին որ ընդհանրապէս կարմրագոյն է՝ «փօսսալ» կանուանեն, որոյ յառաջակողման ծայրն սրունից մօտ կը հասնի եւ յետստիկողմն մի քիչ վայր, եւ ըստ որում յառաջոյ եւ յետնոյ մասերնբաժանեալ են մինչեւ ուղքներն՝ հագնելէ զկնի կը սեղմեն զայնս կաշեայ կապերով, որք առաջուց վրան անցուած են. «փօսսալ» ին երկու կողմն ալ տեղա-

կան ճաշակաւ զարդեր կան, իսկ ներքանն է հարթ:

Գներն են, չափահասներունն 16—22 դահեկան: Յամարան փոխանակ եղի մորթի՝ բնական ձեւով խոզի (*) մորթ կը կարեն տակն, որ շատ կը դիմանայ. ձմերան կոշիկն է Գերմանիկի լայն մոյկերն որոց յառաջակողմն մէկ մէկ երկայն ծոպ կայ,

ձանապարհորդութեանց ատեն արեխ եւս կը հագնին:

Բազում երիտասարդաց գլխարկի ծոպերն կը կշռեն 40—100 արամ եւ երկայնութիւնն կը հասանի մինչեւ ուսերն եւ ի բէջս, ոմանք՝ ծոպակալ տեղն անուածեւ արծաթ մ'են դրած եւ ոմանք յամուրի երիտասարդաց՝ զծոպն արծաթեայ մի երկար կապով են կախած գլխարկէն:

Սովորաբար գլխոյ մաղերն ածիլել կուտան, միայն ի գաղաթան երկար ձար մը թողլով, զոր ոմանք մի քանի մասանց կը բաժանեն եւ կը հիւսեն: Տղայոց եւ չափահասից 50⁰/₀ ն գլուխնին հինայ կը դնեն:

Բազումք եւս յամարան անվարտիք կը շրջին, որոց պէտքն մասամբ կը լրացնէ չապիկն:

Արական սեռը մի ականջէն արծաթէ կամարոյրէ օղակ կը կախէ:

Ընդհանրապէս երկու սեռն ալ մէկ մէկ ձեռք ձեւմակեղէն միայն ունին եւ մէկ մէկ ձեռք ալ վերարկու:

(*) Խոզի միսն ու մորթն կը բերեն Զուգուր օլա կոչուած տեղէն որ երեք օր ճանապարհաւ հեռի է ի Զէյթունէ:

ԳԼՈՒԽ Գ.

ՏՆԱԿԱՆ ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԿԵԱՆՔ

Տանց կարասիքն են այծեայք, կանեայք, խոր-
դեղէնք, պաստառք, անկողին եւ սղնձեղէնք, որք
առատ են քան զայլ կարասիս. մեծագոյն տեղ կը
գրաւեն նաեւ գինւոյ եւ օղւոյ կարասներն:

Տան մի կողմն գրուած է մեծ ամբարն յոր կը
սլաճեն իւրեանց ցորեանն եւ ալիւրն, իւղն ու պա-
նիրն եւայլն: Գլխաւոր ճրագնին մախրն է, զոր
քուչի մէջ կը վառեն փայտի հետ խառն եւ իրր
լապտեր կը գործածեն, կը վառեն նաեւ քարիւղ:

Կինն « Շէալ » (քօղ — երեսի ծածկոց) 'ի գլուխ
կը շրջի տան մէջ երեսարաց իւր ամուսնոյն յառաջ,
բայց՝ միասին չեն ճաշեր:

Տան մէջ ամուսնացեալ մի քանի եղբայրք իւր-
եանց ծնողաց, ամուրի եղբարց եւ քերց հետ
խառն մի սրահի վերայ կը պառկին, իսկ ամուսն 'ի
վերայ տանեաց:

Հիւր մը ընդունած ատեննին կինն կը մեկուսա-
նայ ամբարին ետեւ կամ քովի տունն կերթայ:

Բուռ մ'աւել տան մաքրութեան կը ծառայէ:

Պարտէզ ունեցողներն 'ի սկզբան Մայիս ամսոյ
կը մեկնին իւրեանց պարտէզն, յորս տնակներ ու-
նին, ինչպէս նաեւ այգիներու մէջ, ուր խաղողն
հասնելէ յառաջ կը փութան հսկելու համար. կը
վերադառնան Հոկտեմբերի վերջ:

Գիւղական կենաց յատուկ անմաքրութիւն կայ իրենց մէջ:

Պանդխտանալու հետամուտ չեն, եւ սակաւութիւ են որք գիպուածով կամ այլ նպատակաւ պանդխտած են:

ԳԼՈՒԽ Ե.

Ո Ւ Տ Ե Ս Տ Ք

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ ԶԱՄՁԻ, ՔԱՂՅՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՅԼ ՈՒՏԵԼԵԱՅ

(Զոյթունցոց շնորհաւ)

Զամբչ կենին Սիւսողուրը (*), Միակալըն, Թէա-գէալիւրը, Պէհիցնին, Ճիրմոկ կոսլը, Դըրըգըրցըն:

Էռէաջ կուրթոն Միակալըն ու Պէհիցնին կուրձ-գին. ըձգիւոյ համոր ծաղկեջոր կենին, միջնէա ձէթ կուռոն, խէաղնէա միջը կուռոն ֆօթիւն էառ-նիլէօվ. դընթիկ մը կինոյ նը՝ կու հանին ու կու տանըն կու փըռին. ամին խէաղ նալոյ՝ (լեցնեւու) ձէթը կուռոն, չիւր սէարալի՝ ինտէաս կենին. 5—6 աւուրը սոնդրոյ կուրթոն էաս կու հաւքին. հա-սո էա Սիւսողուրը, Թէագէալիւրը, Դըրըգըրցըն Ճիրմոկ կոսլը կուրձգին, 6—7 աւուրը սոնդրոյ էա կուրթոն կու հաւքին:

Ղուրէաշ (անուռն խաղողոյ) խէաղնէա ընծանըն մըջը կուռոն, խէաղին վիրէանէա խիւղ կու քարին

(*) Անուանք և տեսակք խաղողաց, տես յերկրագործութեան:

մէարք տէյի կու թըրըտին, ջորը կիւլէ, կու քըռա-
ցընին՝ ֆեֆլիւմեան կառնուն ու պըաըկ ընծանը մը
միջ կունոն, ընծանըն միջը էան մէարքը մուրոտ
կունը ու վուրցուվոն ջորնէա կունոն դէօրդիւշիւ-
նին միջը. մէարքը մուհեմեան է, եկեաւ չու քա-
րին նը օռուպը թոթու կունը, էօնիւր համոր կու
քարին էան մէարք ասուոծ խիւղը, կու քըռացը-
նին ու կենին օռուպ. էաս օռուպը կիս խիինը՝
չըրցըմոն թուղ կունցնոն, կու վըլանոն միջը կու-
նոն ու կիս խիուէօղ օռուպը թիւմ օռուպ նը նը՝
կու ըջըցընին. էօսիւր կիսին ԹԸԶԷԹՎ ԼԷԶԷԱԿ:

Նիւրիւկէն կիս խիուէօղ ըռալըն միջը սինկիվիը
կու մանտրին, ու կիս խիուէօղ օռուպը թիւմ
նը նը՝ կու հանին միջէն. էօսիւր էա կիսին ՍԻՆ-
ԿԻՎԻԼԷ ԼԷԶԷԱԿ:

Նիւրիւկէն ջոր կունոն կենին կիս օռուպ ու դըդ-
մէ ըչրաղէ չիւրմիւրը կու էօցընին, կու վըլանըն,
կու փըռին բանկոն մը վիրոյ. դընթըկ մը քէչուը
նը՝ կունոն կիս ըռալըն միջը. օռուպը թիւմ խիի-
նը՝ կու ըջըցընին. էօսիւր կիսին ԶԻԻՐՄԻԻՐԸ
ԼԷԶԷԱԿ:

Բիւլիւ ըչրաղըն կու մանտրին, գիշիր մը կիրը,
էլտիվ կու վոլոն իրիք, չիւրս նախըլ՝ կունոն կիս
ըռալըն միջը, խիինը կու ըջըցընին. էօսիւր կիսին
ԸՇԲԱՂԸ ԼԷԶԷԱԿ:

Սուճուխ էնիւյ համոր էօէաջ հազըրմոն սու-

Հուխ կունցնոն ուր՝ ունկուղըն պըճեղը դիրձանը
վիրոյ կու շարին. խէղին ջըրըն միջը նիշեան կու
լըճին, կունոն, կու կըսցընին ու հափուսոյ կիւմի նը
նը՝ հազրամոն սուհուխը միջը կու թաթխին ուր հէ-
փիսէան վիրէան կու պըլըվը, կու ջըրցընին. էօ-
սիւր կիսին Սուհուխ:

Իւղիւրդ խէղին ջորը կունոն պըղընծըն միջը,
ֆեփիւմեան կ'առնուն՝ հապոյ կենին հափուսոյ, կու
տանըն կու փըռին կըտուը վիրոյ, շիրնոյ նը՝ կը
տաւըն վըրցըվոն կու հանին. էօսիւր կիսին Ջոն-
Դոն:

Թիւմ ըսպըն միջը Պալխազը (անուն խաղողոյ)
խէաղը կու հատին կունոն միջը, չէ՛ թը էաս իրկու
քիւլուրը մինէավիւր, հասը՝ քանը քիւլուր պընտ
խէաղ կոյ նը՝ կու հատին, կունոն միջը. ղընթիկմէա
կու քըռացընին հապո կու ըջըցընին. էօսիւր կի-
սին Թեյիւմոյ (քիլիւմե):

Պողլուր էնիւյ համոր՝ ցիրինը կու մաղին, կու
վոլոն՝ կունոն պըղընծը կու քըռացընին. ու ըորնտ
ցիրինը խուշուրնոյ՝ կու հանին. ու չը հանոժէն է-
ռէաջ դըրացնիրուէն ճըլիրը (չուլերը) կու հաւքին
ու ամինիրը կու փոխն ու խէշուէօղ ցիրինը ճըլիրուէն
վիրէան նէօրօր կու փոխն. շիրնոնը՝ կու հաւքին,
կու մաղին ու ջաղօրցքը կու տանըն կ'աղոն. էաս
աղալոյ համոր իզոտ պըղլուրը ջաղօրցք կոյ, ուր
սըրին կինոն հեծըցընին նը՝ տուզոնը բոնձրը կե-
նին. կուրթոն կ'աղոն ու կը ցըրմըղին (ցիր մաղեւ)

խիւշիւրը կու հանին. դոքմէա (կրկին) կազոն է-
աս ջըրմազածնըն, կու էլիբմազին ու միջը սիւմիւն-
րը ու պողլուրէլերը կու հանին ու պողլուրնէա
կու բերին տոնը ամպոյրը կունոն. ու էաս սիւմիւնրը
ու պողլուրէլերը հանիւոյ համոր՝ էլիբ մոզը կեռ
կու բընին ու սիւմիւնրը սոք էօրը իռլիոյ կենին
ու պողլուրէլերնէա էլիբէն հիարը կ'ազոն կուտին:

ԷԱՂՅԻԾԻԾԻԾՊ էնիւոյ համոր՝ ծիծոծ ցիրինը ու
լուսպը պըղլուրն ջազորցքը կազոն, իրկուքնէա
պարապոր կու խառընտին, միջնէա իիւոյ մը իրկուք
սիսեռ կունոն, էօսիւր կիսին ԷԱՂՅԻԾԻԾԻԾՊ:

Թարխանոյ էնիւոյ համոր ցիրինը կու սառտին-
ու սառտա պաշին ջազորցքը կու տանը ծիծիւոյ
համոր. ծիծիւոյ համոր կունոն ջազոցքը ջարտիւր.
ու 15 իիւոյ նը նը՝ 6 կօլէկակ ջօր կու քարին. էաս
քկվուրը հիստայ կենին, 5 իիւին 2 կօլէկակ, մերու
(մերու) ցիրինին կուրոյ հիստայ կենին կու քարին
ու դընգէն նիրքիւր կունոն՝ կու ծիծին. ծիծուր
նը՝ կու բիրին թիփը կու հանին, կու վոլոն, կու
ջըրցընին, տախտոկը կու դընին, կու հընտրին,
կունոն տեղ մը. էօսիւր կիսին ՄԻԾՈԾ ՏԻԲԻՆ:

Թերխանեան սլըտը էնին նը՝ էնիմէ 5—6 էօր է-
ռէաջ ջուպուներն (հոգուին) կու քեմպիլին (պատ-
ուիրեւ) թը՝ ինծէ քէնիսոյ խայլու մածուէն հազրէ,
էնէա կու հազրէ. մածուներ իգոնը կունոն սլըդըն-
ծըն միջը, ծիծոծ ցիրինը՝ մածուներն կուրոյ (քանը
իիւոյէ նը քէնիանէա ցիրին) ու կիս քոռոնը՝ օղնէա

(աղն ալ) կու քարին միջը. ջորը քէշուը նը կէածը կու քէշին, նիրքիւը սոյ մը կու քարին էօրքը շերէ տէնի, շկկէն մէա բիրոնը կու դնին. վասարյ մը կինոն նը՝ կու բջրցընին շկկանը ու խառնըշէօվ մը կու խառնըտին, կու հանըն ճիրմոկ բանը մը վիրոյ կունոն. ու պաղի նը՝ շկկանըն միջը կունոն կու շաղին ու միջնէա մածուն կունոն ու ըռընա շաղին նը՝ նիւրիւկէն կունոն ճիրմոկ բանը մը վիրոյ դընթիկ մը քէշուիլոյ համօր. ու քէշուընը՝ կու հանին տինիրը ու ճանկէկ ճանկէկ կենին տաղտկունու (տախտակներու) կարպիտնու (կարպետներու) ու ճիրմոկ բանիրու վիրոյ կու փըռին. էօր մը կինոն նը՝ միկէալ դըհը կու դառցընին. էան դըհնէա դընթիկ մը քէշուը նը՝ կու հաւքին ճանկիկնէն, կու փըշին ու կարպիտնու վիրոյ կու փըռին ու ջիրնոյ նը՝ ամպրըն միջը կունոն:

Թուրշի էնիլոյ համօր պատիւնոնը (soñapku) խիւշիւր կու մանտրին, մանտըրնէա՝ թիւմ կու քարին. կէնէաջ հաւէճըն փիւթը կառնուն, կու բջրցընին, կու վոլոն՝ քացղըն միջը կունոն, սոխտիւր կու անցընին, գուռուսխետիր կու քարին ու շարպոքէա կենին մըջը կունոն, կուտին: Չոմառնէա դսւլլոխ հաւէճը կու խեշին, կու բջրցընին ճիրմոկ տըպրոկէ (տոպրակ) մը միջ կունոն, կու դընին ջորը կոծուն շիրթիլոյ համօր ու էօրմէա աղըն, սէօխտիւրին ու գուռուսխետիրին մըջը կու թուղունու սոնդրոյ քացղըն (քացախ) մըջը կոնուն, շարպոքէա կենին կոնուն միջը, կուտին:

ՈՒՏԸՔ ֆուլդոյ էնիլոյ համար մըսըն փուխը կու հանին, կու ծիծին. ըսընտ ծիծուը նը՝ կու քարին չանախըն միջը, հէավէտէով, էաղէով, ֆօւմիւնէով, ըռահէանէով, սիւխէով, գուռուսխետիրէով կու խառընտին՝ հապո կուենոն պողլուը կու շաղին. ըսընտ շաղուընը՝ էռէաջ կու սապալըխին հում կու բիրին առջիւնուն, սիւնուն (սան) միկ քէովնէա կէնէաչ գուռուսխետիր, պէօք հաւէճ կու դընին. էաս առջէ skyxu հում կուտին(*):

Հապո նախըլմէա օղ քու քարին, կու շաղին՝ կենին կենիփիւն (կայծ եփեաց) կու բիրին կենին վիրէան կիփին, կուտին:

Աստապո (այս skfu—պու skfu) կու գըլըրին, կու բիրին գէրջըրըն միջը կուենոն կիփին. գէրջոր կիսուը (կ'ըսուի) էօնիւր՝ ուր մըսը միջը կու քարին, մըսըն ջորը կու ասուը գէրջոր, էաս հասարակ ՈՒՏԸՔ ֆուլդոյ է:

Քիւմիւնէա (ոմանք) ֆուլդեան էռէաջ կիւմի կու սապալըխին, կենիփից կենին, ֆուլդեանէա գէրջըրը տըստըն միջը կու քարին, կիս նուկի դասորէա էդ. հալը նը՝ կու մանտրին իրկիրիքէա (երկու երեք հատ) սիւխ կուենոն, ջոր էա կու քարին անուխ էա, կու անցընին էաղտիւր. էօսիւր միջը կուենոն գուլոր-

(*) ՁէյԹուցուց ինչպէս նաեւ ամբողջ կիլիկեցուց ընտրեւագոյն կերակուրն այս հում մսէ և ձաւարէ շինեալ ֆօւմիւնէ է որ մեծ ախորժանօք կուտեն:

ման ֆուլդիքան. էօսիւր կու ասուը ԹՈԹՈՒ ֆուլդոյ :

Քիւմիկնէա գէր մըսը տապկին միջը կու աղըն-
ծին, կիս խիէ նը սիւխ կու մանտրին, կուենոն էան
քեւիւրը կիսին ուր՝ մըսըն էդէն սիւխը կու տապ-
կըւը ու էօսիւր կըսուը « միջ » (մէջ) սուկըրոյ
ֆուլդիքան տուքի (տուքա) միջ կիւմի կու բանոն՝
« միջ » ը էօսիւր միջ կուենոն. բիրոննէա կու խըսի-
նին կու դընին գէրջըրըն միջը կիսիէ՝ կուտին :

Պոքը (պահքի) ՄԻՋԼԵԾՎ ֆուլդոյ էնիւոյ համոր՝
Թափցըն մը խսպ կու քարին կու քըռացընին, կի-
փի՝ ու պըղըրըն միջը կուենոն. հապո սիւխ կու
մանտրին կու քըռացընին, կըջըցընին՝ կու քամին.
հապո ըռահոն, գուռուսիտիր, հալէճ, օղ ու
ինկէգէա կու սըղկին՝ էսիր աշայիկէա սիւխըն (սոխ)
միջը կու քարին, կու էճըռին ու ֆուլդիքան շաղիննը՝
միջը կուենըն կուտին :

Քիւմիկնէ ընկուզըն տեղը բիպիկ կենին. ԲԻՊԿԷԾՎ
էնիւոյ համոր կու լըճին՝ սիւխըն հիտը կու քըռա-
ցընին. խիէնը ֆուքքին միջը կուենոն կուտին :

Մածուէն ապուր խիիւոյ համոր՝ էռէաջ ծիծոծ ցիրինը
կուենոն կիսի. խիինը կու ըջըցընին կու սպողըցընին,
հապո կուենոն մածուէնը, միջնէա անուխ կու քա-
րին. էսիւր կիսին ՄԱԾՈՒՆ ԱՊՈՒՐ :

ՏԱԿԱՊՈՒՐ խիիւոյ համոր տօկը ու ալճորը միկ
կու վուոն, կուենոն տըստը կու խիէ (կեփի). խիէ
նը՝ կու անցընին էաղտիւր, քոռոյ ու ջըրըն համը

կըտորը նը՝ կու ըջըցընին . ու պաղէ նը սէօղաթաբ
կու անցընին կուտին :

ԻԻՍՊԻԻՍԻԻՍ (ոսպ եւ սոխ) էնիլոյ համօր սուն-
կուր ու ալճօրը միկ կու քարին , կիա խիէնը՝ սիւ-
խը ու իւսպնէա կուռոն . էսիր խիի նը ղընթիկ մը
թօթու կու անցընին , կու քըռացընին , խիի նը՝ կու
ըջըցընին :

ՋԻԻՐՄԻԻՐ ԱՊՈՒՐ էնիլոյ համօր շինկիրարըն , խի-
յարըն ու դալուըն խըճիպը կու կեղուըն , քաւզոն
(քեւուզ — յուլիս ամիս) կու չըրցընին ու ձոմոռն
կու էօցընին , կու մանտրին ու մըսըն հիտը կու
քարին . խիի նը կու անցընին թօթուըն (թթու) ու
անուխէա կու քարին . էօք մը իլլէ ու ջըրըն հոմը
կըտորը նը՝ կու ըջըցընին կուտին :

Պօք նը նը՝ էվէա կու էօցընին , կու մանտրին
ու աւճըրըն հիտը տըստըն մըջը կու քարին ու
սոնդրոյ իւսպնէա կու քարին պողլուրէա , թօթուըն
կու անցընին ու ըջըցընին նը՝ ինկիզէա կու անցը-
նին կուտին :

Քիւմինէա քաւզոն տուրմոյէա կու բանոն , կու
չըրցընին ու ձոմոռն միջը պողլուրնու մըսնէա կու-
նոն՝ վիրէնըն կիւմի կեւին կուտին :

Սոդանլը խիիլոյ համօր՝ ըրկըւընէ սիսեօր կու
թըջին , թըրջը նը մըսըն հիտը կիւմին . խիի նը՝
սիւխ կու մանտրին կուռոն մըջը , ու սիւխնէա
խիի նը թօթուըն կու անցընին , անուխէա կու քա-
րին կու ըջըցընին կուտին :

ՄԱՏՈՂ, էնիւոյ համար շարոթ իրկուն կու զենին չափը (նոխազ) մը, եւս պախրէ մը. չի զենոժ ի-
 ֆեան իւնչ տէրտէր պատարոգ պըտը էնը նը՝ էան
 տէօրաիւրիւջը խեչը կու տանըն օղ՝ կուտոն ուխնի
 (օրհնեւ) կու բիրին մատուզցըվըն կու կըրցընըն՝/ ք
 ու կը զենին. միրթին (մորթն), ֆեղլեան ու կիս
 լըտըրը դասո՛ր էա մըս իրինց տէօրաիւրիւջը կուտոն,
 իվիլէա կու մանարին ճիֆի ճիֆի (մաս մաս) կենին,
 կիսին ու հիտնէ ցիրին ապուրէա, հէատ պողլուր եւս
 օռուզ ապուրէա կիսին՝ ուխնուսոն (օրհնեալ) օղնէա
 իրկուքըն միջնէ կու քարին: Տանկնամազը (առաւօտ-
 եան եկեղեցւոյ տոնն որ սովորաբար արշալու-
 սոյն կ'սկսի կամ ալ կանուխ) պատարոգէն իլին
 նը՝ խըսըմնիրուն եւս իրինմէ միկը կու ճովոն տէր-
 արատցը, տէրացովիրուն, ու գեղիցոն դոռը կի-
 նէօղ աղքուտնուն էասիլէօվ « ուղղիցէք մատող
 ուտինք »: Պատարոգ էնէօղ տէրտէրը կու մոտ-
 նոյ տոնը էաւտէարէօն մը կու կարդոյ կու տըստը.
 միկ միկ ճիկարոյ կու քարին, միմ միկէա առոխ կու
 խուսցունին, կու բիրին սուֆրեան կուտին. ուտին
 խըլասըն նը՝ աշային կու կալնոն ու սուֆրին [միկը
 մըջը կու թուղուն՝ կիլլին շարակոն կիսին ու պա-
 տարոգ էնէօղ տէրտէրը էաւտէարէօն մ'էա կու
 կարդոյ, կու կալնոն սուֆրեան. կուտոն տէրար
 տցը, տէրացովիրուն փարոյ, ճէ՛ կուրթոն ասիլէօվ
 « Աօքոժ ընդունելի էնէ Հայր Աբրահամոյ մատողը
 կիսի: » Նիւրկէն դոքմէա կու ճովոն չիւրս քէօվը
 կինէօղ աղքըտնըն, դրացնիրը, խըսըմնըն կու
 քարին սուֆրոյ մ'էա:

Քիմիկնեա ուրթոթ իրկոն կենին՝ շարոթ էա կու
 կըրցընին:

ԳԷԱՔԷՅԱ ԱՊՈՒՐ ԻՓԻԼՈՅ ՀԱՄՈՐ ԼԵՈՒՆՔ ԳՈՐԸ ԿՈՒ
ՀԱԼՔԻՆ, ԲԻՆԻՆՔ ԲԻՆՈՒՄ ԿՈՒՄԻՆ, ԲԻՆԻՆՆԷՄ ՄԵՍԸ
ԿԻՐԻՆ, ՈՒ ԳՈՐՆԷՄ ԿՈՒ ՄԱՆԱՐԻՆ ՈՒ ՄԵՍԸՆ ՄԻՋԸ
ԿՈՒՆՈՆ ՈՒ ԿԻՄ ԻՓԻՆԸ՝ ՄԱՐՆԵՅ ԲՈՒԲՈՒ ՄԱՆԳՈՒՆԻԼՈՅ
ԲՈՒԲՈՒ ԿՈՒՆԸ, ՈՒ ԿՈՒ ԸՋԸԳԸՆԻՆ ԿՈՒՄԻՆ:

ՀԵՐԻԱԿ (ԲԵՇԲԵԿ) ԷՆԻԼՈՅ ՀԱՄՈՐ ԿԵՂԻՐԷՆ ՄԵՍԸ ԿՈՒ
ԲԻՐԻՆ ԲԵՄ ԲԻՆՈՒՄ ՄԵՍՄԱՐՆ ՄԻՋԸ ԿՈՒ ՔԱՐԻՆ, ԸՐ-
ԿԸԸՆԷ ՆԻՐ ԿԱՌԿԻԼՈՅ ԲՈՒՄ ԿՈՒ ՔՈՒՈՅ, ԿՈՒ ՀԱ-
ՆԻՆ, ԿՈՒ ՓԵՂԸՐԻՆ. ԷՄՄ ՄԵՍԸՆ ԳԷՐ ՋՈՐԸ ԿՈՒ ՔԱ-
ՄԻՆ ՄԵՍՄԱՆԷՄ ԿՈՒ ՎՈՒՆ. ՆԻՐԿԷՆ ԳԷՐ ՋՈՐԸ ՄԵՍ-
ՄԱՐՆ ՄԻՋԸ ԿՈՒՆՈՆ, ԿՈՒՆՈՆ ՄԵՍՆԷՄ, ՄԻՋԸ ԿՈՒՆՈՆ
ԾԻԾՈԾ ԳԻՐԻՆՆԷՄ, ԸՈՐՆՄ ՔԷՆՈՒՆԸ՝ ՔՈՒՆԸ ԿՈՒ ՄԱ-
ԳԸՆԻՆ ԿԻՒԼԻՆ ԿՈՒ ԿԱՌԿԻՆ: ՏԱՆԿԻՆԱՆԱԳՐ ԿԻՒՆ ՆԸ,
ՄԻՆՈՒՆ ՈՒՐ ԵԿԿԱՐ ԻՓԻՐԷՆԸ՝ ՇԻՐԻՓԸ ձԵՌՎԸՆ ԿԱՌ-
ՆՈՒՆ ԿՈՒ ԲԱՌԸՆՄԻՆ ՈՒ ԿՈՒ ԲԱՌԸՆՄԻՆ, ԷՄՆ ԲԵ-
ՎՈՒՐԸ ՆՄ ԿՈՒ ԲԱՌԸՆՄԻՆ ՈՒՐ՝ ԵԿԿԱՌԸ ՄԵՍՄԱՐՆ
ՄԻՋԸ ԼԷՕՂ ՄԵ ԿՈՒՆԸ. ԷՄՆ ԲԵՎՈՒՐԸ ԳԻՐԻՆԸ ՈՒ ՄԵՍԸ
ՄԻԿ ԿՈՒ ԿԸ ԲԱՆԻՆ ՈՒՐ՝ ԵԿԿԱՐ ՇԻՐԻՓԸ ՄԻՋԸ ԲԵԲԻՆ
ՈՒ ԳԱՐՎԻՐ ԿԱՆԸՆ ՆԸ՝ ՄԵՍՄԱՆԷՄ ՀԻՄԸ ՄԻԿՈՒԸ
ԿԻՒԼԷ. ՀԱՊՈՒ ԿՈՒ ՄԱՆԳԸՆԻՆ ԻՐԻՔ ՆՈՒԿԻ ՊԱՏՈՐ ԷՂ
(ԻՒՂ) ԿՈՒ ԲԱՌԸՆՄԻՆ ԿՈՒՆՈՆ ՄԻՆԻՔԸ, ՈՒ ՆՈՒԿԻ
ՄԵ ՊԱՏՈՐ ԷՂԷՄ ՄԻՆՈՒԸՅՐ ՎԻՐԷՄ ԿԱՆԳԸՆԻՆ՝ ՈՒ ԿՈՒ
ԴՆԻՆ, ՄԱՐԻՆԷՄ ՔՈՒՎԻՐԸ ԿԱՌՆՈՒՆ. ԿԱՄՈՒՐ ՄԻԿ
ձԵՌՈՒՆ՝ ՄԱՐԻՆԷՄ ՄԻԿ ձԵՌՈՒՆ, ԷՄՄ ԲԵՎՈՒՐԸ
ԿՈՒՄԻՆ:

ԲԵՂՈՅ (ԳԼՈՒՍ ԴՈՒՄԻՐ) ԻՓԻԼՈՅ ՀԱՄՈՐ ԿԱՌՆՈՒՆ
ԲԵՂԿԱՆ, ՈՒՄՎՈՒՆԸՆ, ԲԱՂԸՐԲԸ. ՈՒՄՎՈՒՆԸՆ ՈՒ ԲԵՂ-
ԿԱՆ ԲԻՊԷՌ ԿԱՌՈՒՂԸՆ (ԵՐԿԱԲՄԱԳՈՐԾ) ԲԵՂԸ ԿՈՒ

տանըն կուտոն ազընծի. հինգ, վից դոքէա կու վոլոն, հապո կու դընին տըստըն միջը, խփինը՝ կիսը ցամոք կուտին կիանէա կու մանտրին գէրջըրըն միջը, կանցընին թոթու, սէօխաիւր՝ կուտին. էօսիւր հիտնէ արոխ, գինէ կու խումին:

ՕՌՈՒՋ ԱՊՈՒՐ խփիւոյ համոր էսէաջ օռուզը կու չափին՝ էօնիւր կուրոյ եկ ջոր կոնուէն, ասիլ կո կուզանոմ թը միկ օռուզ՝ իրկու ջոր. կունոն ջորը տաքնոյ նը՝ օռուզը կու վոլոն կունոն. շեհրեան (չէհրիյէ) կու ազընծին էզըն միջ, վիրէանէա դընթիկ մը ջոր կու ջըրցկընին կարմըրնիւոյ համոր, օռուզըն ջորը քէչուընը՝ շեհրեան միջը կունոն կու խառընտին, տեսնուէն ուր խփիցով նը՝ կու ըջըցընին. կու հաւին էզը կունոն միջը, կու խառընտին, վիրէանէա խուփը(*) կու գնին, դընթիկ մը հանգչիւոյ համոր. էաս ուտըք էօրը կուտին: Պօք նը նը՝ վիրէ գոհոն (վերոգրեալի պէս) կիւմի օռուզ ապուըր՝ պեղիւէն ձէթ կու բիրին կու խփին, վիրէանէա ջոր կու ջըրցկընին, պուղը իւէ նը՝ հիւտը կուրթոյ տէյի կու անցընին միջը, ուր պօք էօրը կուտին:

Տուրմոյ (տուրմա) էնիւոյ համոր ածուիցը չէօլֆիւէն կու բիրին, կու քիրին՝ կու բանոն. գէր մըսնէա դընթիկ մը կու ծիծին ու պըղըրըն հիտը հէալճէօվ, ըռահանէօվ, սիւխէօվ կու խառընտին՝ կունոն տուրմին միջը կու դընին կու քըռացընին.

(*) Զէյթունցւոց մէծ եւ փոքր սաներու խուփն ընդհանրապէս փայտեայ է:

էօռք մը իլլէ նը՝ թոթուն կու անցընին, անուխ էա կու քարին, լըմոն խիի նը կու ըջըցընին կուտին: Շինկիրորէ ու խիյարէ տուրմեան էա ինտէսա կու էնին:

Պաստուրմոյ էնիւոյ համար էսէաջ գէր մըսը առնց ծիծիլէօլ տըստըն միջը կու քարին, հասո կուրթոն ածուիցը դողոմ կու բիրին կու քիրին, խիւշիւր կու մանտրին. տիանուն ուր մըսը կիս իփիրէ նը՝ կու քարին մանտրումոն (մանրեալ) դողոմը միջը. էօռք մը իլլէ նը՝ էաղտիւր կոււնոն, աւնուխէա կու քարին, խիինը կու ըջըցընին կուտին:

Աքրոխ (կարազ տուսար կը նշանակէ) էնիւոյ համար մըսը կու մանտրին ու պըղլըրէօլ, հէալէճէօլ, ըսահանէօլ, սըխէօլ կու խատընտին, էգուցնէ կէնէաջ ցոխ կու հաւքին. էսիր՝ ցախըն միջը կոււնոն կու սըլին. մեկկար ցոխը դոհ նը նը՝ ցոխը կու խեշին, հասո կու սըլին կոււնոն տըստը, վիրէանէա դայիւմ (հաստատուն) խուփ մը կու դընին, քոր մէա խըփըն վիրէան, էօսիւր մուհեհեհեհէա եկկար պընտ քոսոյ նը պողլուրը ցախըն մըջէն շիլլէ տէյի. խիէ ու ըջըցընին նը՝ պիւքէօլ ու էյրընէօլ (այրան) կուտին:

Ջորմոր էնիւոյ համար իրկու դողոլ էգ կու քարին տըստըն միջը, հալը նը՝ ջոր կոււնոն, ջորնէ պըճպըճո նը՝ տասնը հինգ կա քսոն հաւկըթ կու կըտրին միջը, էան էա դընթիկ մը քոսոյ նը՝ դուռուս խեաիր կու քարին միջը, էօսիւր կիսին ՋՈՐՄՈՐ:

էօսիւր հիտը ճիկկարէօլ հէաա պողլուր կուտին:

Ճիկեարէօվ հէատ պողոտա խփիւոյ համար էսէաջ
ճիկեարը կու աղընծին, ըսընտ աղընծը նը՝ կու-
նոն իոր, ջորը էօսք մը իլէ նը կունոն պողոտաը,
էանէա կինոյ պոճպոճոյ նը՝ ըսահոն, հալէճէա կու
քարին կու խառընտին, կու ըջըցընին. կու հալին
էղ՝ կունոն միջը կուտին ջըրմըրըն հիտը. էաս մի-
նէվիւրէա կուտին:

ԻՒՂԻԻՐԴ ԷԷԱՏ պողոտա էնիւոյ համար ջորըն մի-
ջը կունոն պողոտաը վի էսէաջ ասոճիս կիւմի կու
էնին:

ԲԱՂԵՂ ԱՊՈՒՐ խփիւոյ համար՝ կուրթոն լեռնիրուն
կու հաւքին բաղեղ, թիւրք աղան կու բիրին, կու
մանտրին, չուփիրը կու քարին՝ կունոն տըստը կու
խեշին հէալճէօվ, սիւխէօվ կուտին: Սըլային խո-
տեղէնները էաս թէվուր կենին:

ՈՒՂԸՆ ԱՊՈՒՐ խփիւոյ համար՝ լեռնիրը կուրթոն
ուղըն կու հաւքին կու բիրին, կու մանտրին, ֆեօթը
կու քարին կու հազըրին. էսէաջ աւճորը կու քա-
րին կու քոռոյ, տիսնուն ուր աւճորը խփիւէ նը
կու քարին ուղունը, էօսք մը իլէ նը՝ կու անցը-
նին թոթուն ու էօսք մէա իլէնը կու ըջըցընին:

ԼԵԼԻԿ ԱՊՈՒՐ խփիւոյ համար՝ նըւըկ կու հաւքին
կու բիրին կու մանտրին, ըրկըւընէ ջոր կու շուղ-
ցունին, զընթիկ մը կինոն նը՝ մատըն միկը միջը
կու խեթին, տիսնուն ուր կո դիմանոյ նը՝ կու ը-
ջըցընին կունոն նըւըկը, ծիծոճ ցիրինէա, մակոյր-

Թընէա, ուր՝ էսէաջ էաս մակոյրթ ասվոծ բոնը
չու գըտալընը՝ ղընթիկ մը էաղտիւր կու քամին
էօսիւնց միջ, վիրէանէա ղընթիկ մը էլեր կու ջըրց-
կընին: Տանկնաւագը տիսնուն ուր թըթվիրէ նը՝
կու դընին իվրըքըէն (ի վերայ քուշին) ու էօք
իլէ նը՝ էան թըթուէն ջոր կու պեհին, էօսիւր
կիսին ՄԱԿՈՅՐԹ. էաս գըտուը նը էաղտիւրը չին
քամի: էաս կունոն միջը ու կու թթուը. ըսընտ չի-
փի նը՝ կու կըճէ, չիս կանը ծամի, էօսիւր համոր
ըսընտ կիփին ու կուտին: էաս խոտեղէննիրը գա-
րունըն կուլուն:

Թարխանոյ ապուր իփիլոյ համոր ջորը կունոն,
ղընթիկ մը ջորը տաքնոյ նը՝ կունոն քարխանեա
նէա, իփինը՝ կու ըջըցընին կուտին:

ԶԻՐԹՈՆ ԱՊՈՒՐ իփիլոյ համոր էօր էսէաջ չիրթո-
նը կու թըջին, հապո տըստըն միջը կունոն ջոր,
ծիծոծ ցիրին ըսընտ կիփի. չիրթոննէա չանախըն
միջը կու հալին, կու քամին. ապուրնէա իփինը
կու ըջըցընին. հապո հալմոն ու քանմոն (հալեալ
եւ քամեալ) չիրթոննէա միջը կունոն. էօսիւր կի-
սին չիրթոն ապուր:

Ասընց չիրթոն նալոյ ծիծոծ ցիրինին հիտը կու-
նոն աւճոր, կիս քոռոյ նը՝ բիպիկը կու աղընծին,
կու սղիկն ու կիս իփինը՝ միջը կու անցընին բիպի-
կը, էօսիւր կիսին ԲԻՊԻԿ ԱՊՈՒՐ:

Ասընց բիպիկ անցունիլոյ կիսին ՅԻՐԻՆ ԱՊՈՒՐ:

Առջնց բխարիկ ու աւճոր անցունելոյ, խփինը՝ միջը կու անցընին էղ ուտըք էօրը. էօսիւր կիսին էղէօժ, ՅԻՐԻՆ ԱՊՈՒՐ:

Նիւրկէն առջնց բխարիկ ու աւճոր անցունելոյ՝ ցիրինը շոտ կու քարին ուր սլընտ կուներ, դըդաւէօժ չին ուտի. էօսիւր կիսին էղէօժ ՊԸՆՏ ՅԻՐԻՆ ԱՊՈՒՐ եւս քշխ:

Առջնց էօսիւնց միկը անցունելոյ՝ պոք էօրը կու անցընին քեհին * (քահին) եւս քեհինին էղը եւս ձէթ:

Վիրէ դըհը շոց քեվուր ուր ասը թէ՛ ցիրինը շոտ կու քարին ու էօնիւր կիսին սլընտ ասուր՝ էաս խփի ու ըջըցընելոյ վոխս նը՝ շեհրեան կու աղընծին, միջը կուենոն, կու խառընտին կու ըջըցընին. ուտըք նը նը՝ էղ, պոքէա նը նը՝ քեհին եւս քեհինին էղը, եւս ձէթ կու անցընին. էօսիւր կիսին ՅԻՐԻՆԷՕՎ, քեհին ԱՊՈՒՐ:

Բաղլէօժ ասուր խփիլոյ համոր կու քարին մըսը. էօք իլէ նը՝ կուենոն բէկէան միջը. էասէա էօք մը իլէ նը՝ կուենոն թոթուեն, ղընթիկ մը կինալոն առնիրոյ կու ըջըցընին կուտին. էօսիւր կիսին ԲԱԿԷՕՎ ԱՊՈՒՐ:

ՈՒՏԸԲ հաշիւսեան խփիլոյ համոր տըսաըն միջը իրկու դոգոլ էղ կու քարին, հալընը՝ կուենոն օռուպը, օռուպը քոռոյ նը՝ նիշեան կու շաղին ու

(*) Քահինը Գերմանիկէ կը բերեն:

ջոր կիւմի կու էնին, կունոն ըստըն միջը. խառն-
տիւն իֆեան կու բոնէ, կու թանծուրնոյ. տիանուն
ուր իրիսը կս քըռափըրթի ու կաղնը կէած մը քա-
րին ու շանցը նը՝ կու բջըցընին, առնց օղ քարի-
ւոյ. տապկըն միջը կու հալին նուկի մը դասոր էղ ու
նիւրկէն վիրէան կու անցընին:

Փըշիջոր իփիւոյ համոր էսէաջ գիտենը (ոչ թէ
կրակի վերայ) ջորն ու էլերը կու կըսցընին, բըռ-
նէ նը՝ իփը քչէն կու դընին, կոնուն օսուպ ու
նիւրկէն կու կըսցընին չիւր իփէ, կըսցընիւն պատ-
ճոսնէա շի կըլընճէ Տէյի. իփինը՝ դըզալըն ծերէն
դընթիկ մը կու հիրուն, տիանուն ուր էլիւրէն հիւտը
շի դոյ նը՝ կու բջըցընին ու միջնէա էղ կու անցը-
նին. էօսիւր կիսին ՓՆՇԻՋՈՐ:

Խեշմէար էնիւոյ համոր էղն ու ջորը սրտապոր
կունըն ու միջնէ խօս (խաւ) էլեր կունոն, կու
կըսցընին կու դընին իփըքչէն, իփինը կու բջըցը-
նին կուտին. էօսիւր կիսին ԽՆՇՄԷԱՐ:

Պատըռաէ իփիւոյ համոր էսէաջ աւճորը կու քա-
րին կու քոսոյ, իփինը՝ թոթուն կու անցընին. էսէ-
աջէ պէհմոն (սպհած) կիս իփմոն հոց կունցնոն,
էասէա կու մանարին միջը կունոն, բջըցընին հանգ-
չէ նը՝ սէփափուր կու ծիծին կու անցնին կուտին.
էօսիւր կիսին ՊԱՏՐՈՏԷ:

ՀԱՅԸԿ իփիւոյ համոր առջէ նախըր բէկէան,
հոնսոսոնը, խարակոզը, խոմճուլպոնաը, ցիրինը

միկ կու քարին, էսիր կիս խիինը՝ աս ճապո հոտ
պող ծիծոծ ցիրին, գեղջէ (տեղւոյն, այսինքն Զէյ-
թունի համար կ'ըսեն սովորաբար) լըվկոս, Ապ-
լաստի (Ալստան, անուն այլ գիւղաքաղաքի) լը-
վկոս կու քարին, էաս ապուրը բրկըւնէ կու
դնին, եկեաւ ճանկնամազը դնին նը՝ չիւր ճէ-
աչք չի խիի, ուտին նը միջնէա դամպուռ կու քա-
րին:

Շալրոյ խիիւոյ համար էսէաջ աւճոր կու քա-
րին, խիինը՝ ութնութ (եօթ կամ ութ հատ) սիւխ
կու մանարին միջը, սիւխը խիինը՝ կունոն պողլու-
րը կու քարին միջը ըսահոն, հաւէճ, գուռուսխե-
տիր, էօսք մը իլլէնը կու ըջըցընին կուտին:

Էաղցիւծիւսայ խիիւոյ համար էսէաջ տըստըն մի-
ջը կունոն ջոր, տաքնոյ նը՝ կունոն էաղցիւծիւսայ-
նէա, խիինը կունոն քացոխը, էօսք մը իլլի նը կու
ըջըցընին կուտին. էօսիւր կիսին էԱՂՅԻԻՅԻԻՍՊ:

Պոք խիիւոյ էսիւոյ համար աւճոր, էս հոտ խսայ
կու քարին. խիինը՝ կունոն չանախըն միջը պղղը-
րըն հիտը. պողլուրը թրչի նը՝ կու շաղին, միջնէա
կու մանարին սիւխ, կու քարին հաւէճ, գուռուս-
խետիր, ըսահոն կու սասաղըխին կուտին:

Ըշքաղըն տապկիւոյ համար նուկի մը դաւսո՝ էդ
կու հալին, հալը նը միջնէա իրկու քու (քու) ջոր
կունոն. ջորը կինոյ սոճապոճոյ նը՝ կունոն մանա-
րուսան ըշքաղընէա, էասէա էօսք մը իլլէ նը՝ կու

կտրին միջը տոսնը հինգ՝ ևս քոսոն հաւկըթ , էա-
սէա էօսք մը իւլէ նը՝ կու ըջըցընին կուտին . էօ-
սիւր կիտին ՏԱՊԿՈՅ ԸՇԲԱՂԸ :

ՀԱՆԿԸԹ ՏԱՊԿԻԼՈՅ Համոր էղը կու հալին , տասնը
հընգ ևս քոսոն հաւկըթ էա թափցընը մը միջ կու
կտրին , կու քարին միջը օղ , դընթիկ մը նիշոյ կու
խառընտին , բռնէ նը՝ կու ըձգին էղն միջը , միկ
դըհը կիփի կու դորմողնոյ , կու դառցընին միկէ-
ալ դըհը , էան դըհնէա խփինը՝ կու ըջըցընին կու-
տին . Քիւմիւնէա վիրէան մեղր էա կու գնին :

ՉՈՒՂԴՈՎ ՏԱՊԿԻԼՈՅ Համոր էղը տապկին միջը
կու հալին , խփինը՝ ջուղգոկնէ կու մանտրին կու-
նըն , շուղնոյ նը՝ կու ըջըցընին կուտին : Քիւմիւնէա
հաւկըթըն գործը ոլմնոյ նը՝ ջուղգոկնէա միջը
կունոն ինտէան կուտին :

Ակնիր էնիւյ Համոր էղը կու հալին . հաւկըթը
բանը մը միջ կու կտրին , դընթիկ մ'է էլէր կու քա-
րին , օղէա , դըգալէօլ մը կու կպցընին բռնի նը՝
կունոն տապուկը էղըն միջը , տապկըւընը՝ միջնէա
թոթու կունոն . էօսիւր կիտին ԱԿՆԻՐ :

Մեղրէօլ պօթեկ էնիւյ Համոր ունկուղըն օլը-
հըղըն կու մանտրըցընին , մեղրըն միջը կունոն . ու
հոցը կու կտրին , միղրը ու ինկէղը հացըն միջը
կունըն մոլսիւն (մոլսա) կիւմի կենին ու տապ-
կին միջնէա էղ կու հալին , կու դընին էօսիւր մի-
ջը , շուղնոյ նը՝ կու հանին . էօսիւր կիտին ՄԻՂ-
ԲԷԹՎ. պօթեկ :

Հացկրներ իր էնիլոյ համար հէաս կու շաղին ու սոհ-
մոն թոթու խէօմիւր կունցնուն, էասէա կու լըճին
միջը կունոն, ըմնը հէասը շիւղ ջորով կու շաղին.
5—6 սահոր կինալուն սօնորոյ կու թթուը ու
գաղըկընիր կենին ու էղըն միջը կու տապկին, էօ-
սիւր կիսին ՀԱՅԿԸՆԻՐ:

ԳԼՈՒԽ Զ.

**ԼՈՒԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԹԵՂԻՆԱՅ ԵՒ
ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՅ**

ԿՏԱԻԵՂԷՆ ՍՊԻՏԱԿԱՅՆԵԼՈՒ ԿԵՐՊ

Որոշեալ քանակութեամբ կուն մի ջրալի կաթ-
տայի մէջ լեցնելէ յետոյ՝ նոր գործուած բամբակ-
եայ կտաւներն մինչեւ երեք օր նորա մէջ ի թուրջ
կը դնեն. յետ այնորիկ հանելով գետեզրը կը տա-
նին եւ սաղ ջրով կը լուան, յաճախ կեփիչով (*)
հարուածելով, յետոյ գետնի վերայ փռելով կը
ջորցընեն: Այս կտաւէն կը ստարաստեն չափիկ եւ
վարալիկ:

ԼՈՒԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տանց մէջ տեղ եւ ջուր չունենալնուն համար

(*) Կեփիչ (քոգաճ) ըսուածը 3—4 քաշ կշռող եւ 4 մեծր եր-
կայնութեամբ փայտ մ'է, որոյ $\frac{1}{3}$ ը բարակցած լինելով իբր տո-
ւոմ կը ծառայէ, սովաւ կտաւոց կը զարնեն մարբելու համար:

սովորութիւնն բրած են ի վաղուց լուացատանց մէջ
կատարել լուացքն, որք բնակութենէ դուրս ջր-
եզր տեղեր են, մի քանիին միմիայն վրան գոց եւ
շուրջանակի բաց, թաղեր կան՝ որք բոլորովին բա-
ցեթեայ տեղերու մէջ կը կատարեն: Սոքա հասա-
րակաց կը վերաբերին, հետեւաբար ամէն ոք ա-
զատօրէն իւր գործն կը կատարէ անդ, յորս սլա-
րաստ կան մի քանի փայտեայ skurs (տաշտ):

Օր մ'առաջ մոխիր կը տանին եւ կը լնուն նոցա
մէջ, վրան ալ ջուր. հետեւեալ օրն կանայք կեղ-
տաշորերն եւ փայտ բարձած՝ կեփիչն ու տուղտն (*)
ալ միատեղ առնելով կ'երթան լուացատուն. անդ՝
յստակ մոխրաջուրն յայլ կաթսայ փոխադրելէ եւ
տուղտն ալ մէջն լեցնելէ յետոյ կը տաքցընեն եւ
ապա կ'սկսին գործողութեան:

Նախ « ճակտին » (ճակատի 6 կանգուն լաթն) կը
լուան, յաճախ « տէարտ » եզրը դրած կեփիչնե-
րու հարուածներ տալով, մաքրելէ զկնի գետինը կը
փոեն եւ կը չորցնեն:

Հետզհետէ կը մաքրեն միւս ճերմակեղէնքն եւ
ապա ներկեալքն ի շնորհս տոփանի հարուածոց:

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՅ

Լաթեղէնքն լուանալէ յետոյ իրենք կը լուացունին,
բոլորովին մերկանդամ (**) նստեալ ի մէջ միեւնոյն

(*) Տուղտ՝ (Տանկ. Գիւլ հաճէմ) ծաղիկ մ'է գոր յամարան կը
մոդովեն եւ կը չորցնեն:

(**) Մարմնոյն ո եւ է մաքր զենչակով պատապարելու սովորու-
թիւն չունին, յամարան եւս տղայր, պատանիք և ամուսնացեալ
երիտասարդք անխտիր առանց զենչակի կը մտանն ի գետ:

փայտեայ փաքր տաշտից, ըստ որում՝ բնաւ բազանիք չկայ:

Մարմնոյն մաքրութեան համար կաւ կը գործածեն եւ իրենց անհանդուրժելի է տոկալ 15—20 օրեայ չ'սանտրուած գլխոյն ցաւոց, վասն որոյ նախ «դուշոյօն նըմ» ըսելով կ'աղաչեն զիրար, յետոյ կ'ապառնան «պերօր բոն կ'ա բիրիմ դագօթիդ» եւ այլ այսպիսի խօսքեր արտասանելով: Լուացուելէ զկնի ըստ առաջնոյն լաթերն գլուխնին կը կապեն եւ մաքրեալ լաթեղէնքն, կաթսայն, աւելորդ փայտերն եւ այլ ամենայն ինչ չալակեալ՝ բոկոտն կը վերադառնան ի տուն:

Յզի կանայք եւս ի ձմերան սաստկաշունչ հոգմոյ եւ անձրեւոյ դէմ միեւնոյն կերպով մերկանդամ եւ ի բացօթեայ (*) տեղւոջ կը լուացուին:

Արք՝ նոյնպէս մերկանդամ կը լուացուին շատ անգամ միեւնոյն յարկին տակ:

ԳԼՈՒԽ Է.

Ի Ա Ր Ո Յ Ք

Բնաւ որով կամք ծոյլ են, ի դարնան եւ յամա-

(*) Ս. Սարգիս Սաղինը գլխուոր ճանապարհի մը վերայ «Կեմէ» կոչուած տեղն է, ուսկից ողջոյն օրն անցնողք և նորա կից գայրէն շուր առնողք անպակաս են, սորա՝ հանդիսատես կը լինին ներքին գործողութեանց, որք ի չորեքկուսէ առանց դժուարութեան կը տեսնեն հակառակ ցած շրջադասին, սոյն տեղւոյն միայն վրան գոց է և դուռ չունի. իսկ Ս. Աստուածածնայ Սաղեցիք (Օրքա մանաղիք) յատուկ տեղ չունենալով՝ գերեզմանատան կից բացօթեայ տեղւոյ մը վերայ կը կատարեն:

րան այդ եզործութեամբ կ'զբաղին, իսկ ձմեռն առօրեայ վառելափայտն բերելէ զկնի՝ միմեանց տուն հաւաքուելով անյադ արբեցութեամբ ժամաւաճառ կը լինին, յորմէ կը ծագին կոխք եւ կը յանդին արիւնահեղութեանց: Յամարան՝ ի դատարկութեան խումբ առ խումբ թաղերու եւ փողոցներու մէջտեղ յեզերս սպանդանոցաց եւ ականց նստելով « չէօռ » (խօսակցութիւն) կուտան, մինչեւ իսկ տեսնուած է տենդէ եւ յայլ հիւանդութեանց տանջեալ անձանց յիշեալ դարչելի տեղերն ընկողմանիլն:

Կը փափարին նաեւ անախատ ձեռք բերել զայնս՝ զոր միայն աշխատութիւնն կը փոխարինէ:

Տգիտութիւնն զրկած է զինքեանս փայլելէ ամենայն ինչ բարի՝ զոր կը ծնուցանէ բարոյականութիւնն, եւ արդարեւ ոչ ոք կարող է առանց սրտի մորմուքման տեսանել մի փութը ընկերական մարմին՝ յոր ստախօսութիւն, մատնութիւն եւ ընկերատեցութիւն արմատացած են. նիւթական եւ բարոյական անհոն միասը, յաճախակի սարսափելի արիւնահեղութիւնք չեն զօրած երբէք գէթ իրր մասնակի խրատ:

Բազումք եւս իւրեանց ազգակցաց ստացուածքն կ'իւրացնեն խորին տգիտութեամբ:

Թէ ոչ սրտի եւ ո՞ր ժամանակաց են արդիւնք չորս թաղային արմատական բաժանումն, որ ազրիւրն է այսց ամենայն չարեաց՝ եւք զանխուլ յայսմանէ, այլ սակայն՝ սոսկմամբ տեսած եւք իրերաց դէմ

սնուցած սարսափելի ատելութիւնն . սորա չորեք-
եան զիրար կ'անարգեն եւ կը նախատեն եւ կը
սրտաւրազմին ընդ միմեանս :

Կենդանի վկայք կը պատմեն թէ՛ յանցելումն կէս
գրիւ կորեակէ ծագած կռիւն թաղային սրտա-
ւրազմի փոխարկուելով՝ երկուստեք հարկւրաւոր
անձինք մեռած են , ի բաց առեալ չորքոտանիքն
եւ տեղի ունեցած այլ վնասք : Սոյնպիսի սարս-
գայից մէջ՝ տեղի տալով ի վաղնջուց հետէ վերի եւ
Աստուածածնայ թաղերու մէջ եղած դաշնակցու-
թեան ընդդէմ Պօղ-սրայիւր եւ Ղարդալար թաղերու՝
որ յառաջ բերուած զանազան կարեւորագոյն սրտ-
ճառանաց հետ ծագումն առած է նաեւ տեղական
դրից հանգամանքներէ՝ եւ այն հաստատուն հա-
մուզումն թէ՛ անհրաժեշտապէս պարտին միեւնոյն
դաշնակցութեամբ կռուիլ հակառակ կողման դէմ,
եթէ թաղեցւոց մին միւսոյն հետ կռուիլ (որ սո-
վորարար անհատից ընդ միմեանս աննշան կռուէն
ծագումն կ'առնու) սկսի՝ անմիջապէս եւ փոխա-
դարձաբար կը մարտնչին զինուք : Կռուոց ատեն
ծինելոյզներն իրենց պատնէշ կ'առնուն եւ շնն
խնայեր անմեղ ճանապարհորդաց եւ նոցա անաս-
նոց՝ որք հակառակ կողման կը սրտականին : Այս
թաղային սրտաւրազմներն ժամանակաց բերմամբ
ատրիճանարար նուազած են :

Եւ քանզի՝ որպէս եւ այժմ իսկ մասնաւոր կըռ-
ուոց մէջ ոճրագործն այլ թաղ ապաստանելով կա-
րող է զերծանիլ յառաջակայ վրիժառութենէ՝
գուցէ , եւ հաւանական իսկ եղած լինի սրտճառն
թաղային ատելութեանց , որք յամենայն ժամ ա-

զատ աստատանաբան կը նուիրեն ամէն իրենց դիմողներու, սուանց ազգի եւ կրօնի խարուխեան:

Բուն բաժանման տեսակէտով բազումք կը դըժկամակին խնամութիւն հաստատել ուրիշ թաղեցւոց հետ. եկեղեցին չեն երթար, այլ թաղի շուկայէ առեւտուր չեն ըներ, ազարակներն, արտերն եւ այգիներն եւս որոշ բաժանում մ'ունին, բացառութիւնք յոյժ նուազ են. վերջապէս՝ ամէն ինչ թաղային է եւ անյարմարքն իսկ առ այն վերածեալ. հետեւաբար, Զէյթունցւոյ մը իւր թաղն է միայն նուիրականն, լաւն եւ այն բարիքն որ կը գոյանայ արտաքուստ՝ իւր ընդհանուրի վերաբերեալ եւ չէ՝ իւր թաղին մէջ՝ թէեւ նա լինի սկզբնասրատճառ երջանկութեան՝ չունի իրեն համար գոյութիւն:

Չորեքեան թաղքն իրենց թաղապետներն ունին զորս իջխան կ'անուանեն եւ որք՝ որդւոց որդի կը յաջորդեն. սոցա սերնդական անուանքն են, ԵՆԻՆԻՆԵԱՅԱՆ վերի՝ կամ Ս. Լուսաւորչայ թաղի՝ ՍՈՒՐԷՆԵԱՆ. Ս. Աստուածածնայ կամ միջին թաղի՝ ՇՈՐՎՈՅԵԱՆ. Ս. Յակոբայ կամ Ղարդաղարի՝ ԵԱՂՈՒՊԵԱՆ. Ս. Սարգսի կամ վարի թաղի:

Գ Լ ՈՒ Խ Ը.

ԿՐԾՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԴԱՄԱՆՔ

Ժողովուրդն, որպէս հասարակօրէն յայլ գաւառս յարեալ է կրօնին. նա՝ վաղքաջ ընդ առա-

ւօտան եկեղեցի կ'երթայ որպէս տեսած է ի ծնողաց եւ մօլեգնարար կերակրոյ պահեցողութիւն^(*) կընէ . բայց առ ի չ'զոյէ կիրթ եւ քաջ հովուի՝ հերձուածներ մուտ գտած են իրենց մէջ , որոց նպաստած են քաղաքական գէտքերու առթիւ շփոթութիւնք :

1862—66 ի խնդրոյն ատենն , յորժամ շորս իշխանք ի կոտտանդնուպօլիս բերուեցան՝ նախ պատականութիւնն իրր քաղաքական յանցանաց պատժէ փրկութեան միակ միջոց եւայլն ներկայացնելով իւր կրօնն՝ երկու հարիւրէ աւելի ընտանիք յաջողած է որտալ , բայց բազումք հեռուէնէ վերադառցած են իւրեանց եկեղեցին : Զէյթունի մէջ կան այժմ 70 տուն հոովմէագաւան . ունին մի եկեղեցի եւ առաջնորդարան փայտաշէն եւ կը կառավարուին ի ձեռն փոխառաջնորդի մը ընդ իշխանութեամբ Գերմանիկի հոովմէականաց առաջնորդին : Յաւուրս պատրանաց՝ Լատինականութիւնն (պէլի ֆէնիլի — մէջքը չուանով — այսպէս կ'անուանեն Զէյթունցիք զլատին կրօնաւորս եւ զփէղուիթս) եւս մուտ գտած է եւ հաստատուցին մեզ թէ՝ բաւական թուով

(*) Յաւուրս նաւակատեաց զենեալ զուարաց միան պղծեալ համարելուն համար շեն զենեք եւ ուտեր . իսկ Զատիկի և այլ տէրունական օրեր , որք զրեմէ ընդհանրապէս կիւրակէ օրեր կը տանուին՝ նոյնպէս առանց մօի կ'անցնեն , միս առնուլն մարմնաւոր զորք համարելով , ուստի մեռելոցի օրէն կ'սկսին զենել եւ ուտել : Մտափոճառք հայկական կրօնէ են , վասն որոյ Քոզորականք և Տաճիկք պարտաւորեալ են ի միասին պահելու . ի վերայ այսր ամենայնի՝ եթէ զիպուածով մի երկու օր առաջ կենդանի մը սարէ զլորեալ և կամ փնասակար խոտ ինչ ուտելով մեռանի՝ կը պահեն և որոշեալ օրն կը վաճառեն ի կեր , ինչպէս նաև սովորաբար արկածեալ մահուամբ մեռնող կենդանիքն :

ընտանիք նշանակեալ են յայս անուն ի տումարի կառավարական պաշտօնատան որ անդ, ի ձեռն զատ ազգութիւն եւ կրօն կազմելու հետամուտ մի քանի բաղդախնդիր անձանց :

Յետ այնորիկ՝ 1870 ին Բողոքականութիւնն յաջողած է մտանել ի ձեռն Գերմանիկ հաստատեալ Ամերիկացի Միաբնակարաց . սորա թէպէտեւ յառաջագոյն հալածեալ՝ այլ ապա յաջողած , իսկ այժմ սպառնական դիրք մ'են բռնած : Յարդ ունէին յիսունէ աւելի տուն եւ ժողովարան մ'ու վարժարան Ս . Աստուածածնայ թաղին մօտ , դրեալ էմ առ դէմ հռովմէականաց եկեղեցւոյն (այս թաղին մէջ հայոց , հայ հռովմէականաց եւ բողոքականաց ազօթատեղիքն եռանկիւն մը կազմած են) իսկ 1881 ին՝ Լուսաւորչայ թաղին մէջ եւս հաստատեցին մի կեդրոն եւ սկսան մանուկներ հաւաքել զաստիարակութեան պատրուակաւ եւ փողոցներու ու կրտսիկներու մէջ քարոզել , բայց անձնական շահն ու բաղդախնդրութիւնն Ս . Աստուածածնայ թաղին մէջ առաւել արդիւնաւորած են իւրեանց ձեռնարկութիւնն : Աստ՝ առաջնորդութեամբ Պօղօզեան Նազարէթ եւ բաղմակրօն Սալթեան Պետրոսի (այս անձն է ի Լատինականութիւն առաջնորդողն , կրօնապետ կամ ազգապետ լինելու բաղձանօք , բայց ըստ որում բաժանման ձեւակերպութիւնք դեռ եւս պաշտօնական հանգամանք չեն ստացած՝ առ այժմ ասոնց մէջ կը գործէ : Հայկ կը յորջորջէ գինքն եւ բնաւ անգործ կենալ չ'սիրեր . .) « Սիրոյ ընկերութիւն » շրջուցիչ կեղծ անուամբ մի խումբ տիւ եւ գիշեր կը գոր-

Տէ՛ մի կողմանէ ի նստաստ բողոքականաց՝ միւսէն խեղճ ժողովուրդն հանապազ խաբելով եւ դրամն կորզելով։ Սոքա՛ ի ցոյցս հայ եւ հակամէտ յառաջադիմութեան՝ ամէն կողմ գրեթէ կը յուղարկեն... եւ ի ներքուստ հակառակ խրեանց բիրտ ազխութեան խուճիկն կիւրակէ ցերեկ եւ այլ գիշերներ թաղին վարժարանին մէջ գումարելով՝ կրօնի նկատմամբ ըստ քմաց քարոզներ կը խօսին, ծագրելով եւ ընդ այսոն առնելով Հայաստանեայց եկեղեցւոյ սրբազան արարողութիւնքն, տեղւոյն Գերմանիկցի հայ բողոքական քարոզիչն եւ այցելու Ամերիկացի միսիօնարն եւս յաճախ կ'այցելեն եւ կը քարոզեն սոցա, երգել տալով նաեւ բողոքական կրօնի վերաբերեալ երգեր ի ներկայութեան Տէր Մարկոս քահանային՝ որ խեղճ ժողովրդեան մէջ անձայն ի նիստ կամ յոսին ունկնդիր կը լինի անտարրեր, այս քահանայն հայոց կրօնական ժողովոյ անդամ է։ Բաց աստի՛ կանանց խուճիկ մ'ալ համազած են ի ցոյցս անմտաց եւ դիւրագոյնս եղանակ առաջադրեալ նպատակի իրադարձման եւ զորս խաբէական միջոցներով կը հրահանգեն ըստ վերնոյն։

Խմբին վարիչք, որոց գլուխն է Նազարէթ Պօղօղլեան, ուխտած են յաւէտ կռուիլ Ուսումնասիրաց անուն մի ուրիշ խմբի դէմ, որ հեռի սոյնպիսի ազգաշնաս եւ մոլորեալ գաղափարներէ՝ ուրոյն կը գումարի առաջնոց գումարման տեղւոյն կից մի այլ սենեկի մէջ։ Արդարեւ յոյժ ցաւալի է տեսանել չորս սրտակոտեալ թաղերէ միոյն եկեղեցւոյ իրարու կից սենեկաց մէջ սկզբամբ հակառակ երկու մարմնոց գումարումն, մին՝ բողոքականու-

թեան հետամուտ, միւսն՝ սրբազան կրօնի աւան-
դապահ. մի եւնոյն ծնողաց զաւակ երկու եղբայրց
մին՝ առաջնոյն, միւսն՝ Բ.ին մէջ. առաջնոյն կինն՝
ձեռնադահ. Բ.ինն՝ կանանց խմբին մէջ. խորաման-
կութիւնք, նենգութիւնք, շմուք եւայլն հանապա-
զօրեաց գործողութիւնք են եւ որք՝ յանդած են
մարդասպանութեանց^(*), Պօղոսիւսն եւ Սաւաթեան
իրր բնիկ՝ խեղճ ժողովրդեան տկար կողմերն զխո-
նալով՝ թաղին վարժարանն հոգալու պատրուակաւ
մի քանի տարուան մէջ քսան հազար դահեկանէ
առաւել դրամ հաւաքած եւ իրենց ու համախոհ
նմանեաց մէջ բաժանած են իրր դրամագլուխ,
խանութ բանալով շահեցնելու, որք՝ յառաջագոյն
դատարկաշրջիկք էին:

Զէյթունի մէջ ամէն յառաջադիմական ձեռնար-
կութեանց ապարդիւն վախճանի յանգելուն պատ-
ճառն յիշեալ երկու անձինք՝ եւ գործադիր ժողով
անուանեալ յախշտակեալ դրամով ապրող մի քանիք
են, մնացեալք մեքենայարար գէտ կերթան, քա-
ջալերեալ արտաքուստ բաղդախնդիր յանուղղայ
անձանց . . . :

ԳԼՈՒԽ Թ.

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Ողին առեւութեան, որ կիշխէ հզօրեղապէս իրենց
մէջ՝ արդեւած է զիրենք մի ազգաշէն գործ կա-

(*) Արդարեւ ՍԻՐՈՅ ընկերութիւն, Վոյալիլի՝ ընթացք եւ գեո-
ւեա պաշտօնական մարմինք կը յամեն բաջալերել . . . զայն:

տարեւէ . արդէն ըստ սահմանադրութեան կազմակերպութիւն չունին . կրօնական եւ Քաղաքական ժողովներն կիլիկիոյ Ս . կաթողիկոսին որոշմամբ եւ անուանակոչութեամբ կազմեալ՝ եւ կամ ինքնակազմ մարմիններ են , որք կը գումարին Առաջնորդ-Վանահօր նախագահութեամբ , ընտրեալ մերթ՝ կ . Պօլսէն եւ մերթ՝ կիլիկիոյ կաթողիկոսէն :

Սոյն ժողովներն հակառակ իրենց ազատութեան չեն կարող մի ո եւ է որոշման յանգիլ եւ դործագրել ըստ որում՝ ոչ ոք կայ ունին դնող իրենց . ընդհանրապէս որոշման յանգող խնդիրներն են խնդրագրեր , զորս աստ անդ կը յուղարկեն երբեմն : Բնաւ ազգային ներքին վիճակնուն վերայ չեն խորհիր ինչպէս միութեան , եկեղեցեաց՝ որոց հասութից մատակարարութիւնն ինքնակոչ ճարպիկ անձանց ձեռքն է , եւ վարժարանաց կազմակերպութեան եւ բարեկարգութեան , կալուածներ գնելու եւ աւելցնելու եւայլն . ժողովուրդն ալ առհասարակ դադափար չունի այս մասին , եթէ ունենայ իսկ՝ խտրութիւնն արգելք է ի գլուխ հանելու :

ԳԼՈՒԽ Ժ .

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Ամէն թաղ՝ այս ինչ անուն ընկերութիւն անուամբ խմբեր կազմած են , որք կիւրակէ օրեր յետ աւարտման եկեղեցական արարողութեան կը գումարին եկեղեցւոյն սենեկին՝ կամ ծաղկոցին մէջ եւ ո՛ր եւ է անուս ոք աւետարան կը քարոզէ ու կը

մեկնէլ ըստ քմաց, այս դումարմանց մէջ ամենուն ձեռքը գտնուածն բողոքականաց տաճկաբարբառ աւետարանք են: Յետ քարոզութեան կ'երգեն «Տէր ողորմեա» եւ ոմանք ազգային երգեր եւս (այս նպատակի համար յատկապէս երգիչ տղայք կը ճըվան) ապա՝ պնակ շրջեցնելով ի միջի դրամ կը հաւաքեն, զորս մի քանի ճարպիկ անձանց կոկորդն անցած է շահեցնելու նպատակաւ, եւ եթէ շահեցնեն իսկ յետոյ ի՞նչ պիտի ընեն, զայդ ո՛չ ոք զիտէ. ստոյգ է թէ իրենց մէկ մէկ խանութ բացած են նոյն դրամով, միայն՝ երբեմն վերացական շահեր կը ցուցնեն եւ անուանական թղթեր կուտան: Թողումք բարոյականն ո՛չ ոք կը մտաբերէ նիւթական հաշիւ պահանջել: Անտարբերութիւնն եւ անզգայութիւնն ո՛ւր վարեն իրենց իշխանութիւնն:

Ընկերական սոյն ցաւալի կայութիւնն պարտաւորեց զմեզ. ուստի, 1881 ին անհնարին աշխատութեամբ չորս թաղերն միացնելով ԿԹԱՍԻՐԱՅ անուամբ ՄԻՈՒԹԻՒՆ մը կազմեցինք, ի նպաստ Միացեալ Ընկերութեանց երկսեռ վարժարանաց տեղւոյն եւ նմա օրէնք եւ կազմակերպութիւն տալով՝ շարունակեցինք մինչեւ մեր մեկնած օրն, բաւական արդիւնաւորութեամբ:

Միութեան անձնիւր անգամն պարտաւոր էր կիրակէ օրեր յաջորդաբար ամէն թաղի եկեղեցւոյն մէջ կրօնի, ազգային պատմութեան, բարոյականի եւ այլն հրապարակային դասախօսութեանց ներկայ գտնուելու, ի բաց առեալ յայն երիտասարդաց որք ուրիշ ստարկայից վրայ դաս կառնուին, նոքա՝ որք ի կեանս իւրեանց հազիւ կամ երբէք սոր

կոխած էին սերիչ թաղերու մէջ (5—6 վայրկեան
հեռաւորութիւն ունին իրարմէ) մեր հարկադրու-
թեամբ սրարտաւորեցան երթալ :

Եթէ այժմ եւս շարունակուի՝ ապագային մէջ
կարեւք միմիջարուիլ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԵՐԿՐԱԴՈՐ ԾՈՒԹԻՒՆ

ԱՐՄՏԻՔ, ԱՅԳԻՔ, ԲՈՅՍՔ, ՊՏՈՒՂՔ ԵՒ ԾԱՂԻԿ

ԱՐՄՏԻՔ. — Երկիրն ապառաժուտ, անբաւական եւ
անյարմար է երկրագործութեան, զոր կը կատարեն
հնաւանդ սովորութեամբ եւ կը սերմանեն ցոր-
եան, գարի, կորեակ, յոյժ նուազ սխեռ, բակլա
եւ լուրիս : Սոյն վերջինք հազիւ մի տան կերակ-
րոյ իբր ճաշակ կարեն բաւել, զորս կը խառնեն ա-
պուրի մէջ :

ԱՅԳԻՔ. — Զէյթունի շուրջն մեծ եւ փոքր 5000է
աւելի տղի կը գտնուի, որք տեղացւոյն ապրուստի
առաջին միջոցն են եւ ըստ այնմ լաւ կը մշակեն
թէ եւ հին դրութեամբ : Սոյն այգիներն կ'արտադ-
րեն զանազան տեսակ ընտիր եւ յոյժ պատուական
խաղողներ, որոց անուանքն են՝ ՀէիէԱՆՔ (հեյլենկ)
ԳՐԸԳՐԸՐԸ, ՄԻԱԿՏԸ, ՄԱՀԵԱ ՊԱՇԻ, ՊԷՀԻՅՆԻ, ԱԶԻԶԻ,
ՊԱԼԽԱԶԸ, ՔԻԻԼԷՅԻ, ԹԷԱԳԷԱՎԻԻՐ, ԿԷԶԻ ՄԷՄԷԿԻ
(իէյի միմիսի), ՍԻԻ ՍՈՒՈՐԻ (սեւ սաւոր), ԳԻՆՈ-
ԻԼԱՂ, (զինւոյ խաղող) ՃԻՄՈԿ ԿՈՊ, ԱԳՈՎ, ԽԷԱՂ,

ՂՈՒՐԷԱՇ կամ ԽՈՒՐԷԱՇ եւ ՄԷՇՈՅ (Մարաշի) եկե-
ւաղ : Յետ ամբարեւոյ զպաշարն կը պատրաստեն տա-
րեկան օղին , գինին , ռուփն , փաստեղն եւ ընտիր
չամիչ : Խաղողոյ լիտրն ($2\frac{1}{2}$ տաճկաց օխայ է)
կը վաճառի ի Զէյթուն 15—40 փարայ :

ԲՈՅՍՔ .—Կը սերմանեն սակաւ ինչ քարսոն , ա-
նանուխ եւ ընտիր ռազան , զորս չորցնելով կը պա-
հեն ցմրան : Պէրուլթ կոչուած լեռնէն եւս կը բերեն
Քար (ինքնաքոյս) որ կարմիր , կանաչ եւ սպիտա-
կազոյն հաստաքազուկ թթուահամ բոյս մ'է զոր
կեղուելով կուտեն :

Կանաչեղինաց մասին հոգ կը տանին թարմ պըղ-
պեղի , որ խիստ կծու է եւ առատութեամբ կու-
տեն , վարունգի , մանաւանդ Շինկիրարի . սա՛ տե-
սակ մը վարունգ է $\frac{2}{3}$ մեթր երկայնութեամբ ,
վրան ուղիղ գծաւոր եւ համն անոյշ : Կ'արտադ-
րեն նաեւ մի քանի տեսակ մեծ դդումներ , որք ա-
խորժահամ են , նուազ շտամ , բայց չեն ուտեր :
Թէ՛ Շինկիրարն եւ թէ՛ դդումն մանրելով կը չոր-
ցընեն եւ ցմրան կը պահեն :

Բուսոց պարտէզն անէն փոխադրեալ մարդոյ
կղկղանքով կը պարարեն :

ՊՏՈՒՂՔ .—Պաղոց մէջ նշանաւոր է խաղողն , զա-
նազան տեսակ պատուական թութն , յորմէ չեն գի-
տեր պատրաստել փաստեղ եւ այլն , ընկոյզ , կայ
նաեւ մանր խնձոր , դեղձ , սալոր , նուռ . խի
տանձն , սերկելիլն եւ կեռասն նուազ եւ վայրի են :

ՄԱՂԻԿ .—Զէյթունի մէջ ընտանի ծաղիկ չկայ ,
միայն լեռներն ինքնաքոյս վարդ , Պէրուլթ լեռնէն
ալ կը բերեն մի այլ բոյս ՄՈՒՇԿ անուն երնջակա-

ձեւ եւ ընկուղաչափ , մէջ տեղն սպիտակ եւ եզրն մանիչակագոյն , որ յիրաւի մուշկ կը հոտի :

Ընդհանրապէս խօսելով՝ երկրագործութեան այս մասերուն մէջ նախնական ծանօթութիւն անգամ չունին եւ չեն ուզեր բան մը կատարել :

Ածուոց աշխատութիւնն կանայք իւրեանց յատկացուցած են , բաց աստի կը մասնակցին այդեկըթոց :

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԿԵՆԴԱՆԻՔ

ԱՐՁԱՌՔ. — Ի չգոյէ արօտատեղեաց սակաւաթիւ եւ վտիտ են , մանաւանդ ոչխարաց բազմանալուն արգելք եղած են ապառաժուտ լեռներն . ուստի , ընդհանուր Զէյթունցոց կերն այժն է , նոխազն ընտիր եւ առատ է : Բեռնաբարձ կենդանեաց մէջ տոկուն եւ յոյժ լաւ են ջորիներն , կայ նաեւ էջ , իսկ ձիոց թիւն յոյժ աննշան է , հարուստներէն մի քանին միայն ունին :

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏՔ. — Գլխաւոր արհեստն է ոստայնանկութիւնն , որով իրենց ճերմակեղէնքն եւ քրձեղէն-

քըն կը պատրաստեն, երկաթագործութիւն՝ սահմանափակեալ միայն երկրագործական պարզ գործիքներու մէջ, ներկարարութիւն, պայտաշինութիւն, կօշկակարութիւն. կան մի երկու արծաթագործ եւ երկու գինագործ, մին հայ՝ եւ միւսն տաճիկ, որք՝ հին դրութեամբ հրացանի եւ ատրճանակի փողերէն զատ միայն ստորին մասերն եւ դաշոյն կարող են շինել. իրենց տնակներն շինելու չափ հիւսնութիւն եւ որմածութիւն, գինեշինութիւն եւ օղեհանութիւն, որոց ամէնքն ալ նահապետական դրութեան մէջ են:

Ապրուստի գլխաւոր միջոց ընտրած են ջորեպանութիւնն, հովուութեամբ պարապողք եւս կան:

Կանայք սակաւ ինչ շերամ կը սնուցանեն հակառակ թիւենոյ առատութեան:

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Արտադրեալ վաճառաց առաջինն է թարմ խաղողն, երկաթ, զոր չորս ժամ հեռաւորութեամբ Պերութ լեռան հանքէն կը հանեն եւ որոյ վաճառականութիւնն տարածեալ է ի Գերմանիկ, յԱյնթապ, ի Բերիա, յԱտանա, ի Կեսարիա, ի Սեփաստիա եւ ի Տիգրանակերտ, բայց սոյն քաղաքաց հետ վաճառականական յարաբերութիւն ունեցողներն միայն երկու հարուստ անձինք են, այլք ուղղակի ի Գերմանիկ կը տանին իւրեանց վաճառքն, ընտիր չամիչ՝ նուազ քանակութեամբ, այժեմորթ եւ մեզր, զորս նոյնպէս կը վաճառեն ի Գերմանիկ:

Շահաբերութեան արդեւքն են ծախք ճանապարհի եւ դժուարութիւնք հաղորդակցութեան. կան այլ եւս գլխաւոր պատճառք:

փոխանակութեան ընդհանուր վաճառքն են թարմ խաղող, զոր ուղղակի Ալպստան կը տանին փութով եւ կը փոխանակեն ընդ ցորեանի. չամիչ, ռուփ, երկաթ՝ ընդ բամբակի եւ ծխախոտոյ, զորս կը փոխանակեն յայլուր:

Ներածութիւնք են ցորեան, առանց որոյ անհնար է ապրիլ իրենց լուրիս, բամբակ, եւրոպական կըտաւեղէնք, երկաթեղէնք, Գերմանիկի աճառ, քարիւղ, ձէթ՝ որ չամիչի համար կը գործածեն, փերեղակեղէնք եւ մրգեղէնք:

Յարարերութեանց եւ գործողութեանց ուղիղ գիծն է Գերմանիկ, որոյ վերայ մի միայն Զէյթունցի ջորեպանն կը բանի:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆՔ

ՈՐՍԱՅՈՒՄՆ ԿԱՔԱՒՈՅ

Այս թռչունն՝ որ առատօրէն կը գտնուի Զէյթունի ապառաժուտ լեռանց մէջ՝ է խիստ արթուն եւ զգոյշ մի հաւ, նա ոչ միայն յոստս ծառոց չի հանգչիր եւ կը դիտէ ամէն շարժում ի հեռուստ՝ այլ եւ մարդոյ եւ կենդանեաց քայլերու թեթեւ մի ձայնն եթէ առնու՝ խկոյն կը թռչի եւ եթէ իւր խիստ մօտն պատահի ու եւ է արգելիւք անտեսանելի իրեն՝ անմիջապէս թռկերու մէջ կ'աներեւու-

Թանայ, զոր դժուարագոյն է դտնել. ուստի, զայն որսալու միակ միջոցն է դարանակալութիւնն եթէ որսորդք անկարող են Զէյթունցւոց պէս թռչելու տտեն դարնել զայն օդոյ մէջ:

Զէյթունցիք իրենց կախինն (կախին, տուն պահ-
ուրտելու) օր առաջ քարակոյտ տեղեր կամ արտե-
րու մի կողմն քար քարի վերայ դնելով կը բարձ-
րացնեն մինչեւ մէկ կամ մէկ ու կէս մեթր ըստ
տեղւոյն, որ կարենայ պարունակել իւր մէջ առ
առաւելն երկու անձ. յետ այնորիկ առ ժամանակ-
եայ կը գոցեն ի ներքուստ մի քանի ծակերն կտաւոյ
կտորովք եւ տերեւովք, զորս իւր պատուհան կը
թողուն յամենակոյս:

Որսորդն՝ վաղ քաջ ընդ առաւօտն կը մեկնի
տնէն եւ կը փութայ անթրունդս սաքրել իւր
կախինի մէջ, ընդ իւր ունենալով օրուան պաշարն
ու հրացանն. չժխեր անդ եւ ոչ խակ թեթեւ շար-
ժումներ կընէ երկնչելով՝ արթնցնել խորամանկ
թռչնոյն ու շաղրութիւնն եւ անհամեմատ սրատե-
սութիւնն: Ի ծագել արշալուսոյն՝ կաքաւք կ'սկսին
ասպառաժուտ լեռներն ու ձորերն իրենց կրկնա-
ձայնիւն ընուլ եւ հետզհետէ տարմ տարմ իջնել
արտերու, այգիներու մէջ եւ կամ դարերու վերայ,
ուրանօր արագոտն շարժումներէ յետոյ հարօրանալ,
խակ կախինի մէջ սաքրեալ որսորդն՝ որ մինչ յայնժամ
իւր անկենդան դիտող էր ծակերէն՝ ի մերձենալ
նշաւակին՝ հրացանի փողն կը հանէ ծակէն դուրս եւ
կը կրակէ. յաջողակներ մէկ հատի վերայ կը դժկա-
մակին կրակել այլ կ'սպասեն որ խմբուին եւ վասն
այսորիկ կախիններու մօտ տեղ տեղ ցորենահաս

կը թափեն եւ տալա կը կրակեն . մէկ հարուածով 6-7 հատ որսացողներ կան :

Սեօֆիւնի (կը նշանակէ տեղափոխութիւն թռչնոց) ատեն որ ամէն տարի կը պատահի փետրուարի մէջ՝ կաքաւք երեք օր անընդհատ եւ յոյժ մեծ քանակութեամբ Զէյթունի վրայէն կանցնին , բազում անգամ յանցս իւրեանց անկանելով ի բնակութիւնս , զորս աղայք կենդանւոյն կորսան : Յաւուրս յայտոսիկ բազումք որսի կերթան եթէ մեծ պահոց մէջ չ'պատահի , որոյ վասն բազում բարեմաղթութիւնք կը լինին , եթէ ընդհակառակն մեծ պահոց առաջին եօթնեկին մէջ պատահի՝ Տաճիկք միայն կերթան :

Շրջակայ գիւղացիք քղոյ թակարթօք կենդանւոյն կորսան եւ կը վաճառեն հատն 30-40 փարայի , ի սոցունց ընտրելագոյնքն որոշելով՝ վանդակներու մէջ կընտելացնեն որսի , որոց ձայնէն այլք փութալով կորսացունին , սոքա կը կոշուին որսորդ կաքաւք :

Բաց ի կաքաւոյ կայ նաեւ հօփալ , մեղուաթռչուն , սարեակ , արտոյտ , վայրի սոխակ եւն . այլ ոչ առատ որպէս առաջինն եւ զորս որսալ չեն հետամուտ :

Իսկ վասն վայրի անասնոց որսացման մասնաւոր փափաք չունին միայն ի հարկէ կ'սպանեն արջ , ազուէս եւ այլ փնասակար կենդանիք , որք զայդիս կաւերեն . գայլն եւս սովորաբար որոգայթիւք կը բռնեն :

Ձ Կ Ն Ո Ր Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ձկնորսութիւնն ի Զէյթուն յատուկ արհեստ չ'լիարժեք մը չէ , երիտասարդք ոմանք երբեմն իրր

գրօսանք կորսան զայնս : Նախ՝ ընկերանալով կրնտ-
րեն գետին մէջ մասնակի խոր տեղեր եւ սուզելով
յատակն՝ ձեռօք կը յափշտակեն եւ կը նետեն ար-
տաքս :

Եթէ առատութեամբ որսալ փափաքին՝ որ
առ ի չ'գոյէ մոյ կը հարկադրին առնել, կը բանան
թարփեր եւ յերկուց կողմանց փշալից ոստիւք կ'ար-
գելուն ձկանց ընթացքն, ապա մանրեալ «նպալըգ
օթու»ն (դեղ զձկունս թմբրեցուցանելոյ) կը թափեն
ջրոյն մէջ, զորս կը թմբրեցունէ եւ ընդ ելանել
նոցա յերեսս ջրոյն՝ կը հաւաքեն :

Զէյթունի արեւմտէն անցնող գետն միայն ձուկ
կ'արտադրէ :

Գ Լ Ո Ւ Ն Ժ Ե.

ՆՇԱՆՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Գեղիցեն (եկեղեցին), եւս սլաշխոյ հարսնըքնիրու
միջ, եւս եօր ուր դաշապալիս կինոյ(*) իրինքէա

(*) Զէյթունցոց լեզուա գրուած մասանց դիւրաւ ըմբռմանն
համար վեր ի վերոյ դիւրութիւն մը տալու նպատակաւ կը ծա-
նուցանենք թէ՛ սովորաբար բառից վերջի վանկերու մէջ ականջաց
ծանրալուր եկող «ն» տառերն իբր «ն» եւ «ն» տառերն «ն» հարկ
է ընթեռնուլ. բայց սա՝ ընդհանուր կանոն մը չէ ամէն բառերու
համար եւս : Դարձեալ Տանկերէն սովորաբար կամ աղաւաղեալ
ինչպէս նաեւ ռամկօրէն ասացեալ բառերն ըստ կարելոյն այլ
գրով որոշած ենք զորս՝ նոյնպէս եւ ամբողջ տեղական լեզուաւ
աստղութիւնք՝ դիւրաւ կարեն վերծանիլ եթէ փոքր ինչ ուշադ-
րութիւն ըլլուի :

Հէօն գըտնըվըննը՝ իրկա կնկտէաքը՝ շախոյ էնիլէօվ միկ միկու կիսին (կըսեն) — հո՛ւօ լը քըլն ձիւր աղջկինը տըղիկոնըս կուտո՞ս, էնէա կիսէ — ես կուտոմ ես չիմ խոյ (*), քիւննէ կիսին թը հազոր բարը, ձիգ չիտոմ օմ (ո՛ւմ) պիտի տոմ: Շէօօը (խօսքը) ինտէս կը մոնոյ. իբր ընկից ըսկըվըն (հեռանալ) ու ամին մորդ իրինց տոնը իրթոյ՝ կընըկը տոնը կինոզնուն կիսէ — միւր աղջկինը ես պօլուզը քոլուն (քիւնն) կընըկը ուզից չի՞րք էնինք, ընիրէա (անոնք ալ) կիսին — չա՛ (ո՛չ) չէնը (չըլար) ես Ասբոժ խայիրու դիւմէք էնէ:

Տըզըն մէարը ու պոպը էաս Ասբոժ խայիրու էնէ շէօօը լըսիննը՝ կամոց մորդ կու ճամբին նիշոն տալոյ համոր. աղջկընըն դըհը (կողմը) կինուզնըն իբր ասին թը հրամիցէք՝ կիւլին կուզոն էաս քիւլուր (քաւիւր-այսպէս):

Ն Ի Շ Ո Ն Տ Ա Ն Ը Լ

Տըզըն պոպը կու ճովոյ տէրտէրը, մատնը մը ես քանը մը խկի (քսան զուռուշնոց) կուտոյ տանիլոյ համոր, խըսըմտոցնէ էալ քանը մարդըկ մեզր, հարվոյ (հերվա) ինկէզ (ընկոյզ) չամբչ, շապրապո (շապրեպի) պախշիշ փարոյ կառնուն միկտեղ՝ կուրթոն տէրտիւրիւշը հիտը աղջկընըն պապուն տունը:

(*) Ես իրկու իրկու հիգէօք կընըկ, ես պասպիրը (հայրերը) միկ միկու հիտ մուհոպէք նըն նը՝ կիսին, աղջկին մը ես պօլուզ մը ունցնոմ նը՝ քու պըլըզըն ես աղջկընըն կուտոմ:

Իբր իրթոն նը՝ կու տխանուն ուր քչիծիրէն չիւր (մինչեւ) ամպոյրը (ամբար) փոռմոն է (փռուած) ճուղ, էօնիւր վիրէանէա ֆէշո, տուշոկ, ֆիւխնուէ խալը. մոտոծը կիւխ տէրտէրը կիսէ «Ողջոյն ձիգ» հիտը կինուղներն էա «Բարկոն» (բարի երեկոյ) (*) ընիրէա ուտոց վիրոյ կիւլին օ՝ հօ, օրհնէա տէր բարէօվ, բարէօվ կիսին. կանցնը տէրտէրը քըշըն մէօտ կու տըստը (նստի) հիտը իրթուղներէա քոփն ի վէար կու շարվըն կու տըստըն. նիւրիւկէն (նորէն) տոնը տէրը մէջքը կեռիլէօվ (ծռելով) խոնարհութիւն կենէ ձեռքէօվ ու կիսէ «Օրհնէա տէր» — «Բարկոն» :

Էան վոխսը կուտոյ ճովոյ տոնը տէրը, քեռմէարը, հուրքիրը (հօրաքոյրը) ու մուրքիրը (մօրաքոյրը) դրացնիրը ու քեռետէաքը, կիստէաքը (հօրեղբարքը) իտէ ճիւրը ալային (ամենքն) ընիրէա կու շարվըն կու տըստըն բարիւ տալէօվ :

Իալ կու դեշին (սկսիլ) պատուել, առջէ տկաւան միյմիկ ճիկարոյ (սիկար) կուտոն, իտքը կու բիրին արոխ (օղի) գինէ (գինի). սինիքը (սեղան) կուտոն շամիչ, ինկէզ, մեղրը, չուղտոկ, թուզ, լսցման քաքով (փորը լցուն կաքաւ) կիւսէօղ (աքաղաղ) մեզե կնիլոյ համօր :

Քաքովը, կիւսէօղը, մըսը՝ գինոն մեզոյ. մեղրը թուզը, շապրապեն, ընկէզնէա արախըն մեզոյ կենին :

Տէրտէրը շէօտը կու բանոյ աղջկընըն պապուն կիսէ. — է՛հ տունը իգուղըն (եկողին) չին ասը թը

(*) Սովորաբար երեկոյեան դէմ կը լինի :

չուրօւ իկիր, Տէրը կամինոյ, էթը Ասրոժ շայեխ (շայըզ) տխնունը՝ աղջկինըդ էօսինց (ասօնց) սը-
լըզըն տալոյ համօր զըրըցք (զրոյցք) էրիրէք, ին-
տէաս է նը՝ օն (առ) օսոյ (այս) նիշոնը. էնէա առ-
նիւոյ մըտք ունցնոյ նը՝ տէրտէրը առչիւը կու դնէ
նիշոնը, կուրհնէ, կուտոյ քեռմէօրը՝ Էա մինձ
մէօրը, էնէա պապուն ձեռքը կուտոյ, էնէա կու-
տոյ կոնկոնը (կնկանը), էնէա աղջկընըն մօտը (մա-
տը) կու դնէ մատնըն (մատանին), իսկինէ գոլոխը
կու կարէ. Հէօն կինուզնըն կիսին «Ասրոժ խայըր-
շու էնէ, խայըրու էաս էղիրէ, էսիկից էռէաջ տոսը
հիգէ ուզից ըմմը՝ ճակտըն գէրը (գիրը) ինտէաս
էղիրէ » :

Էան ատինը նիշանոժ աղջկինը տէրտիւրիւջընէ
կու դեշնէ աշայուկն ձեռվընըն կու պագնէ, ընի-
րէա կիսին խրատիլէօվ էթը « Ասրոժ չէօնիւրք տոյ,
խիւք խմաստուէթըն տոյ. խըլանը լըր (խեւանի լըր)
դուգում, էվէա կութոյ ամպրըն առջիւը կու կանը
(կանգնի), իրինքէալ կու ըռըհարնըն կու դեշին
չէօն տօլ. աննոխ (աննազ) տխնուս ուր տոնտէրը
էջվէ կենէ (աչք կ'ընէ), ընիրէ կու բիրին սուփէն
ստոխ, գինէն, միկէալ մեզեքին կալնիլէօվ (կալ-
նուլ) կու փոխն. իրիցը (երէց) սուփրեն կուրհնէ,
կու դեշին հոց ուտիլ, չը դեշնոժ իփեն՝ տէրտիւ-
րիւջը ձէառքը գինէ մը կուտոն, ինքէ կիսէ
« խայըր նը (խայըրը ըլլայ) Էալոլ տընվըտ
չէն, Ասրոժ շայիւ ձեռվոնուդ պակաս չենէ ու ին-
տէա էօր տոյ » ու կու խումէ, խումիլոն խօքը խե-
շը (քովը) կինուզնըն « օշնա տէր, Ասրոժ անուշ
էնէ » կիսին. էալ կարգէօվ միկ միկ հոտ կու դեշ-

նին կու խուսմին չիւր սուփրեն կալնուն, ըմբ է-
րիկ մարդըքը իզոտ սեղոն կու տըստըն ու իչկի
կու խուսմին՝ կընկտէաքնէա ի զոտ կու տըստըն ու
չին խուսմի, մինէավիւր ապուր (*) իրիւյ վիրոյ է
բանիրը: Ըմբ ասուերնէա էաս է, մըսէով սողան-
լը, օռուղ ապուր, միջէով փութոյ, հում փութոյ,
տապկոծ հաւկըթ միդրէով, պասքըմոյ, տումոյ.
սոք նը նը՝ (եթէ պահք լինի) սիսեռ, պօտուղ,
հոսիլսոյ դեռ շատ քելուր նը: Ուտիլն սօնիրոյ
սուփրեն կու ծալին, տէրտէրը կուրհնէ տէրունա-
կան աղէօթքը ասիլէով. կուգոյ նիշոնոծը կալնուն
իփեն իրիցուն ու միկէլնունէ ձէառքը կու պազնէ,
ընիրէ կիսին « Ասրոծ շէօնիւրք տոյ » միկ միկ ան-
կարոյ էա կու խուսմին ու կիլլին (**). Կիլլըն իփան
իրիցուն մինծ քեշկիր մը ու հիտը իրթոզնունէա
միկ միկ փսոյ (փսե) կուտան:

ՆԻՇԱՆԾԻԻՆՅ ԻՐԹՈՒ

Ուրբոթ առաւտուն կտորճ մորդ մը կու ճովոյ
նիշանծիւցին տէրը, կիսէ թը՝-միր թողը (թաղը)
քիւմ, միկէալ թաղիրունէա միր բարիկոմ փոլուն
(փիլան) մորդըք ճովոյ թը՝ միր խըսըմը (անուն-
նէա կիսի) նիշանծիւց կորթոյ, հրամիցէք—: Շա-
րոթ առաւտուն տըղըն դըհը կինուղըն կու հազըր-

(*) Ընդհանուր առմամբ կերակրոց ապուր անուն կուտան:

(**) Զէյթունցիք կերակրէն 5—10 վայրկեան յետոյ հրաւիրա-
նաց տնէն կը մեկնին:

վրն շոտ մը օռուզ (*) խփիլոն խոքը տալոր մը կու
զենին , էնէա կիփին . օռուզ տպուրը սըղընձըն մի-
միջը կիցոժ իփիկան անկղիրը (ֆուլքլարը) շաքո
մը կ'անցնին՝ իրկու հիգի է կու շալկին , քանը մը
լըարը մեղրէա պարապոր կու հազըրին . տալորնէա
լեկեկին միջը կու դնին , էանէա մէօտ խըսըմ սը-
լըզ մը գուխոն վիրէան կու շալկէ , քիւմ հալխըն
(խալզ) ութկիլոյ հոց , կարոս մը գինէ , ճարոյ մը
արօխ ամըննըք նէ հիտվըն կառնուն , կընըկ ու մար-
դըք դալապալըխէօվ կուրթօն աղջկընենց տոնը :
կուրթօն կու տիսնուն իւր եա տինիր մը եա տոն
մը (կամ տանեաց վերայ եւ կամ տան մ'առաջը)
փոռոժին ճուլ , էօնիւր վիրոյ ֆէշոյ , տուշոկ , կար-
պիտ , խալը . բարիւ կուտոն կու տըստըն : Ուր-
բոթ քըմըն (քանզի , որովհետեւ) միկ մը մարդըք
ճովոց՝ ընիր էալ կամոց կամոց կուգոն բարիւ տա-
լէօվ կու տըստըն :

Առջէ տպկան (տպի) միկ միկ ճիկարոյ կուտոն ,
նեռկիլոյ (նարկիլիկ) կու բիրին , էալ տիսնունս իւր
սինիքը մեղրը լոցոժին շապլապո , շամիշ : Օռուզա-
պուր կու բիրին մեզոյ էնիլոյ համոր կախընկէօվ ,
պարտախէօվ գինէ , շիշեօվ արօխ կու շարին միջ
տիղվըն . կու բեժնին արօխ , գինէ : Արօխ եա գի-
նէ խումէօլ մորդը իրից նը նը՝ (եթէ լինի) տող
(տաղ) կիսին , թը աշխարհը նը նը՝ էվէաճք ("

(*) Աղջկընըն դըհը կինուզնըն օռուզէօվ ֆուֆքոյ , սօղանը
կիփին :

Ինտէաս հարկի տաին կուշնոկը կանուխ ինտիրկացուց տաինը
կու ծիծին , իժմը (եկեղեցին) քեզ կենին :

եւ է աշխարհային երգ այսինքն խաղ . շարգի) կա-
շին . սողջիքը (սազ չալան) սող կենին . իբր միկը
արոխը եւս գինէն ձէառքը առնը նը՝ կու դեշնէ կի-
սէ « օրհնեա տէրանց (օրհնեցէք տեա՛րք) , էդ-
բարաց կենդանութիւն , էաս հարկ նէ խայլու նը ,
ունցնուղըն skunkouք , շունցնուղունէա Ասրոճ
տոյ » խումիլոն խաքը տէրտէր նը նը՝ « օրհնեա
տէր , անուշ » տէրտէրէա չի նը՝ « անուշ » կիսին է-
նէա ձէառքը ճակտոր գընիլէօվ « koulխրդ շոտ »
կիսէ : էվիէյի վոխս ինտէաս ուտիլէն ու խումիլէն
խաքը կու կալնուն , էալ կու բիրին սուճրեան կու
քարին (ձգեւ , դնեւ , նետեւ) ապուրնըն կարգէօվ
կու շարին (*) . կու դեշնին ուտիլ , ուտիլնիփեան
գինէ կու բեժնին . սուճրեան կալնիլոյ մէօտը պը-
լըզ մը խման (եփած) սալորը քիչ քիչ ալայու-
նէա կուտոյ , էնէա ուտիլոն խաքը՝ իրիցը սուճրեան
կ'ուրհնէ շոց քիվուր (որպէս) էսէաջէա ուրհնից ,
կու վըրցընին : կալնիլոն խաքը միկը սինի մը կառ-
նու սըրէօվ (սըրա իլե) կու բիլլէ (պըտըտիլ , շըր-
ջիլ) միջվըն կու քարին խսկի (ոսկի 5, 10 եւ 20
ղուռուշոց) մեհիսիոյ , ամին մորդ իր ունցոճ կա-
րողութոնը դասուր (**) դընթիկ մը կինալոն սողրոյ
սաղըմըշ կուենն :

Տափորը շալկուղըն աղջկընըն մէարը դուքնույէ

(*) Գերակրոց ամէն տեսակներն մէկ անգամէն սեղանի վրայ կը
շարեն սովորաբար :

(**) Երկուստեք անդ գտնուող բազմականներէ հաւարեալ սոյն
դրամն նոյն պահուն փեսային կողման կը յանձնուի , զոր բասն
ղուռուշոց ոսկիներու վերածելով խօսեցելոյն կուտան . նա ալ
ճակտէն շարքով մը կը կախէ :

խառն մը կուտայ : Ընկիկից իլլալըն խաբը տըղըն պոպը պատուաւիւր մարդըքը իր տոնը կո ճովոյ , հէօն մինծ մարտոֆ (մասրաֆ) կինէ , հոց կո կըրցընէ , կուրախնոն , կուտին ու կու խուսին . Ընկիկիցէա կիլլին կուրթոն ամին մորդ իրինց տոնը :

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՐՍԱՆԵԱՅ

ՊԱՊՈՒ ՀԱՆԴԵՊԸԼ

Հարանըքէն իրկու իրիք շարօթ էռէաջ տըղըն պոպը կու ճովոյ միկ քանը պատուաւիւր մարդըկ , տէր-տէր մը , խըսըմնունէա քանը մը հոտ , կու ճոմբէ աղջկընըն պասգուն տոնը : Իբր իրթոն նը Ընիր (նոքա) շոտ մարտոֆ (մասրաֆ) կենին քիվուր քիվուր (քաւուր քաւուր—տեսակ տեսակ) ապուր-նը կիփին . առօխ , գինէ կու հանին , կուտին ու կու խուսին : Սագջի (սագ չալան) կուտոն բիրի , շամպուրոյ կու բըրթին , էվէաչք կաւչին : Շոտ կինալոն սօնդրոյ շէօքը կու բանոն ու կիսինթը Տէրը կամինոյ նը՝ իգէօղ շարթոն Հարանըքէ կուգինք հաւասը (հաւիկա-փափաղիլ) չիրք կոսէք , Ասուծու հրամանէօքը հախլունիս (հագգըմըղ—իրաւունքնիս եղող հասնցու աղջիկը) արւէք ու չիրքէա պըտի ուգիք նը ուգիցէք : Ընիրէ (անոնք ալ) կիսին , չինք կանը տոյ աս տարը , չուրու եուր (վասն գի) աղջկինը պըտիկ է(*) գիւ վոխսը չէ : Շոտ խուսի-լոն սօնդրոյ էվէա կակուղութենէօլ կուգին : Աղջկընըն պոպնէա իրոծ լաթիրուն կուրոյ (կօրե) վիարոյ կուգէ հինգ խկի (ոսկի) , տոս , տոսնըհընգ

(*) 12—13 տարեկան կամուսնացնեն :

զըգ կուշիկ, տըղըն դըրմըզ (զըրմըզը) ապո մը, էզըրթոցը միկ միկ զըգ (զոյգ) կիւլիւլեֆթիկի (կարմրագոյն) կուշիկ, դիրացնիրոն քարոն (քապոն) աղլեխ (կաղլըզ) (Այս պահանջներն աղջըկան ծնողաց կողմէն կը լինին եւ անպատճառ կ'ստանան փեսացունին կամ նորա ծնողաց կողմանէ, մանաւանդ հարսին համար նոր շինուած հագուստին փոխարէնն. եթէ չվճարուի՝ ամուսնութիւնն ետ կը մնայ — շահու պատուական աղբիւր մ'է իրենց.) ըմը՝ հարոստը չոտ՝ աղբոտը քիչ քարոյ կոտոն. իտէ ճեպկան (վերջապէս) սըրտվոնոն կենին (*) (կամքերնին, խնդիրքնին կը կատարեն) Ասրոծ խայլու նը ասիւէօվ կիլլին ու կորթոն. էաս իրթալոն կիսին պապու հանտըօլը:

Էաս տէրտէրը ու մարդըքը իրր տոնը իգոն ասըն թը՝ զըրըցք տըվըն աղջկին տալոյ՝ էալ կու գենին հազըրվալ (հազըրքանմազ) լաթեր կարիլ, փիլինը աղջկինը եւս սօլուզը նիշաննը լաթիր հազըրիլ կու գենին շիւր կարգըվիլոյ վոլս, փիլինէա եւս պեզիրէն (պազար—չուկայ) եւ Միրիաշ (Մարաշ քաղաք, Գերմանիկ) կորթոյ պիտք իղոծ բանիրը կառնու, հանը (կանի—այսինքն) թէագվիւրէն (թագաւորին, այսինքն փեսային) ու հարսըն ու պիւքիւն խըռանքին (Զէյթունցւոց լեզուաւ խօսանքա-ընտանիք) լաթիրցու:

ԻՐԿՈՒՇԱԲԹԸ (Երկուշարթի օր)

Իրկուշարթը առաւտոն կո գենին հազըրվալ, օ-

(*) Պահանջմանց վրայ կը համաձայնին:

առաջ հընտրիլ, ամին պատրաստութիւն տխնուլ, իրիքշարթը էա կո գեշնին փեռէ (փայտ) իր-
թալոյ, կու հաւգըվան 30-40 տկիղանլը, խեղվըա
շաղըքնըն ու վարտըքնըն կու հաղնըն, էօնիւնց
վիրէանէա դուրլու (դուրնու) ու 3-400 դուրուշի
դըւմըգ ապո, կո խեթին արծըթէ գըզիրը (մի զոյգ
արծաթապատ ատրճանակ) մէջքիրը, արծըթէ սա-
չախնըն վըզիրը կանցընին, էաս սաչախնոււն ամին
միկոն ծէարը գողձ գողձ արծոթ կու կինոյ, կու
կապին արծըթէ դեմենին (գամա-դաշոյն) քուվիրը,
կանցնին արծըթէ քիվանիներն (քիվեկնի) բէճիրը,
կառնոն գինէ, սոթիս, մեզոյ, կու քեշին կեղիւկ-
տէաքը (կեղիւկ-բեռնաբարձ շորքոտանիք) կու
ձենշին հաշեհ, հարսնից փեռէ. իրը քաղըքն գէմը
անցնըն՝ կու փոխին (կրակեւ) տապանչալուքը է-
վէաչք աւշիլէն, տապանչալուիցը սաչախնըն ան-
դուռ անդուռ էնիլէն կուրթոն, էան վոխսը տա-
պանչանոււն ձէանը լըսուղնըն կո հարցնին թը էաս
ձէանը շիրք է. կիտին թը՝ փոլուն մարդոյ պըլըզըն
հարսնըց փեռէ կորթոն: էան վոխսը շոտ մը տկի-
ղանլըք առչինիրը կիմի (կիպի) կու հաւքըվան, կու
հարգըրվան (զարգարուիլ) ու սիլանլանմըշ կուռնոն,
ջիրիքը (ջորիքն) կու քեշին էօնիւնց խաւը կու
հասնըն միկտիղ էվէաչք աւշիլէն, տապանչալուիս
փըսթիլէն, խող (խաղ) հանիլէն կուրթոն, փեռե-
րը կո բառնոն ու խո կո դառնոն, իգոլըն իմիան
նիւրիկէն տապանչալուիս կու փոխին էվէաչք կաւշին.
իրը քաղըքն մուռնոն նը՝ ձենիրը կու լսին գէմ
կուրթոն. մուռնոն նը՝ միկ միկու գէմ տապանչա-
նիրը կիւնկ կիւնկ կու փոխին շխը միկ միկի խա-

«ընտովան, հէօն էվէա շոտ էվէաչք կաւչին, կեօ-
լիւկնիւն 2—3 պըլըզը հիտ քաղոքը կո ճամբին, ի-
րինքէ քաղքըն դէմը նիշոն կու անկին ու կու քա-
րին, իւվ իւր նիշոնը կըպցընէ նը՝ փաւոյ կո հաւ-
քին, պախշիշ կոտոն:

Հարսնըցը տէրը մարդ կո ճամբէ՝ փեաէ իրթ ուղ-
նըն տոնը կո ճովոյ, կու արսարն արոխ, գինէ,
սուփոյ կու բիրին, կուտին ու կու խուսին. էալ
տոնը մարդըքը պակոս շին նը: Էաս (երեքշարթի)
իրիկոնը 10—15 կընըկ կո հաւգըվան կու շաղին 3
—10 լիկեան հէաս, ու հոց կիւրին:

Հ Ի Ն Գ Շ Ա Բ Թ Ը

Հինգշարթը առաւտոն կանուխ հարսնըցը տէրը
իւվ իւր Ազապպաշը (*) պըտը նը նը՝ պոխշիշ մը
եանը (եանի) արծըթէ՝ ճապանչալուխը սաչոխ մը
եա կիւլիւշեփեկի կուշիկ մը կու ճամբէ, էնա շը-
նէօրհակալութ ենէօվ կոգոյ կո ճարդըրվը, կո հազ-
նը 5—400 դուրուշը դըրմըզ սպո մը, վիրէան կո
կաօյէ սըրմալու (**) քթանէ աղլեխ մը, էօնիւվէօք
Ազապպաշի նըլը պեղլու կուներ, ծիւցը կունոյ պե-

(*) Թէազվիւր, Թէազվիւր էզրէար, Ազապպաշը: Պըտը կար-
գըվընը էօնիւր Թէազվիւր եա Թէազէազվիւր կիւրին. իւվ իւր ու-
ղիւրդ անոնը ճովոյ նը՝ մինձ պատիթ կոտոն, տափօր կոտոն առ-
նու: Թէազվիւր էզրէարը էան է իւր խըալմեւն եա դիրացնի-
րուն միկը պըտըկ պօշուգ մը կենին: Ազապպաշին էանէ իւր
խըալմեւն եա դրացնիւրուն միկը քէլիղանլը մը կունոյ:

(**) Կեզմ:

զորք ծախվէօղ խաշախոյ զարոյ (խաշգա ֆերհ —
կէսը խմորեղէն) իւզ իւր հարանըքը քեֆլուֆ պըտը
էնը նը (պֆաի հրաւիրէ) էօնիւր հոտ մը կոտոյ ու
կիսէ « skamkoupe քու պըլըզընէա , հարանըքը հը-
րամմէ » :

Ո Ւ Ր Բ Ո Յ

Նիշոն ուրնիւ , հարդուրում , բեազվար վալոյ , հալա
ուրնեք , հորս հանրլ (առնել) պոսակ :

Ուրբոթ առաւտոն կիֆին 2—3 պըզընծ տակա-
պուր , 2—3 պըզընծէա էազցիւծ իւսպ , օռուզ
ապուր , սօղանլը ու շոտ քեֆլուր ապուրնը :

Խըսըմըն , գիրացնիրը ու քիաքիսն թազցըք կո
բիրին լիկկնէօվ ցիրին , պօղլուր , քարխան , օռուզ
ապուր , մարգար շոր , շամբշ , ինկէզ , օխսեռ , լը-
վիյօս , իւսպ , էլէր , մեղրը : Միշվի վոխս նը նը՝
կո բիրին խէազիւզ , խէօնծիւր , սէալիւր , նուռ ,
թուզ , սինկիփիլ , միշմիշ , գեզձ , կեռաս , շոտ քե-
ֆլուր միշվրնը : Կուսոն միջքվըն կընկաէաքը ին-
կէզ , շամիշ , շուզգոկ , վրնէրխ , շանքոր ու շոտ
բանիր , կուսոն միկմիկի մանաբրտոցը ու կիսին
« դուզում skamkoupe քիզէ » էօնիւր մէարնէա կիսէ
« քու արդիկոնն է » :

Ու իրր ճէաշք նը նը՝ հարանըցը տէրը խապուր
կո ճամբէ գանձապեաին թը գեզիցոն գոտը բոց .
կո ճոփն տէրաւրտոցը , տէրացուիրոն , կորթն
գեզիցէն կու հաւդըվըն , խըսըմն ու գրացի-
բուննէ պէտափէափիւր մարգրիկ , կու փոին աեզ , կո
շարվըն ու կու արտաըն , նիշոնը ու աղլիխ մէ շա-

մըշ քապախը մը միջ կո դընին ու աւոյ տէրտիւ-
րիջը առշիւր կո բիրին :

Տէրացուն կիսէ « Եւ եւս խաղաղութեան զՏէր
աղաշեացութեւն » , տէրտէրնէս « Որհնութիւն
եւ փառք եւայլն » : Կու դեշին « Նշանաւ ամե-
նայաղթ » շարականը , տէրացուն ծնծղէաքը կո ծի-
ծէ ասիւնիքէան : Սոնդրոյ « Սուրբ զԱստուածա-
ծին » շարականը ասիւնիքէան քապախ մը կո բիւլին
մարդկոցը միջ քարոյ կու հաւքին . տէրտէրը պա-
րանիշ մի կիսէ՝ փերեանէ տէրտիրոցը ու տէրա-
ցութիւն կո բեժնէ , աղլրիւքն շամբընէ պիւքիւն
մարդըքնէ կառնուն ու մանտրոքնէ կո խըլըրըշտին
թը՝ շխառեօք միգէ նը . իտքը Ասրոժ խայիւրոյ է-
նէ ասիւնով կիւլին ու կոգոն տանը :

Ճ Ա Ր Գ Ո Ւ Ր Ո Ւ Մ

Քիչ մը իտքը տըղըն դըհը կինուղըն կառնոն
[կնիւրոյ , ճամպուրոյ , սոգ էնիւն , իւօշիակ խաղցու-
նիւն կորթոն աղջկընըն պապոն տանը , հիտօքն կո
տանըն հինոյ (հինա) Ազապապշին գոխոն վիրէան
ցիր մու մը կո դընէ էօնիւր միջ կո կինոյ կուշիկ ,
Էնիրէս տիրիր կու փոխն տեղ , կո շարօքն , կո
տըստըն , կո հանին սուփրոյ , գինէ , արօխ , կուտին
ու կու խաւմին , սազլիքը սազիրը կո կըպցընին ,
իւօշիքին կո խաղոն , շիրք ուր տարըն նը՝ էնէս
կասուն , բնիրէ տեղը կո դընին քոս մը ցիրին , քասի
ցըն մը , դոգոյ մը , սոնտը մը , ասիւր մը . հէօն կո
կասլին իւնիւր մը , վիրէան կո փըռին հարսըն , թէ-
աղվիւրէն ու թէաղվիւր իղրէօքը Լաթիրը ու ի-

բինք է կիւին կողմն. էսա իրթալոն կիսին ծար-
դուրում:

ԹԵԱԳՎԻԻՐ ՎՈՒՈՅ

Ընկից քիչ մը կինալոն սոնորոյ՝ պըղընծ մը ջոր
կո շողցունին կո հաքըվան տէրախրաւաքը ու տի-
րացուիքը, կո դնին լիկեան մը. իրր՝ թէազվիւրը
միջը մօտնոյ նը՝ ազապպաշին թուրը կո քեշէ դընէն
կո հանէ, թուրնը ու դընը խէաշ կիւմի թէազվիւ-
րէն վիրէան կու բռնէ, տէրախրնէն ու տէրացուիքը
կո ծիծին ծնծղէաք ու «Այսօր անճառ» շարակոնը
կիսին, թէազվիւրէ վիրէան բռնծրը տիղոցը պող
ջոր կուենոն. իրր էան իլէ նը՝ կո մօցընին թէազ-
վիւր էղբէարը, էնէա կո վոլոն, ըմնը ընիր իրից-
կինաւաքը ու կընկաւաքը կո վոլոն, լիկեանին մըջէն
ջոր նէ մանարօքը ըտվընըն կո վոլոն թը՝ skunkour
միղէ նը:

Ինտիրկոցք անցնը նը՝ էան թաղուն գեղիցոն
կուշնոկը կո ծիծին թը խթամէն քեզ իւլին, ու իրր
իւլին՝ հարանըցը տէրը միկ մը կու ճամբէ կո ճովոյ
տէրաւէրաւաքը ու տէրացուիքը. մինծ տինիր մը
տեղ կու վոլին, կո հաքըվան, խըսըմնուն ու դի-
րացնիրուն նէ պէատվաւիւր մարդը կու շարվըն.
էան վոլսը թէազվիւր իղրօրը պօսը կօտոյ բիրի
գինէ, սոթա. դընթիկ մը կինալոն սոնորոյ՝ սեղոն
կո հանէ ֆիյնիան տէրախրաոցը, մարդկոցը ու աղ-
քըտնոն, ուտիլոն ու խումիլոն սոնորոյ սեղոնը կո
կալնոն, ննրկիլինին շիշիրը ու պարսոխնըն միկ դըհ
կինին:

ՀԱՆԱԽ ՈՒՐՀՆԵՔ

Կու բիրին ճիրմոկ ծիրէարիւց մը կո գնին միջ տիղը, տէրացուն «Եւ եւս խաղաղութեան» կիսէ, աւոգ տէրտէրնէա «Օրհնութիւն»։ Կո դեշինն ցընծ- ղէաք ծիծիլէօվ կիսին «Այսօր երկնայինքն» շարա- կոնը, էասէա պապցընքն նը՝ աւոգ իրիցը պարանիշ մը կիսէ, Կո կարգոյ հալաւ ուրհնիքին աղէօթքը, թէագովիւրը, թէագովիւր էզրէարը ու ազասպաշին միջ տեղը կո կանըցունին։ Նիւրիկէն ցնծղէաքը ծի- ծիլէն «Որ զտիրական» շարակոնը ասիլէօվ կո ճար- դըրին թէագովիւրն ու թէագովիւր էզրէարը։ Լա- թերնէն կունը խեամբը, ուղանուն ծէարը փուն- ճուխվիւր (ծողիկ) շաղքը, վարարը, դուրլու, վի- բէանէա կո հազնը վանքըն վարդապետիննէ շուխո(*) մը, նիւր փեսա (փես) աղլիխ, գուար, թուրնէ ձէ- առքը։ Կո բիլլին, տէրտիրոցնէ կո գիշինն աղային մարդկոցը ձեռքիրը կո պագնին ու էվէ խովընքն կո կանքն, թապոխ մը կո բիլլին փարոյ կո հաւքըվը՝ տէրտէրնիրոն ու տիրացուիրոն կոտոն, Լաթիրէ ծիրէարիւցըն միջնէ շամբշ կո կինոյ էնէա՝ կո խը- ւրըըշտին, էվէա առօխ, գինէ խուսիլոյ կո դեշին, էալ կալիոշ կալիոշ շաղըրնը կունքն։ Ըմմը տոնը իլլինքը մարդ կո կինոյ առ ու ճուռ, ճանդաւոն (աղմուկ) իլլինքը կունքն։ Կընկատէաքը միկ գըհը, էրիկ մարդըքնէ միկ գըհը, կո խուսինն առօխ, գինէ,

(*) Փեսային կը հազցենն վանքին վարդապետաց միոյն հին և աղտոտ վերարկուն և՛ չ'գտնուի այո՝ քահանայի մը վերարկուն կը գործածուի։

կառնու միկը ձէառքը արօխ նա գինէ կիսէ «կեն-
դանութիւն», հարանըցը տիւրիւնէ՝ «Տունիդ չէն,
խաշլու նը հարանըք տէ.» թէադ վիւրինէ կիսէ —
«խաշլու նըս.» քէօվը կինուղներունէ — «Օրհնէա
տէր, էղրարաց կենդանութիւն, ունցնուղըն skw-
nkoսը, չունցնուղունէ Ասրոժ տոյ .» խումէ խըլաօը
նը՝ ընիրէ կիսին — «անուչ, Ասրոժ անուչ էնէ.»
ինքէ նիւրիկէն քեմալոն էնիլէն կիսէ — «անուչ
դէ-ի կինոսս: Ու իրր սահօթը 5-4 նը նը՝ դուրսը
տինիրը կու աընկըցընին լէօղ(*) մը, վիրէան կո
դընին սեան (սան) մը, կորոկ կո վառին, կո խա-
ղոն սինկ սինկ ասուէօղ խողը, վորցօվոն կո ցաա-
կըն, միկ միկոյ խալիվ կո վազին. իլումիկնէ իրիանէն
մուր ու էլեր կո քըսին, սեան մը խաշլոն ճօկ
վզիրը կանցունին կո խաղոն. աննօխ տիանուս իւր
արթամ տարթամ գիշիրը տապանչաշուխը կիւմպ կիւմպ
կո փախին: էվէա էաս ուրրոթ գիշիրը հարսըն
էղրէարը, հուրքէօր ու մուրքէօր մանտրտէաքը կո
հաւքըվըն՝ արղըն տոնը կորթսն, էաս իրթալոն կի-
սին «Ազիօթ տօլ». կիսին թը՝ կէսկէրէքին վիրէն
ժօլոն մորդ թուղ կանը, իրկու կախլոնք ջորէ ձէ-
առքը, զըգ մը քաքով կուզին, խոռու աղբըրէ մը
ջոր կուզին, բոնձըր տիղոց մը սիւխ կո կախին թը՝
բիւրնէտ (բերանովդ) խըլէ՝ — իլոք իլոք ճակտօր
կո դիպնոյ, իրկոնք կոտոն աղոյ (երկանիւ ցորեան
աղալ կուտան) ազապապաշուն թէ ձմեռ չէ նը՝
կէնէաչ հափճէօվ ու կէնէաչ սուխէօվ իուվրոյ
կոտոն չաղի ու կուտին, չիւր լուսնոյ՝ կո տըսաըն:

(*) Լող բար:

ՀՈՐՍ ՀԱՆՐԱ (հարս առնուլ)

Ու իբր կիւսէօղը խուսը նը՝ կո հազըրվըն, տա-
վոր կո զենին, մատող կենին, ապուր կիփին. դի-
րացնիրը էա, խըսըմնունէա մըս, ապուր կո բիրին:
էալ կուչնուկնըն կո ծիծին, պատորոգին իծամը կո
դենին, իբր լուսնուր մոանոյ՝ կորթոն հորս հա-
նըլ. հէօն տեղ կո փոին, բարձիրը կո շարին, ի-
րինքէա կո շարվըն կո տըստըն, ֆայուպ կենին,
սեզոն կո հանին առօխ, գինէ կո բիրին, կուտին
կո խուսմին, ֆոշեակ կո խաղցընին սոզ կենին.
հարսըն լաթիր նէ իրիցկինը կո շալիէ ըսիր (ասոնք)
առօխ, գինէ խուսմիլնիֆեան միկէալ քէօվը տոն մը
կո հաւքըվան կընկտէաքը. իրիցկինը՝ հարսըն լա-
թիրը կո հագցընը. լաթիրնէա էաս է պասմոծ
(պասմա) շաօղգ, դուքլու, էօնիւր վիրէան արլոզ,
չուխո, կարմր ճայրոն (*) ուտոց կիւլիւշեֆթի կու-
չիկ՝ էօնիւր միջնէա փարոյ կո դընին, իւվ իւր կու-
չիկը հանը նը՝ փիրեան էան կառնու: Գոլոխը կո
դընին խեափըլը ձԱԿՏԸ մը վից կափուն կտաւէօվ,
վէօզնիւց, 10—20 աղլեխ, քկվոնր քկվոնր 7—8
բիրնոց, ալայուեն վիրէան կո քարին հարտուժ
կեօզեալ մը, էօնիւր վիրէանէ սափոն (**), էօ-
նիւր վիրէանէ տատուռոկ մը: Էալ դորս սլիտը
հանին նը՝ էդրէարը ես խըսումնունէ կո գոն

(*) Տայրոն — տնուն հագուստի.

(**) Այս սափանէն Թերեա չորս Թաղի համար մէկ մէկ հատ
գտնուի. զոր ամէն հարսի համար փոխ կառնուն և կը հագցնեն
եկեղեցիէն մինչև ի տուն, մէկ մ'ալ հարսին Ա. անգամ լուսոց-
ուիլ գացած օրն:

դոսը կո վահինն ու կիսին ֆեյնիսոյ (այսչափ) աւ-
տարէօն (աւետարան) վսկոյ չիմ հանի, չիւր իւր
կիւլիւշեֆրէյի կուշիկ մը չի բիրէք. միկը կիսէ փո-
շուն մորդ 100 պէտք է վէաչք թուղ ավչէ, նե խե
չիքըրէ նը խաքըրնըն խօշ կենին, Հէօն տէրտէրը
թէագովիւրէն ու հարսըն քիչ մը կո կարդոյ. հորսը
դորս կո հանին, սանդըխէն ի վէար իջնոյ նը՝ Տե-
շիդանլըքը Տապանչաշուխ կո փոխին կիւլմայ կիւլմայ.
կո ճենչին մանարսքը թը՝ խարիցօնք առօնք, Բ-
նիկիցէա կո տանըն գեղիցին իւր «Խորհուրդ խո-
րին»ը գեշնօծ կուենըն, կո տանըն հորան ու թէ-
ագովիւրը դոսը կո կանըցընըն չիւր ճաշոյ գըքին
վոխս, էան վոխսը կո գեշինն պոսսիլը:

Պ Ո Ս Ո Կ

Պոսկիլոն խաքը գեղիցօն միջը հարսըն քիրը ծի-
րէարիւց մը կոտոյ տէրտիւրիւջը, էնէա կոծկէ կո
տիանոյ իւր՝ միջը շոտ բոնիր կոյ. մըջէն կո հանէ
էսէաջ փեաւ մը, թէագովիւրէն գօլոխը կո դնէ,
արծըթէ մօտնըն մօտը, գոււրն միջքը կո կապէ,
քթանէ խախմալը աղլէխը ձէառքը կոտոյ, միջնէ
խէօնծիւր մը, ինտէան կո կանըն չիւր թժամուռն
խաքը. էան ծիրէարիւցըն միջ մեղրը եւ ջուղդօկ
կո կիւնոյ, էնէ մանարբատոյ կո բեժնէ, ընիրէ առ-
նիլէօվ կուրախնան Տեառեօսը միգէ ասիլէօվ: Իրր
թժամէն իւլին՝ կո տըստը թէագովիւրը, թէագովիւր
էգրէտրը, հորսը, ազապալաշին դասըն միջ սեղանըն
առջինքը, միկ միկ միմ (մամ) էա ձիւվըն կոտօն.
տէրացու մը կ'առնու ցնծղէաքը կու պաշխաշին

« Ով երանելիք ամենեցուն » շարականը ասիլէօվ, քնիկից խաբը կո հանին դեղիցոն դորս, կո հիծնոյ հորսը ձը(*) մը, թէ ազգիւրն ու թէ ազգիւր է զրէարնէա միկ միկ ջիրէ, էվէաչք աւշիլէն, խազալէն կոգոն տոնը. ըմնը սուխախէն (սօգազ) ըլլալունի-
 քան օժ տոն առջիվոյ կընըն ըլլալուն նը՝ էան տոնը տէրը առջիւնըն կիլլէ սոխ, գինէ կո բիրէ, աղ-
 լեխ մ'էա հարսըն գոլոխը կո քարէ, ձիան գոլոխը կո բունէ էվէաչք կոտոյ աւշէ, Ձիւրք էնիս, չիւր տոնը իրթոն նը 20—50 աղլեխ կո եղղլնվը. իրր հորսը բակդոսը մօտնոյ նը՝ հէսի լիկկան մը առ-
 չիւր կո բիրին կիսին թը — « հէաս շաղէ » էնէա պարսօ լիկկանը կո շաղէ (տան դուռը կը լինի այս դօրծողութիւնը. հարսը դեռ ձիուն վրայ եղած առան տունէն խկոյն խմոր շաղուելու պարսօ պղնձեայ տաշտ մը կուտան առջին, նա ալ պարսօ տաշտին մէջ ձեռքովը խմոր շաղուելու ձեւեր կընէ մէկ երկու վայրկեան, յետոյ ձեռքէն կ'առնուն եւ դինքն ալ ձիւն վար կ'իջեցնեն) հօ գուլու լու կենին, կո մօտնոն վէարը, կըջըցընին ձիան վըրցըվըն, կո հանին սանդոխն ի վեր տոնը. դո-
 ոսը չո մօտոծ կո ճովոն տըղըն (փեսային) պոպը ու կիսին — հարսըն չիւրք կոտոս, էնէա կիսէ թը փոլուն քառոյ (քառոյ) եւ էգէ թուղ նը, էան վոխսը հորսը ծուցէն կո հանէ նուռ մը դոսոնը հակոտը կո կըպցընէ, կախը կախը կուներ. նուռը խլէօզը՝ խլուղըն կուներ, սունդոյ կո տանըն կո

(*) Այս ձին զարգարեալ չէ, այլ պարզ բնական համետովը, ո-
 րոյ վերայ կը հեծցընեն հարսը և չուանը ձեռքը կուտան :

կանըցընին թարսուկը (չուփան մը խալպէ խալպ կապ-
ման, փրէան կարպիտ մը փռուման, գիտենը բորձ
մը կիցած տեղ) հորսը կուշիկը կո հանէ, ման-
տորիկները մըջէն քարոն կո խելին. հորսը տոնը
մտած ասինք պօլուզ տողոյ մը օնթը կտտոն էա
մաքէօվ թր՝ ինքէա պօլուզ ունցնոյ:

Իրիցը՝ թէադփիւրը աւ հորսը միջ տիղը կո բիրէ
պարանիջ մը կիսէ. հորսը կորթոյ շիրխիէօվ ապու-
րը կո խառընտէ՝ կորթոյ թարսուկը, թէադփիւր-
նէ տրստէօղ հալխուէն նէ նա իրիցոն խալը կո կա-
նը, թէադփիւր էգրէարնէա միկտեղ. Հէօն մարդ-
կոցը աօջեւ գինէ, արօխ, մեզոյ կո բիրին, քիչ
մը ինտէան խաւմիլէն սնկորոյ՝ էնիր կալնիլէօվ
սուփրոյ կո փօին, էօնիւր միջը կո կինոյ մատող(*).
օտաղ ապուր, սողանլը, մեզրը, ցիրին ապուր, հար-
սընմիրոնքէ (հարօին կողմը) տապկոծ հաւերթ կո
ճամբին, էնէա կուրհնէ տէրտէրը, սուփրէն կո
գեշնին աւալ, աւալն իփհանէա գինէ, արօխ կո
բեթնին. իրր սուփրէան կալնոն նը՝ կանուղնըն ա-
գապարաշին աւ թէադփիւրնէա կառնուն հոց աւալ
կո տանըն (հրաւիրեալք մինչեւ օր ճաշնն փեսայն
առքի վերայ կը կանգնի): Ընիկից իլէօղը կիսէ
« խաշիու նը, Աօրոծ միկ բարձը վիրոյ ծիրացընէ »
աւ կորթոյ, ինտէա 8 էօր հարսնըք կունը, ամին
մորդ հարսըն պախշիշ, փառոյ, աղնիս կո բիրին է-

(*) Ուրրոմ իրիկոն իւր շարք Կիտը լուանոյ՝ հարսնըցը տէ-
րը տալոր մը մատող համօր կո զնէ, էօնիւր զոլիսը լըալը մը
դաւաթ (գաւաթ) կուրթէն ուրրոց անունէօվ մըս իրինց իրիցոն
կո տանըն:

նէա ձիովքն կո պագնէ : Ըմմը ութ էօր հարսնքը
կենին ասը նը ութ էօր մին չէ՝ շոտ . տիսնուս իւր
խրարմըն եւս բարիկմէն միկը տավօր մը քեշիրէ փա-
րասանախ էկիր է , էօնիւր հապո շոք մը մարտոճ կե-
նին , ըմմը՝ պոսոկը ութ աւուրը խոքը կածկին : Պը-
սակվիլոն խոքը իւվ իւր հարսնքը իգոյ նը թէադ-
վիւրէն ճակոտը կինէօղ խէաչը կո պագնին ու հարս-
նքը միջ իւվ իւր թէադվիւրէն առջէ անոնը ճո-
վոյ՝ սլատիժ ունը :

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱԽՏ

Թէ ի՞նչպէս եւ ե՞րբ գոյութիւն ունեցած է սոյն
ախտն ի Զէյթուն՝ զայդ չեմ քննած , բայց ճշմար-
տութիւն մ'է թէ ժառանգութեամբ սերնդական
հանգամանք մ'ստացած լինելով՝ տեղացւոց երկու
սեռն եւս մեծ եւ փոքր առ հասարակ 70 % այդ
ախտով վարակեալ են . փոքր տղայք եւ աղջկունք
եւս կը տանջուին կոկորդի վիրաց ցաւերով եւ տ-
պականեալ արիւնն յառաջ բերած է նոցա մատ-
ղաչ մարմնոյն վերայ ուռեցքներ , ձայներնին մա-
րած եւ այլն : Անմաքութիւնն յոյժ նպաստած է
ախտին տարածման : Սոյն ախտին համար իւրեանց
սովորական դեղն սաքարնայն է :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Դ Ե Ղ Ք

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ

Գաղղիական ախտ ունեցողին երեք օր շարունակ « փրհեկի շարպօր » կը խմցենն . այս շերպերը սովորական սաքարնայն է , զոր եփած ատեն սանին խփան եղերքն հայս կը քսեն շոգին դուրս չելլելու համար եւ « ֆուպոյ » է (անլի հայտով շինուած կըոր խմոր մ'է , զոր քոյ կոյծն առնելէ յետոյ տաք քարին վերայ կեփեն) զատ ուրիշ բան չեն կերցըներ : Ոմանք սնդիկ եւս կը ծխեն :

Հիւանդ մը փոխեցնելու համար աղի տաք ջուր կը խմցենն :

Քրտնցնելու համար ոտքերն տաք ջրոյ մէջ կը դնեն եւ կարասի կտորուանք տաքցնելով ջրոյն մէջ կը ձգեն՝ որ առատ շոգի արտադրէ ու հիւանդին վրան ալ մի քանի վերմակ եւ այլ խորգեղէնք դրնելով կը ջանան քրտնցնել . եթէ չ'յաջողին՝ ուսուոյ տերեւներովն կը փոթտեն զհիւանդն :

Որովայնի որթերն թափելու համար եղեւնատերմն (խօրասանի) մեղրի հեա խառնելով առաւօտեան մինչեւ ժամը 4 անօթի մնալէ յետոյ կուտեն :

Առաջին անգամ տենդ ունեցողն պաղ ջուրի մէջ կը թաթաւեն :

Թանձն բժշկելու համար « սուսայ » կոչած ծառի պտղէն (ընկուղաշափ) առնելով կը մանրեն եւ դարւոյ ալեր հետ եփելով՝ փորին վերայ կը դնեն, կամ « խսկեալ » (ծեծուած երկաթի թափթփուկ) մեղրի հետ խառնելով կը կերցնեն, եւ կամ վայրի կեռասն ջրով եփելով կը խմցնեն :

Ատամնացաւի համար ընկուղենւոյ արմատի կեղեւն կը կեղուեն եւ ջրոյ մէջ մինչեւ ի թանձրանալ եռացնելէ յետոյ ակռային վերայ կը դնեն :

Նոյնպէս ատամնացաւի համար նուիկ, մայրի ծառոյ կեղեւ, աղաօր եւ քացախ իրար խառնելով կեփեն եւ դրսի կողմէն ցաւոյ ակռային վերայ կը դնեն :

Եթէ կոկորդն ուռենայ՝ շերամի ապականութիւնըն ջրով եփելով ուռած տեղն կը քսեն :

Սնկողին՝ սակամոնին (մահմուսէ—դեղ փորլուծութեան) ջրոյ մէջ կը լեղուն եւ կը խմցնեն :

Փորը կամ ուրիշ տեղն եթէ ցաւի՝ կարասի կետորուանք աաքցնելով վրան կը դնեն :

Կորի խայթած տեղն մածուն կը քսեն :

Օձի խայթած տեղւոյն վերայ փոռեալ արեթ դնելով կայրեն :

Արիւն հանելու սովորութիւն եւս ունին, արիւն-
առ անձն հիւանդին ո եւ է մասն կտալով մը պըն-
դելէ յետոյ՝ սրածայր պարզ երկաթ մը որպէս թո-
ռակուռ զօրութեամբ երակին մէջ մտնելով արիւն
կը հոսեցնէ:

Պատուաստ չեն գիտեր, հետեւաբար ծաղկէ զոհ
գացողներն բազմաթիւ են մանաւանդ մանկունք:

Վ Ի Ր Ա Յ Հ Ա Մ Ա Ր

« Ղարաղապարճուխ » ըսուած վէրքն նոր ելած
ատեն՝ նախ վրան թղենւոյ կաթ կը կաթեցնեն եւ
ապա տերեւն կը դնեն, եթէ թուզ գտնուի՝ նոյն-
պէս. յետոյ ծխախոտուոյ տերեւով կը փաթտեն
զայն, եթէ վէրքն հիննայ՝ « թանապա » կոչած
ծառոյն ցախերն դիզելով կայրեն եւ դէմն մի ա-
ման դնելով կառնուն վազուկն, զոր « սարը դար-
ռոն » կանուանեն եւ երիցս լուալէ գկնի ձուոյ
դեղնւոյն հետ խառնելով վէրքին վերայ կը դնեն:

« Թառթառակ » կոչուած վէրքն որ մանր ու
չատ կը լինի, բժշկելու համար՝ սեւ ներկեալ կտա-
ւըն կայրեն եւ մոխիրն իւղոյ, կալրոյ եւ սյւ զանա-
զան նիւթոց հետ խառնելով սպեղանի մը կը սլատ-
րաստեն եւ կը քսեն վրան:

« Քէմեաճ » անուամբ վայրի խոտն որ եւ է վէր-
քերու կը գործածեն:

Տուղտը քսուած խոտն եւս վէրքերու կը գործածեն:

Եթէ սոսորդոյ մէջ վէրք ելլէ՝ չեչաքարն (իգփհնկ — ջրոյ փրփուրէ գոյացած քար) ալեր թեփի եւ քացախի հետ խառնելով կը լեղուն եւ եփեկէ յետոյ վրան կը կապեն:

«Ջաղացոխ»ն, որ տերեւալից վայրի խոտ մ'է վէրքի մը բերանը չ'խափանուելու համար կը գործածեն:

«Օձիկ» անուն վէրքն նոր ելած ատեն որոշելու համար «ուձ քոր» (օձքար) անուն մի տեսակ քար կայ, զոր վէրքին վերայ կը դնեն, եթէ փակչի՝ օձիկ է վէրքն, որոյ բժշկութեան համար մայրի ծառոյ կեղեւն կը ծեծեն եւ մածունի հետ խառնելէ յետոյ վէրքն կը ճեղքեն եւ վրան կը դնեն:

«Ղըզըլիսկիսկ» անուամբ խիստ գէշ վէրք մը կայ որ եթէ չ'ծակի՝ ասեղի մը սեւ դերձան անցնելով վէրքին մի կողմէն միւսն կը ծակեն եւ դերձանն մէջը կը թողուն. վէրքն ծակելէ յետոյ սեւ չամիչն կը ծեծեն եւ միսրոյ հետ խառնելով վրան կը դնեն:

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ, ՀԱՆԴԷՍ ԹԱՂՄԱՆ

Յորժամ ծանրանայ մէկու մը հիւանդութիւնն ազգականք նորա եւ դրացի կանայք մէկզմէկու « ԼԵՔԸ ԼԸ (*) . . . մորդը ծանտըցիրէ » — « հուճ, քըլճ, ասիսոնտը կո պարսը, տոնոկը կաւրը սըտըկը ծմ սըտը մոնոյ » ըսելով կը ժողովին. ոմանք ալ եթէ հիւանդն այր է՝ « կընըկը . . . մարդոն կոտոն » կըսեն, մինչ իսկ կ'սկսին անդ այրի մնալու վրայ եղողին ամուսնացնելու խօսքեր ընել զոր օրինակ, եթէ մեռնողը կին է՝ մարդիկ եւ պառաւունք զիւր այրն կը մխիթարեն « չի՞րք դայդու կո կենիս, չի նը էաս կընըկը նը՝ թուղ նը հուօտ մ'էա » իսկ եթէ այր՝ կանայք առ կինն « չի՞րք skurs կո կենիս ԼԸ բիրիս, բրկըրը տըղոյ չէ պէարսը, միր գագոթնէա իկիր է ինտիաս բանիր ըմնը՝ հումմակոն գէնտ էանէա էվիլէ, գուհանոմ զԱսրոծ » ըսելով:

Երբոր հիւանդին շնչոյն սպառման վայրկեաններն հասանին՝ ընտանիքն կեւանեն արտաքս եւ կուլան « ամանն քիրի՛ր, մերի՛ր տունիս կո կաւրը, արիւկիս կո խաւարը չի՞րք պիտը էնիմ, չո՞ց պիտը էնիմ » (ս'վ քոյրեր մայրե՛ր, տունս կաւերի, արեւս կը խաւարի ի՛նչ պիտի ընեմ, ի՛նչպէս պիտի ընեմ)

(*) Ընդհանրապէս արական սեռին համար ԼԸ ձայնարկութիւնն կը գործածեն, զոր օրինակ. ԼԸ պլէզ — ծօ տղա՛յ, ԼԸ մորդ — պէ մորդ, իսկ իգականին համար գըլճ, ԼԸ գըլճ, ԼԸ գըլէ (Գըլս աղջկէն — քա աղջիկ, գըլս հուճրս — քա հմարս :

ըսելով. եթէ վաղվաղակի չ'մեռանի եւ մին յանդա-
մոց նորա ընտանեաց այլուր գտնուի՝ կանայք կ'ը-
սեն-ամեն չօ իւրմըշիմէա ըմմը՝ էօտիւր խըռովիւ-
րէն լաթիր մը եւս աղլիս մը վիրէան քարեցէք,
նէրիք թուղ շարշարկըվը-քանզի կ'ըսեն, եթէ մէկը
վաղվաղակի չ'մեռանի՝ հեռաւորին սլատկանեալ բան
մը վրան նետես՝ սպասողութենէ դադարելով ա-
ռանց շարշարուելու խկոյն կը մեռնի:

Վերջապէս կը մեռնի, եւ կ'սկսին լալ, ոմանք
կ'աղաղակեն, այլք՝ տխուր խաղեր կ'երգեն եւ մե-
ռելը առանց ժամանակ անցնելու « արիւժէադ գը »
(յարեւելս) կը դառցնեն, ոմանք ջուր եւ փայտ
կը բերեն լուալու համար, բայց ջուրն տաք-
ցընելու հարկ եղած կրակն քուչն կամ այլ տեղէ
չեն առնուր բնաւ, այլ՝ յատկապէս « ըռահոնք »
(հրահան—ջազմագ) կը զարնեն եւ նոր կրակ կը վա-
ռեն, ջուրն ալ տան մէջ չեն տաքցներ, այլ սը-
րահը իբր բացօթեայ տեղ, որ այլոյ տանիքն է:
Լուալն յետոյ՝ կիսավառ աւելորդ փայտերն փո-
ղոց կը նետեն, զորս ոչ ոք կը համարձակի առնուլ
մինչեւ իսկ վրան կոխելու կերկնջին, զի մի դուցէ
իւրեանց տնէն եւս մեռել պատահի:

Մեռնիլը լսողներ հեռզհետէ մեռելոյն տունը
կը ժողովին:

Լուալն յետոյ « կէսկէրէտ » ն հակառակ կողմը
կը զարձեն, ինչպէս նաեւ կաթսան, քանզի բա-
րենշան չեն սեպեր ուղիղ դրից մէջ թողուին:

Մեռելը միայն երկու տախտակի վերայ կը լուան,
յետոյ պատանքցու եօթը կանդուն կտաւը կը փը-
ռեն եւ մեռելը կը դնեն կտաւին վերայ՝ ու կ'սկը-

սին նշխարհն, « խեղճուկ շուանըկն (*) եւ մոմն պատրաստել, որ անպատճառ երուսաղէմէն բերուած պէտք է ըլլայ, եթէ շունենան՝ ուրիշ տեղէ կը գտնեն: Մեռելին պատանքն ըստ սովորութեան կարելի զկնի՝ որոյ թէկերը նոյն խիկ պատանքի կը տաւին ծայրերէն քաշելով կը պատրաստեն՝ օրէն չէ դրսէն բերել, յետոյ « խեղճուկ շուանըկ » ը վզէն սկսելով կը կապեն մէջքն, բաց աստի գօտի մ'ալ, զոր կը շինեն նոյն կտաւէն:

Սակաւ ինչ յետոյ քաջանայն կուգայ եւ հոգւոց մ'ըսելէ յետոյ՝ « լեշիէատ » ը (դագաղ) կը բերեն պատառուն եւ յոյժ հին շուրջառով մը, մեռելը կը դնեն դագաղին վերայ, շուրջառն ալ վրան ձգելով եկեղեցի կը տանին եթէ ի գիշերայն պատահի, ուր կը մնայ մինչ առաւօտ, խիկ եթէ ցերեկ կամ երեկոյեան դէմ՝ ի գերեզման:

Առաւօտուն՝ եկեղեցւոյ արարողութեան ատեն ընտանիք, ազգականք եւ գրացի կանայք դագաղին շուրջն կը բոլորին, որ եկեղեցւոյ մի անկիւնն դրուած կը լինի սովորաբար եւ կուլան, յորժամ արարողութիւնն աւարտի՝ եկեղեցւոյն մէջ գտնուող բոլոր կանայք եւս ննջեցելոյն շուրջը կը նըստին եւ առաջնոց հետ կուլան:

Ի սկիզբն եկեղեցական արարողութեան՝ քաջանայն ծանուցումէ մ'զկնի ի բերանոյ մեռելոյն բարձրաձայն « Մեղայ ամենասուրբն » ինք կ'ըսէ

(*) « խեղճուկ շուանըկ » ըսուածը՝ երկու կանգնաչափ կարմրազոյն մետաքսամեղն բամպակամեղնով իրար ոլորուած հաստ Թէլ մ'է, զոր կը գործածեն Թէ երսիսայից մկրտութեան ատեն և Թէ մեռելոց, — նստաւ:

եւ ապա « արձակում » կուտայ, յետ որոյ միւս արարողութիւնք կը կատարին: Նոյն պահուն մի քանի անձինք ալ « փխտտ » ր (զազմա) « թը » ն (թի) առնելով գերեզման փորել կ'երթան, զոր կանգունէ մ'աւելի կը փորեն, եթէ ննջեցեալը քահանայ լինի՝ հասակաչափ: Յետոյ յուղարկաւորութիւնն կ'սկսի. առաջէն կ'երթան քահանայք, որոց զինի չորս մարդ գազաղը առեալ ի վերայ ուսոց իւրեանց կ'ուղղեն ի գերեզման, ասոնց ետեւէն մարդիկ եւ յետ ամենեցուն բազմութիւն կանանց, որք մինչ ի գերեզման կ'ուղեկցին, ննջեցելոյն հագուստներէն ո եւ է մաս ձեռքերնին առած խաղաղով, տեղական եղանակներ երգելով եւ ձեռքերնին այդ առարկաներն խաղցնելով: Աւանէն դուրս կանգ առնուելով՝ քահանայն աւետարան մը կ'ընթեռնու բարձրաձայն եւ ապա ուղղակի գերեզմանատուն կ'երթան. անդ թաղման արարողութիւնն կը կատարեն եւ կը թաղեն, ոմանք յատուկ սնտուկով (*):

Նոյն երեկոյին ննջեցելոյն տէրը ընթրեաց կը հրաւիրէ զքահանայս եւ զազքատս. հետեւեալ օրն ալ հացկերոյթ կուտայ ի գերեզմանատան այդուց անունով, որուն « էագիւղք » կ'ըսեն. սոյն այդուցին ազգականք, զրացիք եւս ուտելիք կը բերեն ի գերեզման:

Մահուան օրէն սկսեալ մխիթարել կ'երթան մե-

(*) Զէյթունցւոց զազազն է ի ձեւ լամեայ պատգարակի, որոյ երկու անտաշ ձողերն իրար կցած են երկամեայ շղթայիւք. շղթայներուն վերայ փռուած է հին եւ սղտտ լամ մը, որուն վերայ կը դնեն ննջեցեալն եւ վրան ալ հին շուրջառ մը կը ձգեն:

ուելատէրն, որոց միտիմարական բանքն են յլրս
ճառոյ հիգէն, Ասրոծ խաբը կինուղնուն սաղլէի
տոյ, Ասրոծ էալ շի ցըցընէ, հուգէօվ սրբէօվ մը-
խըթարվըս և ։

Այգուցէն յետոյ մեռելը լուացուած աճառով
ըստ որում այլ եւս իրենց համար անգոր-
ծածելի է՝ նորա հազուստներն լուալ կուտան եւ
քահանային կը նուիրեն, հնազոյնքն ալ մեռելն լը-
ւացողին. եթէ մեռնողն երէցկին լինի՝ հազուստ-
ներն վանուց կը նուիրեն ։

Ի հնումն՝ ննջեցելոյն տունէն կերակուրի սը-
ղնձեայ սկաւառակ մը եւ դրդալ մ'ալ կուտան ե-
ղեր քահանային, իբր մեռելոյն բաժինն ։

Մօտ ժամանակներ նոր հազուստներն եւս սկսած
են չ'տալ, այլ մի քանի կտոր հազուածներէն ։

Քահանայից մեռելաթաղի համար տրուած դը-
րամն է 10—20 փարայ եւ տիրացուից 10 փարայ ։

Սուգ չեն պահեր եւ բազումք յարանց եւ ի կա-
նանց յաջորդ շարթուն կ'ամուսնանան (*) ։

(*) 6—7 անգամ ամուսնացողներ կան ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ

ԴԼՈՒԽ Ա.

ԱԻԵԼՈՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՔ

Աստուածածնայ Աւետման տօնի օրն եթէ անձրեւէ՝ տղայք զվտարաց անձրեւին տակ կը կանգնին առատութեան նշան համարելով։

Յետ մօիցն արեգական ծաթ չեն ծամեր, դիպ կը փոխի կ'ըսեն։

Նոյնպէս՝ յետ մօիցն արեգական մարդու աղ փոխ չեն տար, իրենց տան բերնի համն չաւրելու համար։

Արծւոյ մագլաց իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն արծաթազօծելով մանկանց զլիւնն կը կախեն, որ չ'ականահարուին (նազար չ'առնեն)։

Արեգակ եղած ատեն եթէ անձրեւէ՝ գայլք կը ծնին կ'ըսեն։

Աւագ հինգշաբթի երեկոյեան եւ աւագ ուրբաթի կերակուրներն կծու քացախէ եւ կարմիր պղպեղէ պատրաստելն պարտք կը համարին իրենց, Քրիստոս՝ ծանուցեալ պահուն լեղւով խառնեալ քացախ խմելուն համար. յաւուրս յայտոսիկ բնաւ քաղցրեղէն չեն ուտեր։

Նահատակի կամսրոյ գերեզման կարծուած տեղ-

ւոյ մը վերայ եթէ ուխտի երթան՝ հագուտէն մի կտոր սլափառելով նորա մօտ դռնուած ծառի կամ թուփի մը կը կապեն, որ չհիւանդանան:

Սրբոյն Գ. Լուսաւորչի մուտն ի վիրապ տօնի օրն պատերուն ջուր կը սրսկեն, որպէս զի կորն զիրենք չխայթէ. ամ յամէ սոյն դորժողութիւնն կը կրկնեն:

Բարեկենդանին քաղիսանա ապուր կուտեն, որ մօեզն նոյն տարին զիրենք չխայթէ:

Տեսուն ընդ առաջի տօնի օրն տանիքն ելլելով՝ եօթն լերան կը նային եւ իւրաքանչիւրին մէկ մէկ հատ չամիչ կուտեն, բարութեան եւ առատութեան նշան կը համարին զայս:

Եթէ մէկը բանի մը ցանկայ՝ աչքն առկից ցաւած կարծելով՝ եօթը տունէ հաց կը ժողովեն ու թրջելով աչքին վերայ կը դնեն, որ առողջանայ:

Ընկոյզն երբ սխեռաչափ լինի՝ ծառէն փրցնելով կը կլանեն, որ աչքերնին չցաւի:

Քրիստոսի խաչելութեան գիշերն, եօթն աւետարանաց ընթերցման ատեն՝ իւրաքանչիւրին մէկ մէկ հանգոյց կ'ընեն, որ կորն չխայթէ զիրենք:

Ծննդեան պահքէն յետոյ՝ նաւահատեաց առաջին կերակուրն « նըվըկ » խոտեն կը պատրաստեն, Տիրամայր սովաւ փաթտեց զՄիածինն ըսելով:

Գլխոյ մազն եթէ կտրել կամ ածիլել տան՝ կտորուանքն ոտքի տակ չեն ձգեր, որ այլք վրան կոխելով գլխոյն ցաւ չ'պատճառեն:

Ջրոյ գացած ատեն եթէ ի ճանապարհայն մեռելոյ հանդիպին՝ նոյն ջուրը տուն չեն բերեր, զի մի՞ դուցէ իրենց տունն ալ մեռել պատահի:

կնոջ մը հագուստէն եթէ դիտուածով մաս մը այրի՝ զայն այրի կնոջ մը կարկտել կուտայ, եթէ ինք կարէ՝ ամուսինն կը մեռնի եւ ուրիշ մ'անուէր կը հարկադրի եղեր։

Մեռել եղած օրն մինչեւ որ չ'թաղեն զայն՝ ոչ պատկազրութիւն եւ ոչ ալ մկրտութիւն կը կատարեն։

Մարդ մը որ եւ է փորձութենէ կամ ի ճանապարհորդութեան գողէ սպաննուի՝ ճակատագրին կը վերագրեն։

Ուրբաթ օրն լուացք չեն կատարեր թէ՛ Քրիստոս նոյն օրն խաչեցաւ։

Չորեքշաբթի եւ ուրբաթ օրերն հագուստ ձեւած ատեն օձիքն չեն բանար։

Կին մը եթէ ծնանի՝ իւր տնէն շարունակ մի եօթնեակ եւ ոչ ումեք լոյս կամ կրակ չեն տար (Զէյթունցիք սովորութիւն ունին իրենց քուչէն դրացւոյն ճրագ կամ լոյս տալու) զի մի գուցէ երախայն « կէօխիւցք » ըսուած հիւանդութեան ենթարկի։

Սոխին կեղեւն քուչի մէջ կը նետեն, որ սատանային լեզին պատառի։

Հրացանի վրայէն չեն անցնիր թէ՛ այլ եւս չ'դպիր նշաւակին։

Սուրբ Յակոբայ տօնի օրն եթէ ձիւնէ՝ կ'ըսեն թէ Սուրբն մօրուսն կը սանաթէ։

Եղունգն կտրելէ յետոյ գետին չեն նետեր, որ դատաստանի օրն չ'փնտռեն։

Խաղաղոյ լուացումն օրհնութեան յատուկ արարողութիւն նկատելով՝ մեղաւոր շրջալու համար՝

ցտօնԱստուածածնայ վերափոխման անլուայկուտեն:

Եթէ ծնողք մը զաւակ ծնանի՝ այլեւս ջրոյ ամանն բաց չեն թողուր թէ՛ չխղճն ջրոյն մէջ կը մտնէ եւ լուսաւորելով տունն դիւրագոյնս կը խեղդէ զմանուկն:

Կարկտած ատեն ժողովելով՝ ի թիկունս կոյս կը նետեն որ դադարի:

Եթէ չ'անձրեւէ՝ եկեղեցեաց դռներն « փըշիջոր » պատրաստելով աղքատաց կը բաժանեն, ոմանք՝ բաղադրութեան ռուփն եւ ալիւրն մուրալով կը հաւաքեն:

Եթէ մէկու մը հիւանդութեան ատեն մեռել պատահի՝ հիւանդին զգեստէն մի կտոր պատառելով մեռելոյն պատանքին մէջ կը դնեն, որ հիւանդութիւնն դիակին անցնի:

Եթէ մէկը տենդէ նեղի՝ կտոր մը դերձան կը տանին քահանային կամ բարեօրաշտ ձեւացողի մը, որք զայն երիցս կղթելով եւ վրան աղօթելով՝ հիւանդին թեւին կապել կուտան, որ բժշկուի:

Եթէ մէկը գործ մը կատարէ եւ ուրիշ մը նորա ըրածին վերայ զարմանայ՝ առաջինը չ'ակնահարուելու համար (նազար չ'առնել) վերջնոյն՝ « աչքդ ոտքիս տակ » կ'ըսէ:

Յորժամ ծխածանն տեսնեն՝ կ'ըսեն թէ Աստուած ընդ մեզ է:

Շիրիքով (փայտեայ յոյժ մեծ տեղական գրգալ) սպուր ուտողին ամուսնութեան օրն կ'անձրեւէ կ'ըսեն:

Հաց եփած ստեն ո՛վ որ առաջին հացն ուտէ՝ նա կ'այրիանայ կ'ըսեն:

Ամէն կաղանդի խմորեալ հաց (չօթ) կ'եփեն (սո-
վորարար կերած հացերնին անխմոր է) ուստի,
պարտաւորեալ են բազում անգամ իրարմէ խմոր
փոխ առնուլ, փոխատուն՝ ետ կը պահանջէ իր
տուած խմորն սէտքն լրացնելէ յետոյ « մեր հա-
րըստութեան խմորը ձեզ կը մնայ » ըսելով:

Արք (*) կանանց հետ միատեղ հաց շէն ուտեր թէ՛
քարձ (*khouch*) կը լինին:

Կ'ըսեն թէ՛ աւելով զարնողն կը մուրայ:

Եթէ մէկը տենդէ նեղի՝ նոյնին ընտանեաց ան-
դամներէ մին կ'երթայ կրիայի մը ոտք դերձան մը
կը կապէ, որ տենդն անոր անցնի:

Փոքր տղայոց կը պատուիրեն թէ մատովդ աստղ
մի ցուցներ, աղէկ չէ՛:

Նապաստակն բարենշան չ'համարելով՝ տեսած ա-
տեննին քարի մը տակն 'ի վեր կ'ընեն:

Միեւնոյն բանն խորհող երկու անձանց ո'րն որ
առաջ յայտնէ՝ կ'ըսեն թէ դուն շատ պիտի ապրիս:

Կ'ըսեն թէ՛ ակոյ քաջողին վարձքն եթէ չ'վճա-
րես՝ տեղն ակոյ չ'բուսնիր:

Եթէ կերակուր եփեն՝ կասկարան հակառակ դրից
մէջ կը թողուն թէ՛ սատանան ի դիշերի նոյնը կը
կատարէ:

Եթէ կատուն երեսն լիղէ՝ կ'ըսեն թէ պիտի անձ-
րեւէ:

Եթէ յիմարն դերձանով տենդ կապէ՝ հիւանդն
փութով կ'առողջանայ կ'ըսեն:

Եթէ մէկը վերք մը հանէ՝ առաւօտուն կանուխ

(*) Արք՝ զկանայս « պակասաւոր » կ'անուանեն:

կ'երթան թղենւոյ ճիւղ մը կը մանրեն եւ դերձանի մ'անցնելով՝ վիրաւոր մասէն կը կախեն։

Եթէ մէկը կոծիժ ունենայ՝ լուսնոյ ծննդեան ատեն դէպ ի լուսին դարձած գետնէն հող առնելով կոծիժին վերայ կը դնեն թէ՛ կ'առողջանայ։

Եթէ մէկը ակնահարի՝ սլառաւ մը կը կանչեն որ դանակով կ'աղօթէ վրան, որոյ վարձքն եթէ չ'տան՝ չ'առողջանար կ'ըսեն։

Կուրծքն ու ոտքերն աճառով չեն լուար թէ՛ այդ գործողութիւնն մեռելոց յատուկ է։

Եթէ ծնօտէն ակռայ մը փրթի՝ գլխուն վրայէն դէպի ետեւ կը նետեն «ընդ էշ գնա եւ գառնուկի սկս եկուր» ըսելով։

Յորենոյ կալին մէջ քար մը կը դնեն թէ՛ առատութիւն կը լինի։

Տան մէջ սոխ մը կամ ջորւոյ գանգ մը կը կախեն, որ չ'ակնահարին։

Եթէ տղու մը հագուստն դիպուածով պատառի՝ մայրն հանել կուտայ եւ այնպէս կը կարէ, որ բաղդն անյաջող չերթայ։

Սոխի (թարմ) կանաչով չեն սուլեր թէ՛ սով կը լինի։

Եթէ անընդհատ անձրեւէ՝ փայտէ դրգալ մը կայրեն թէ՛ հողմ ելանէ եւ դադարի անձրեւն։

Մանուկն եթէ չ'ննջէ՝ օձի շապիկն (մաշկ) գլխոյ կողմն կը դնեն, որ քնանայ։

Շան ատամն արծաթազօծելով մանկանց գլխարկէն կը կախեն, որ չ'ակնահարուին։

Խոզի ակռան՝ ձիոյ եւ ջորւոյ սլառանոցէն կը կախեն, որ չ'ակնահարուին։

Մանկունք եթէ դանակով տան դուռն կամ մանաւանդ սիւնն տաշեն՝ ծնողքն կ'արգելուն թէ պահանջատէրն կուգայ :

Տան սեան վերայ չան ատամն կը գամեն թէ լաւ կը լինի :

Եթէ մարդ կամ անասուն ի խթոյ նեղի՝ սուրբ Թորոսի (Սուրբ Թորոս մատուռն) շուրջն կը շրջեցնեն որ բժշկի :

Աւագ ուրբաթ օրն ռուփ կամ չամիչ չեն ուտեր (տեղական քաղցրեղէնք) ի սուգ Քրիստոսի չարչարանաց :

Սուրբ Յակոբայ պահոց շարաթուն լուացք չեն կատարեր թէ՛ եթէ զաւակ ծնանին՝ մազերն արտասովոր սպիտակ (աղճաւ կ'ըսեն Զէյթունցիք) կը լինի :

Ոմանք հում մսէ խօփքէ չեն ուտեր թէ՛ կ'արգիլուին յարութեան փողոյ ձայնն լսելէ :

Կանայք ծննդաբերութեան մօտ մեղր չեն ուտեր թէ՛ մանուկն որ ծնանելոց է՝ թոթովախօս կը լինի :

Դայեակն զմանուկն եկեղեցի տարած ատեն՝ ջուրն տանող տղուն կը պատուիրեն թէ՛ ետիդ մի նայիր, մանկան աչքերն չիլ կը լինի :

Գորտին քար չեն նետեր թէ՛ կոծիծ կը հանեն :

Կոծիծ ունեցողն «կոծիծ աղբիւր» (ի Զէյթուն համանուն աղբիւր մը կայ) կ'երթայ եւ առանց ետին նայելու կը լուայ զայն, որ անցնի, եթէ նայի՝ չ'անցնիր կ'ըսեն :

Ուրբաթ երեկոյ չեն մաներ թէ՛ մեղք ունի :

Եթէ տղու մը երես կեղտի՝ հովիւ մը բերել տալով հրահան զարնել կուտան, որ առողջանայ :

կատու սպանողն ծկոյթ ունէ եօթն եկեղեցի սար-
տի շինեւ, եթէ չճինէ՝ դժօք կ'երթայ կ'ըսեն:

Եթէ ափն խողովո՛ր բաղդի յաջողութեան նշան է
կ'ըսեն:

Աչաց խողացքն գէշ կը համարին:

Կին մը եթէ ամուլ լինի՝ օձին բերնէն առնուած
կենդանի մը ձեռք անցնելով կը ջորցնեն եւ ամլոյն
գլխոյ լաթերուն մէջ պահել կուտան, որ ծնանի:

Սուրբ Փրկչի վանքն ուխտի գացած ատեն՝ ի ճա-
նապարհայն բերաննին քար մը կը դնեն եւ ուխ-
տաւորք ոմանք քուրձ զգնելով մինչեւ վանուց քա-
ւորդ մնացած տեղն հետիոտս, իսկ անկէ անդին
ծնգամբ կը քայլեն եղեր:

Նոր կիւրակէին եօթն կաթիլ կ'անձրեւէ եղեր,
եւ որու վրայ որ կաթի՛ն նա արդար է կ'ըսեն:

Գարնան սկիզբն եթէ Զէյթունի մօտ արագիլ
(զուն ուրեք կը տեսնուի) տեսնեն՝ առատութեան
նշան կը համարին:

Մէկուն զաւակն մեռնի ու երկրորդ մ'ունենայ՝
մօրն անունն կը դնեն եթէ աղջիկ է, եթէ մանչ՝
հօրն, երբեմն ալ Մնացական, եթէ մանչ է:

Եթէ մէկուն լաւ ջորին սատակի՛ նորա գանգն
դրան առջեւ կը թաղեն կամ տանը մէջ սիւնէ մը
կը կախեն յանմուացութիւն:

Եթէ շարունակաբար մի քանի աղջիկ զաւակ ու-
նենան առանց մանչ ունենալու՝ վերջնոյն անունն
Եթեր (եթեր, տաճկերէն կը լիւրիւր, բաւական է, նը-
շանակութեամբ) կը դնեն:

Մեռել լուալու ջուրն տաքցնելու համար պէտք
եղած կրակն՝ տնէն դուրս բաց տեղ մը կը վառեն,

զոր նոր կայծով կը բռնկցնեն առանց քուշի պատ-
րաստ կրակէն առնելու եւ կասկարան հակառակ
դրից մէջ կը դնեն. ջուրն տաքցնելէ յետոյ՝ վառ-
եալ վայտից մնացորդքն կը նետեն, զորս ո՛չ ոք կը
համարձակի առնուլ, եթէ առնու՝ իւր ընտանեաց
մէջ եւս մեռել կը պատահի կ'ըսեն:

Տղաք սատակեալ չորքոտանեաց վէդն չեն առ-
նուր խաղար թէ՛ իրենց եւս նոյն տեսակի կենդա-
նիքն կը սատակին:

Նուռն գանուած տեղն եթէ նորածին ուլը մայէ՝
նուռն կը փախի կ'ըսեն:

Ի ձմերան խիստ ցուրտ եղած ատեն եթէ օդն
պարզի ու պայծառանայ՝ գայլք արիւն կը միզեն
կ'ըսեն:

Ներքանի խաղախին ճանապարհորդութեան նշան
կը համարին:

ԳԼՈՒԽ Բ.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ԿԱՄ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՔ

Ասրոծ(*) միկին հազոր(**) տոյ.

Ասրոծ տոյ մուրողիտ (մուրաւ).

(*) Ռմանք Ասրոծ և տմանք Ասպոծ կ'արտասանեն, որք նշա-
նակեն Աստուած:

(**) Հազարէն յետոյ փոխանակ հազար հարիւր, հազար երկու
հարիւր և այլն ըսելու՝ ընդհանրապէս տասնը միկ հարըր (տասն
և մէկ հարիւր) տասնվիցիւ հարըր (տասն երկու հարիւր) տաս-
նվիցի հարըր (տասն երեք հարիւր) կ'ըսեն:

Ասբոժ աճի չի ցըցընի .

Ասբոժ վեւըցընէ պըտիկիդ .

Ասբոժ իւտաբիտ քորը չի դըպցընի .

Ասբոժ խիւք խմաստութըն տոյ .

Առաւտովոն հրիշտակը խըչէտ (քովէդ) չի խոս-
վոնոյ .

Ասբոժ խոէ ճաշոկէտ մահտում չի հանը .

Ասբոժ տիսոժ աւուրիտ խո չի թուղու .

Ասբոժ տէրիտ (տէրդ , պաշտպանդ) կոռնոկիտ
պակոս չենէ .

Ասբոժ տըվուղնուրունէ (տուողներէն - ողոր-
մած) էնէ .

Ասբոժ միկէլիկիտ սող թուղու .

Ասբոժ դատոստոնիդ քողձըր էնէ .

Ասբոժ արքայութոնընէ չի գըրիդ .

Ասբոժ ճամըրըն պարախոք տոյ . (հովուի հանդի-
սած ատեն կ'ըսեն , Աստուած այժից երակաց
զօրութիւն եւ կաթանց առատութիւն տայ-) .

Ասբոժ իրկէան հովիւր տոյ .

Ասբոժ ձիոց ուտոց չըձգէ .

Ասբոժ ուրօիցընէ գըսքիդ ,

Ասբոժ մնացական էնէ .

Ասբոժ միկ բարձը վիրոյ ձիրացընը .

Ասբոժ խայիլու (խայրըր) էնէ .

Ասբոժ հատրաքտ (հատրեք) հասցընը .

Ասբոժ իրկու դոք (գաք) դրամեաքիտ (դրամեք)
տոյ .

Ասբոժ միխանեքին մհօնրհա (մուհանեքե միւն-
րահ) չենէ .

Ասբոժ բոնիտ ու գիւրծիտ յաջուղէ .

Ասբո՞ծ կէանք ու կարուղըթըն տոյ .

Ասբո՞ծ միտք չի կինէօղ skrsէ խըլասէ .

Ասբո՞ծ փրկէ փուրձոնքէ .

Ասբո՞ծ հմակէկիտ արասոյ (հմեկիհնի արայա ,
պօշա) չի տոյ .

Ասբո՞ծ ձիւքէտ պակոս չենէ .

Ասբո՞ծ հիտո՞ծ բիրնէ , չիւր նեփեսէ ազոտէ .

Ասբո՞ծ մըտքը կինոս .

Ասբո՞ծ հիգոյ քու դայդուն .

Ասբո՞ծ չիտոյ թորկիտ (չլքէ) .

Ասբո՞ծ ուղուրմութընը հասնը քիզ .

Ասբո՞ծ չոր էջոց (աչաց) խըլասէ (խեղաս իյլե-
սին) .

Ասբո՞ծ բըժըչկութըն , թըթըվութըն տոյ .

Արքայութոն բեժին նըս .

Ասբո՞ծ տոյ վորձքիդ .

Ասբո՞ծ հիտիտ կինոյ .

Ասբո՞ծ սաղլեխ (սաղլըզ) բիրնէ հոմ տոյ .

Ա՛հ ու վոխ չի քեչիս .

Ասբո՞ծ լըսէ քիզ , դոն էա ինձէ լըսիցիր .

Ասբո՞ծ առողջութըն տոյ .

Ասբո՞ծ եօխսուչութըն (եօզսուզըզ) չի տոյ .

Աշխարհը ուխնէք խըլասէ գեիզ .

Աշխարհը էաղէօթք հասնը քիզ .

Ասբո՞ծ եյլիփ , խաղաղութըն տոյ .

Ասբո՞ծ իտէ էօրիտ բարբ բիրէ .

Ասբո՞ծ ունախըստ սաղըշլամըշ էնէ .

Ասբո՞ծ եարսըս էնէ .

Ասբո՞ծ չի փալախէ .

Ասբո՞ծ իրիս չի դառցնէ .

Ասրո՞ժ կեանս՝ Կօլիւմ չի ցըցընը .

Ասրո՞ժ հեյէ խաքըրիւ .

Ասրո՞ժ սատանի շերէ փրկէ ու ազատէ .

Ասրո՞ժ սուտ խուսէօղ իրով իլէօղ մօրդէ խըլասէ .

Ասրո՞ժ անկրճակէ փաւրճոնքէ ազտաէ .

Ասրո՞ժ միզոց տէր չենէ .

Ասրո՞ժ բարիկոմ տուշմունէ խըլասէ .

Ասրո՞ժ ճամբանքիդ դուշոյ բիրէ .

Ասրո՞ժ տաւո պէքիրէն խըլասէ .

Ասրո՞ժ շարը խափոնէ՝ բարըն կատարէ .

Ասրո՞ժ սիւ իրիւ չի հոնէ .

Ասրո՞ժ հուրէ ու սուրէ խըլասէ .

Ասրո՞ժ մեղոցիւթ թուղութըն , հուգոտ արգա-
յութըն տոյ .

Ասրո՞ժ շերտովը (շեր արան , միզկվիր) ձիւոց ,
խըլասէ .

Ասրո՞ժ հուգոտ էջվէն բանոյ .

Ասրո՞ժ մինծիրը (մեծ) պակոս չենէ .

Ասրո՞ժ հարըսանուն Կօղսուզըխը չիտոյ .

Ասրո՞ժ գեղացուց (գեղացւոց , այսինքն Զէյ-
թունի) խեւիրը պակոս չենէ .

Ասրո՞ժ տոնիդ խերն ու պերեֆեան (պերեֆեք) չի
փոխընը .

Ասրո՞ժ բարը յիշատակ պեհէ .

Ասրո՞ժ իր տիւնը ճամբաջընը .

Ասրո՞ժ չոր նազորէ խըլասը .

Ասրո՞ժ սրտդ կակուղութըն տոյ .

Ասրո՞ժ վարցովոտ բարը հրիշտակը՝ պակոս չենէ .

Ասրո՞ժ իւրիւսիւսարիւ (տուխասար) կոտորուկ էնէ .

Ասրո՞ժ էջոցիւ լըս տոյ .

Ասբոծ բիրնէ հոմ տոյ .

Ասբոծ մարդոն բարիկումը պակոս չենէ .

Ասբոծ մորդը մարազը տէր չենէ .

Ասբոծ իրկու հատը իրիս չի ցըցընը (հասարակօրէն այր եւ կնոջ կ'ուղղուի եւ կը նշանակէ այրիանալով միւսանգամ չ'ամուսնանալ) .

Ասբոծ իշկոնիդ (իշուդ) ուսկունքը քորը չի դըպցընը .

Ասբոծ իշուկդ պակոս չենէ .

Ասբոծ վանոց (վանք) հոց չի կըրցընէ , (կը նշանակէ չ'իմարանալ) .

Ասբոծ մարդոն տոնը մասուսը պակոս չենէ .

Ասբոծ սուփրիտ (սուփրա) փոշոնքը պակոս չենէ .

Ասբոծ առնուս կիւնլիսիտ .

Ասբոծ տուշմունքտ էչվէն կուրցընէ .

Ասբոծ սէր միութըն տոյ .

Ասբոծ խայրու (խայրըլը) դոռ մը բանոյ .

Ասբոծ բարկութընը վիրէատ չի գոյ .

Ասբոծ մորդը իրիսոնց չը ձգէ .

Ասբոծ մարդուն ուժ ու լըս տոյ .

Ասբոծ էալ ըվըլէ հարստութընիտ .

Ասբոծ մեղք իթվըս (Աստուծոյ գթոյն արժանանաս) .

Ասբոծ հիգոյ զքիդ .

Ասբոծ իրիս չի դառցընը .

Ասբոծ չի խըմըչը .

Արիւիտ չի մերի .

Ասբոծ տողուցիտ տեղէաքը ցըցընէ .

Աստուծու ձէառքը վորցովոս պակոս չինը .

Ասբոծ զըզքիզ մարդութոն չի հանը .

Ասբոժդ դուրպեաք տիղ կօշիւմ չի տոյ .

Ասբոժ կիս ու կատոր չի թուղու .

Ասբոժ խուրհուրդիս կատորէ .

Ասբոժ հասնը քիզ .

Ասբոժ էրածըդ դէմը տոյ .

Բարը ընկիւրիւշ օոոս (րաւս) իգոս .

Բարը հրիւտոկնըն հասնըն քիզ .

Գիւրժիտ գքիզ ազոտէ .

Գիշիր ցիրիկ Գիւրիւստիւս պեհնի նը քիզ .

Դովընոտ մուրացկոնը պակոս չինը .

Եօրըր իրթոս նը՝ Ասբոժ հիտիտ կինոյ .

Եւովոլմ (կալրուլ) բոնա օոոս իգոյ .

Եւովոլմ Ասբոժ նենդէավիւրէ, թինավիւրէ խըլասէ .

Եւովոլմ հիւղ ճանկիս՝ խկի դառնոյ .

Էաս հին՝ հազոր նիւր .

Էխեաա (եազա) իրկուք նը (հարստութեան կըրկ-
նապատկութիւն կը նշանակէ) .

Էչոցիս լըս Գիւրիւստիւս պէհէ տըղիկիտ .

Էճիս ու դեճիս .

Էչէօկ ձէաօքիդ՝ սուլախըտ (սօլ) ու սուլախիտէա՝
էչէօկիտ մհօհեկան չինը .

Ըրկընոցը (երկնից) դոնիրը բացվըն քիզ .

Թիւրիկիտ (թեւդ) կենեչէ .

Իմ պակսուցոժը Ասբոժ ըլըցընէ (աղքատն ողոր-
մութիւն առած ատեն կ'ըսէ) .

Իրիւսխեաքիտ կոտորուկ էնէ .

Իտքիտ բարը բիրէ Ասբոժ .

Իրիսիտ իր Տիւլոնը ճիրմոկ հանը .

Իշկոնիտ կոճղոկը քորը չի դպցընը .

Լեզուէդ սաղլեխ (սաղլըզ) .

Լըս ճոռոյ քու պապուն հիգէն .

Խայլու (խայլըրլը) նը հարկիրիտ .

Խունկ ու միմ ճոռոյ քու պապուն ու քու մէօրը
հիգիկը .

Խըռըվիւրիտ (հեռաւորդ) պեհէ Ասրոծ .

Կըտաըճութօնիտ խերը ուտիա .

Կիւլի Կիւլի ուտիա .

Կենէաչն արիւիտ .

Հէալվիրիտ ու ծիրանոս .

Հազոր տարը ապրըս .

Հազոր իրանը (երանի) հուգոտ .

Հազոր իրնէկ հիգէտ .

Հինը նիրին խառնիա .

Հայր Աբրահամոյ պէտէֆեանը տոնիտ կինոյ .

Հուգէօվ սրբէօվ միըթարվըս .

Ձէանիտ Ասըծու անկէճը հասնը .

Ձէաուիտ էլիրէն քրճէն չի կըտըր .

Ղայդուսուզ էնէ դթիզ Ասրոծ .

Միկ բարձը վիրոյ վեւէք .

Մեղըր միջ կինոս .

Մարդութօն սորոյ (սրտ) անցնըս .

Մեղոցիտ թողութըն՝ հուգուտ արքավութըն .

Մուխենեքին դոռը չի տանը դթիզ Ասրոծ .

Շանքըր միջ կինոս .

Շէն ու պայծոռ նըս .

Ուխտիդ դապուլ նը .

Ուղունկիտ (եղունգ) իրկընցընէ Տէրը (յաջողու-
թիւն կը նշանակէ) .

Ուճոխ պուճոխ նըս (կը նշանակէ բազմացումն սե-
րենդեան) .

Չոր մորդէ խըլասէ .

Ջիրիկոնիա (ջորի) խովէն քորը չի դպցընը Ասրոծ .

Ռափայէլ հրիշտօկը հասնը քիզ .

Սուրբ պատարադիրը հասնըն քիզ .

Սուրբ պատարոզը բարբխէօս կինոյ .

Սուրբ ինտրիկացկոց (ընդ երեկոյեան) հրիշտօկը
հասնը քիզ .

Սուրբ ճեչուց ամենակալնըն հասնըն քիզ .

Սուրբ կիսաւոր հրիշտակնըն հասնըն քիզ .

Սուրբ Սարգէս բարբխէօս կինոյ .

Սուրյոխ (սորագ) էշվէտ էշէօկէտ զապոն (զաշրփ)
չինը .

Տէրը պէհէ տէրտէրը փըսակէ .

Տեղէնա , չը բանըս ու տպրըս .

Տընփընուտ մուսափիրը պակոս շենէ Ասրոծ .

Տուշկի (տոշկի) վիրոյ տպրըս (պաշտօնի բարձ-
րանալու նշանակութիւն ունի) .

Փարթոմ փեշոյ պիտը նը իմ տեղէան .

Փիւրիա հացէ լըցուը .

Քիւրիւստիւս պեհէ զքիզ .

Քիւրիւստիւս պեհէ միկ հատըկիտ .

Քիւրիւստիւս օղնակոն պահասոն նը քիզ .

Քեօթիւ էօր չի տիսնուս .

Քեսիտ պերքիկն .

ԱՆԻՄՔ

Աղ ու հոցիս էշվէտ բռնէ, աղ ու հոց հեջ չի կի-
րոր.

Ասրծէ առնուս պատիժիտ.

Ասրծէ կեծոկ թափը գազոթիտ.

Ասրծէ գոտնոս.

Ասրծէ կորոկ թափը տունտ ու տեղիտ.

Ասրոծ իգոյ հախէտ չի՞րք կուզիս.

Ասրոծ գբու տոնոկը աւրէ.

Ասրոծ դայիլ չի նը, չի՞րք ասիմ.

Ասրոծ չի թուզու քիզ.

Ասրոծ եօխ էնէ գընտ քիզ կիլոքը.

Ասրոծ պէլկադ տոյ.

Աշխարհը անիծք օղմուշ չէնէ գըգքիզ.

Առածըտ խերը չուտիտ.

Անգըհ (անդիի աշխարհը) գոտնոս.

Անտէր ու պոքումպոյ (պէյք-իւլ-մալ) մոնոս.

Անտէր մոնոս քու տիւրիւջը գոլխուն.

Անուներտ կըշնըվը, անուն չունցնոս.

Ասուծու ճեփքերէն քիրվըս.

Ասրոծ գբու անլը տունը աւրէ.

Առոծ ըռզակէտ խերը չուտիտ (չորքոտանոյ, այգ-
ւոյ, տան եւ այլն համար).

Անկըճէտ չէտիէօվը թիփ չիս էնի.

Ասրոծ հոխիս հոխ էնէ.

Առոծ ըռզակէտ խեր չի տեսնուս.

Անտիւրիւն օղորդ .

Ասընձ Ասբոժ բոն իգոյ գագոթիտ .

Անկըրժըկէ կըսկըժէ բոն իգոյ գագոթիտ .

Ացնիւոյ միրեղիւոյ , անցնըս ու միրեղըս .

Անպոս ու անմէար մոնոս .

Ասըժէ խըշիւ իգոյ գագոթիտ .

Ասբոժ իգոյ զալըս հախէտ .

Ասբոժ խանժէ հիգէտ ,

Ասբոժ կըսբէ հիգէտ .

Արիւէն հիտը ըլըվըս .

Ասընց Ասբոժ skars իգոյ գագոթիտ .

Ագոսվը կողոյ գագոթիտ .

Ագոսվը կըցէ հիգէտ .

Ագոսվ կիւմի կո կողոս սիվ խէանժիւղ .

Ասբոժ իգոյ իւթէօվ հախէտ , քու հիտը մորդ գո-
լիս չի կանը իլէ .

Անյիւատոսկ մեռել նըս .

Ասբոժ էնէ ձիդ՝ շիրք կուզիք միդ .

Ասբոժ ոչինչ էնէ .

Բանըս բանըս , կիրակոժ մախըրը թապըլտըս .

Բոնա ու գիւրժիտ օոոս չի գոյ .

Բանըս բանըս օղմուշ չինըս .

Բոնա ու գիւրժիտ դալըշմըշ չի նը .

Բարէօվ չի կինոս .

Բարէօվ չիրթոս ու բարէօվ չի գոս (առ ճանա-
պարհորդն) .

Բարէօվ չունցնոս զինտէատ ունցնու , համարիմ թը
հե՛ջ չունըս .

Բարէօվ չի վասկիս խնտէատ վաստոկ , գոլսխիտ
գիւնոյ .

Բարէօվ չառնուս .

Բարէօվ չուտիս .

Բարձր վիրոյ ուտիս առոծիտ (ստացեալս անիրա-
ւութեամբ) .

Բիրնէ հոմ չունցնոս .

Բիրոնըդ խափանը .

Բիրոնըդ բըպըռուը .

Բոնձրը քորէ ի վէար ընկնըս .

Գոլխոտ պէլեան պակոս չինը .

Գոլոխիտ չի կանըս գոտնոյ .

Գոլոխիտ ալեխ (այլոյ) չինը .

Գուղը (գող) քոր դիպնոյ չեկկեատ (առ չաղակ-
րատս) .

Գիտենը մոտնուս .

Գոլոխիտ ուտիս .

Գիտենը մոտնոյ պեօս ու պեօսիտ (պօյրն պօսրն) .

Գիտենը դընիմ կուլեկատ (կամ զըզքիզ) .

Գիտենը դընիմ դէմքիտ .

Գիտենը հըրիմ եախուշուխիտ .

Գիտնէն խուռուն իրթոս .

Դաբրէլ հրիտոկ հիգէտ առնու .

Դոլոխիտ բարձէն հէջ չի կալուը .

Դիտենը մոտնէաք ու կուրծանըք .

Դիտենը ցըցիմ .

Դիտենը մըտնիլոյ .

Դիտնէն խուռուն հըրիմ զըզքիզ .

Դիտնէն յատուկը մոտնոս .

Դոռ դոռ մուրոս՝ հոց չի կանըս գոտնոյ .

Դատաստանըն պարաբկոն նըս .

Դատաստանըն սիւ իրիս իրթոս .

Դոն գքու Ասրոծը .

Դոն գքու էղէօն (իւղովն) տապկըվըս .

Դոն գքու գոլխը ուտիս .

Դոն գքու ճիկեարը ուտիս .

Դոն հեջ չունցնոս .

Դոն գքու դատաստոնը .

Դոն քու կաթըն հեօփիւմը (հեօփիւ) .

Դոն գքու սրտէն կտրէ շարիյօղիս .

Դոժոխոց բեժին նըս .

Դոն գքու մըսը ընկնըս .

Դոսնոյ ճիկեարիս .

Եկրեաա գնիւոյ էլեր չունցնոս .

Եախուշոխիս գիտենը մոանոյ .

Զըխըմ ու զհիւր ուտիս .

Զիֆս նը ուտոծիս .

Զըխըմ կիւր չո կուտիս նը .

Զընա քիզ իւժէօզ իգոյ հախէտ

էրոժ կշիփիս էչվէտ բըռնէ .

էչվէտ փեռաը ննքը .

էվլասը իրիս չի տիանուս .

էոճիճէ իրթոս պիլիփեար (պիլիփիւ) .

էչոցիս լըսը խաւարը .

էօր ու արիւ չի տիանուս .

էրոժէտ գոանոս, էրաժէտ վախէ .

էրինիս ճոնկ ճոնկ խուժիւմ .

էօր չի կանըս տիանու, տիանոժ էօրըտ էաւո նը .

էրինը սըլըվըս .

էրոժ հսկիս (հսկի) հեյէտ նը (ոչնչանալ) .

էչվէտ պեօզ ընկնը .

էաւտ խուսոծիս Ասըծու ծոնարը իգոյ .

էշվեալը տապալներս ներքիւր .

իօժը խեթէ թիւիւ .

էրի կընըկ ու անտողոյ տըստըս (այրիանալ) .

էրկընըկ (եւ էրի կընըկ նշանակեն այրի) մոնոս .

էշվէտ իլլէ , էշվէտ միգ կոյ (աչքդ մեզի տնկեր ես) .

էշվէտ կուրնոյ .

էշվէտ չըրթընէ (աչքերուդ մէջ չոր թան լինի —
ճպոխ) .

էոցըթը խոլպ նըս .

էոցըթը (եռ-ծիւթ) քոռոս .

էագիւղգիւտ (այգուց ննջեցելոյ) ուտիւմ .

էսէօր կինոս , վողը չի կինոս .

էսէօր չիւր վողը չի հասնըս .

էօլիւմեհան պէքոր տհարս իգոյ գագոթիւտ .

էատ քորէն իտ չո մոնոս .

էոցըթը ժառանգիւ .

Ըոզակէտ խերը չուտիւ .

Ըոզակէ իրիւ չո տիսնուս .

Թո՛ւ լը մո՛ւրն ի վէրէատ .

Թիւիւտ չուպոն նը .

ինտ իւր իրթոս բոնտ օոռոս չի գոյ .

իրիսիւտ սիւ նը .

ինք միր տոնը աւրից՝ Ասբոծ էա իրինց աւրէ .

իրոծ էյլիսիւ էշվէտ կուրցնէ .

իրիք հերիր տեսնըվութը հայրապիտանն անիծքը
վիրէատ (կամ վորցոյնուտ) նը .

իշալլահ , իս իմ Ասբոծը գիտիւմ նը՝ քիգ չո թուղու .

ինտիւր իրթոս բոնիւտ չէագ իգոյ .

իւմ օհը չո թուղու քիգ .

իրթոս ու չո կանըս իգոյ , ճուռիւտ կըտողը .

Իմ նեղն ու ցովը փխրիտ լըցուը .
 Իւժէօվ դըհիտ գիտենը իգոյ .
 Իւժէօվ քոր ընկնը գագոթիտ .
 Իրկուշաթը առաւտոն գիտենը մոտնոս .
 Իրկու էջվէտ կուրնոյ .
 Իսկի ճանկիս հիւղ դառնոյ .
 Ինոճ ցաւը հանաքալըս .
 Իրիք ուրըկ՝ (օր) միկ սանաքըկ նըս .
 Իտէ էօրը սիւ իրիս իրթոս .
 Իրկու էջկունքիդ միկտեղ կուրնոյ .
 Լիզոտ կապուը , չո կանըս խուսը .
 Լիզոտ կըտուը , չոց գէնտ քիզ մինծէն դէմը կո
 խեղուվըս .
 Լաթիրիտ չո կանըս մեչի , կողպուրտ նը (կողոպուտ
 վնի) .
 Լեշփէատ իլլիս .
 Խեկեհատ (խանե) խարապը .
 Խաթըրիտ կըշնըվը , խաթըր չունցնոս .
 Խուամոծ ջորիտ քթէտ իգոյ .
 Խիւց ու խըլէկ (վէրք) հանիս իրիսիտ .
 Խըլէկ հանիս նուռսուզ իրիսիտ .
 Խըլէկ հանիս էաշիւնիւրք իրիսիտ .
 Խորքլոխ նըս .
 Խըլպալիկ (վէրք) հանիս իրիսիտ .
 Խատասիրէտ խեքը չուտիս .
 Ծուռնկիտ փխրէտ փակչը .
 Ծընկէկ նըս , տեղոցիտ չո կանըս էռվերտոյ .
 Կայէնին եէօթը պատիժը վիրէատ նը .
 Կայէնին ու Ուդին (Յուդայ) պատիժնին առնուս .
 Կուրծանըս տնէօք .

կուլճիտ խնրը չուտիս .

կուրծքիդ սեպակունիս (կուրծքդ անառեմ՝ կը նշա-
նակէ մեռելդ լուամ) .

կորակ թափը գագոթիտ .

կիր (կոյր) ու խորոռում արատըս .

կիս ու կատոր մոնոս .

կիր, կիր, կիր մուկնէս զըզքիզ ուտէ .

կիր ու կուզ նըս .

կըտըն մեռիլ .

կըտըն փուր նըս (կտրիճութեանդ ատեն, յերի-
տասարդութեան փորդ ուռնայ) .

կոթիս հարում նը քիզ (մայրն իւր որդւոյն) .

կըսոճ հիգէ նըս .

կու խնդրիմ Ասըծէ ուր գիշիրիս պառկիս նը՝ չիւր
տանկնամազը չո կանըս իլի .

կենէաչ տիրիւէ հարսոք իրթոս .

կենէաչ տիրեւ չունցնոս .

կըտըն մեռիլ լէար օձ (բարակ օձ կամ իժ) կոթն
ու էրինը կո մակըրդիս (մակարդեւ) .

կըսէ զհիգէտ Ասոճ, Անթըրիոյ (Այնթապ) կիւ-
սէօղ, անատին խուսէօղ .

կո խնդրիմ Տիւրիւջմէ ուր՝ քառսոն էօրը վիրէատ
հաւալոյ (հեւալի) նը .

կըսէ խանծէ ֆէլիս .

Հոցը ձիավիր՝ դոն հայօն (եւեայ), վազիս վազիս՝
իտիւր չո կանըս հասնը .

Հոց իվրի հացը չո կանըս դնի .

Հոց չո կանըս գոտնոյ եւալոյն, հոց չո՝ հաւնըս .

Հուգոտ խնրը չուտիս .

Հօր եւ որդւոյ անիծոճ նըս .

Հուր ու սուր թափը գագոթիւ .
Հարում նը ուտոժ հոցիւ .
Համբիծիւ ուտիւմ .
Հունտ ու մազմուզոկիւ շիրնոյ .
Հրիշտակաւիւ հիգէտ առնու (կամ խըշտէ) .
Հիգէտ կըշնըվը .
Հունտիդ շիրնոյ .
Հիգէտ ու մարմինքիւ կապվը .
Հիգէ չո կանըս տոյ (առ հայհոյիշն հոգւոյ) .
Հարում նը կիրոժ հոցիւ .
Հարում զաւոյ սիւ խէանծիւղ .
Ձէանտու փիւրիւ քեշուր .
Ղուրպոն նըս ու դէսկան առնուս .
Ղեզկան (զազա) գոլխոտ չո կապվը .
Ղուրպոն նըս ուտոժ հացըտ .
Ղարալքըս գիտենը մոտնոյ .
Ղոռոն (ղըռան , գըռան-ջարդ) մոտնոյ մըջվըտ .
Ճակոտիւ մեռոժ տիանում .
Ճուռիւ կըտուր .
Ճիկկարիւ ուտիւմ .
Ճիկկարիւ խաշիւմ .
Ճիկկարիւ չոնը ուտէ .
Ճիկկարիւ աղընծիւմ .
Ճուռիւ կըտուր , չո կանըս իգոյ .
Մուրաղըտ չո հասնըս .
Մարդոյ իրիւ չո կանըս հեյի .
Մուրէօղ մուրացկոն նըս .
Մուրն ի վրէատ մոր ջորն ի վրէատ .
Մուրուքիւ էրինը պըլըվը .
Մուրուքիւ թափը .

Միմ թափը անկէճիւմ .

Մուրն ի վրէժադ , թորչոծ հաւուկ (առ վատս ,
տկարս) .

Մուրն խմբի (ի վերայ) հաշոտ (հաշ) գիտիս թը
եկօթը օգտուզը միկ մաղարոյ կոյ .

Մըսիտ ուտիմ , միրթիտ հագնեմ .

Մաթչո լըր (հիւծիւ) սէատկէ .

Միւլիտ կըշնըվը .

Միր քալըն (քալիս) Ասրոծ թուղ էնէ , մինք քալը
չունընք .

Մինծ բոն իգոյ գագոթիտ .

Մինծ քունը քնանոս .

Մեռիլէտ ջորը շուղցունիմ .

Մեռիլէտ անսպատոնք մոնոյ .

Մուրն ու մոր ջորը պատէ զհիգէտ .

Մըսիտ խեղբիմ , ուտիմ .

Մինծ քորէ ի վէար ընկնըս .

Մինծ քոր ընկնը գագոթիտ .

Մեռիլէտ հոցը ուտիտ .

Նա՛քը չիւր վողը չիւլիտ .

Նա՛քը չո հանգչը քու մեռիլը .

Նա՛քը զատտոկ չո կանըս ունցնոյ .

Նա՛քը հէչ չո խալըօըս .

Նա՛քը պելեֆիր , չիբբըր ասիմ զինտէնիկ նը .

Շարիյօթիտ գուլիւրտ փըլը .

Շարիյօթէտ կըշնըվըս .

Շոնը հոլը (հալ) ու քու հոլը միկ նը .

Շիւղ չիւղ պառկըս՝ պօղ պօղ իւլըս .

Ուճոխատու պուճոխիտ անցնը .

Ուճոխիտ միւրս նը .

Ռանխիստ իհօր նը .

Ռանխիստ պաշտոն խուսը .

Ռանխիստ պարմը նը .

Ռանխի շո կապիս .

Ռանխիստ կիր շոր լըցուք .

Ռանխիստ էյրոն լըցուք (եթէ ծառի մ'արմատն
չիճ (աշրան) լեցնեն՝ սակաւ ինչ յետոյ կը շոր-
նայ կ'ըսեն) .

Ռանխի շունցնոս .

Ռանխիստ գիր մուկ բիւն .

Ռայ, թիւիս կըտօք , չի կանքս կըսցընի .

Ռաշթուփիւն .

Ռաշթըփըս ու թընաթըփըս .

Ռափս ուափս՝ փիւրիս չի լըցուք .

Ռառոճ հոցիս հարոմ նը քիզ .

Ռառոճ հոցիս , չիս էնի սէտակիւն .

Ռափս ուափս՝ ուառոճիտէս գըզքիզ ուափ .

Ռանցածիս բարձր վիրոյ ուափս .

Չարլամը լը՛ք , լեզդ թուզ պատուք .

Չունցնոս պիլիփսեր .

Չիւր գէտիւնցը Փիւրփափս իրփիս սիւ նը .

Չի համերս ու չի պըտղըս ննքր .

Չիւր տանը շո համերս .

Չո փրթթըս էտտ ցառուն .

Չիւրս հոգոյ բէճ իւլիս .

Չիւր ճանկնաւազը չի համերս .

Չո կանքս պատկէ .

Պարմը նըս .

Պիլիփր , տանիս հոց չի գըտուք .

Պույրս (պոյ) խերը շուափս , անձոյ (անձագ)

պէտքիս մընծցըցը .

Պէլիֆիւր դեզեան (զազա) պահոս շինը .

Պերսոն բոն իգոյ գազօթիւ .

Պերսոն շերտ իգոյ գազօթիւ .

Պերսոն բոն իգոյ սրշրիւ գազօթիւ .

Պերսոն դուրպեաթ իգոյ գազօթիւ .

Պերսոն փութանք իգոյ գազօթիւ .

Պերսոն խըշըմի հանգըսըս .

Պերսոն խըշըմ իգոյ գազօթիւ .

Պերսոն աւ անօրէն փութանք իգոյ գազօթիւ .

Պընտ իրիտիա դիտենը մուտնոյ , խըզուլներէ կար-

կըտած .

Պէլիֆիւր մուրազըս շի կանըս հասնը .

Պաշդուշ իս էգի՝ կո կոզոս միւր վերէան .

Ջըհաննըմըն պըտըսը իրիտ .

Ջըհաննըմըն եանաթ (անդի) պուճոխը իրիտ .

Ջըհաննըմըն գոնն .

Ջահնոյ (ճիհան գետ) ջուրը իրիտ .

Ջարդըվիւթ ջարդըվթ՝ աւ միկ հոս շո մընէաթ .

Ջարդըվթ աւ փըրթըմ իրիտնուտ .

Մաղըղլան (սաղըլթ իլի) շի կինոս .

Մաղըղլան շիրթոս , սաղըղլանէա շի գոս .

Մուտ խուսան սատանոյ նըս .

Սիրածէա գոտնոս .

Սիվ էօր իգոյ գազօթիւ .

Սատանոյ նըս , սատանութանիտ իգոս ճիւնեաթ

շուեցնոս .

Սիվ փարդապիտնէն (սեւ փարդապետ — սատանոյ

կը նշանակէ) խախէա հասնըն .

Սիվ կենծիլէ նըս .

Սիւլ խէ անծիւղ .

Սիւլ կոտով (կտաւ) նըս պելեքիր .

Սիւլ ու խաւոր՝ մուկթ ու մուր .

Սիւլ Զատըկ (*) իգոյ գագոթիւ .

Սիւլ սեւեռնէնին խուսը հիւիւ .

Սիւլ Զոր նըս .

Սիւլ շոնվուցը տէրաւ իգոյ գագոթիւ .

Սիւլ skars իգոյ գագոթիւ .

Վայ նը քիզ .

Վայ քու բոռնոճ բանըն .

Վորձքիւտ քէան էատ նը .

Վիրէատ խոշխոշոմ .

Վիրէատ խողոմ (տե՛ս ի նկարագրութեան մահուան եւ թաղման) .

Տիւոճ էօրիւ էատ նը .

Տոն չի կանըս նը .

Տոնտ ու տեղոցիւ քեքիրկին նըս .

Տնէօք կուրժանըս .

Տուկիւ գագոթիւ փըլէ .

Տողուցիւ խէրը չուտիս .

Տոնտ ու տեղիւ վիրանոյ (վերանի) նը .

Տուշոկ ընկներս պելեքնար .

Տոն ու աիղ չինըս .

Տըղըտ իրիւր մեռոճ տիւնուս .

Տովոճ կոթիւ հարում նը քիզ .

Տըղէ հարսոք իրթոս .

Տախակի վիրոյ իւլիս .

(*) Զատիկ քսոն ամեն տաղաւարաց համար կը դորձածեն ,
ոմանք՝ տաղաւարանուանց հետ միանգամայն զոր օրինակ . Ծննդ-
եան Զատիկ , Աստուածածնայ Զատիկ եւայլն Գերմանիկի Հայր
զու նոյնպէս կըսեն :

փււրիտ հացէ չի լըցուը, կոռնոկտէա լաթիրէ.
 փուրձոնքը գոլխոտ պակոս չի նը.
 փարչո փարչո լըր, կէօտիւրէա կէօտիւր.
 փըշիջօրը էլէր չունցնոս.
 փունճուխիտ առնուճ խոխիտ խաղոմ (տէս ի նկա-
 րագրութեան մահուան եւ թաղման).
 փոսկոն (փրսխիկ-կատու) ձենէ հարսոք իրթոս.
 փիս նագրը (նագար) հանդըպըս.
 փիս նեփեսէ հալըս.
 ֆեօր օլասը.
 ֆթէա ու փընչէա իգոյ կիրոծ հոցիտ ու խուճոծ
 ջորիտ.
 ֆուն չունցնոս.
 ֆիւրիւստիւս մէառնէօղ Ուղէան նըս.
 ֆու սըրտը քիզ բէարիխիւս.
 ֆու սէպէօրը (գայեակ) փիւրը ցաւը.
 ֆառսոն էօրը վիրէատ չի բիւէ.
 ֆուրսոն տըստըս.
 ֆի (բու) մէարը վիրէատ խոշխոշոյ (խըշխըշալ).
 Օղմուշ ու պիթմըշ չինըս.
 Օնանըղը պաքասընա.
 Օզգիտ ու տոկիտ (տակ, արմատ, ցեղ) չիրնոյ.
 Օրկոնցը քոր թափը գագոթիտ.
 Օսղիտ ճոռոյ (աստղի վազէ, անկանի (*)) մեռնիս).

Անիծք տըվէօղ մարգոն կիսին թը՝ բիրնէա իւէ
 ծիւցըա լըցուը, էղիցի էղիցի՝ վիրէատ էղիցի:

(*) Լուսեղէն երեսոյթն յերկինս, զոր ռամիկը անկումն աստեղ
 կ'անուանեն, եւ կը գուշակեն այտի մահ:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Ե Ր Դ Մ Ո Ւ Ն Ք

Ասըծու (Աստուծոյ) առջիւ սիւիրիս թուղ իրթոմ
թը իս գուղցոյ .

Աւտոսնը՝ աւտոյ , չ'աւտոս նը՝ Չաւտորը գոնոյ
(Չաւտար անուն տեղ մը կայ Զէյթունի ճանա-
պարհի մօտ, ուր յաճախ ոճիրք տեղի կ'ուենան) .

Ան ասուն թ'ան ասուն աւտարէօն (աւետարան) վո-
կոյ (անթիւ , անհամար աւետարան վկայ) .

Անկրծուկէ փուրճոնքէ տես թուղ գոյ գագոթիս .

Ասըծու իւրշլմին ուղրամըշ թուղ նըմ .

Արիւին հիտը թուղ մերիմ .

Ասրոծ վոկոյ .

Բաթուկ վոկոյ .

Բարը աղէօթքիտ վոկոյ .

Դըժըխոցը միջ թուղ կըտըմ .

Եէօթը դըռնին Ասըծոծին վոկոյ .

Էկեսար էաս քիզ թուղում նը՝ Ասրոծ էա ինծէ չի
թուղու .

Էյլիփիա էչվէս թուղ բըռնէ՝ իս քիզ ֆօթութըն է-
նիմ նը .

Էկեսար իս տուշմուլըս կոռնուկ դառցընիմ նը՝ չիւր
կիծիծ (չոր կոծիծ) թուղ նըմ .

Ըրկընոցը (յերկնից) չիւր (մինչեւ) գիտէն աւ-
տարէօն վոկոյ .

Իմ պապուն միռոժ իրիսը թուղ տխնում կկհար
թը քիզ թուղում էամ.

Իրկենք գիտէն դալըշմըշ նը նը՝ էվէա զքիզ կ'սպա-
նիմ.

Իրկենք գիտէն վոկոյ.

Ինը դոս հրիշտոկ վոկոյ.

Իմ պապուն միռոժ մըսը թուղ ուտիմ թը էամ
քիզ թուղում.

Խստասիրիս խնրը չուտիմ.

Մունկիս փիւրիս թուղ փակչը՝ թը իս գուղութըն
իրթում.

Կորգիս վոկոյ.

Կըրակըն մըջը թուղ կըտըմ.

Կեծոկ թուղ թափը գագոթիս.

Կայինին (Կայէն) աղջիրը (Եղջիւր) ճակոտիս թուղ
փուսնը.

Կապեալ թուղ իրթում.

Կորգիս բարըխէօս թուղ կինոյ.

Հազոր Եկղըն (Երղըն) աւտարէօն վոկոյ.

Հազոր բեռ աւտարէօն վոկոյ.

Հազոր բիւրիւն (բիւր) Եկղըն աւտարէօն վոկոյ.

Հուգոս ու արիվոս խնրը չուտիմ.

Ծիրմոկ Ասրըծոժին վոկոյ.

Ճակտըտ պանըր վոկոյ.

Ճակտըտ կիւրկիւտ վոկոյ.

Ճակտըտ մէօռիւն վոկոյ.

Միկ պըտըկ ունըմ խնրը չուտիմ.

Միկ հիգէ ունըմ խնրը չուտիմ.

Մուրազըս թուղ չի հասնըմ.

Նահատոկ վոկոյ.

Պախարէ խէաշ վոկոյ .

Պապոյը (վապալ) վըղիս թուղ նը .

Սուրբ Սարգէս վոկոյ .

Սուրբ Գէօճիւրք վոկոյ .

Սուրբ Կարապետ վոկոյ .

Սուրբ Գլխադիր վոկոյ .

Սուրբ պատարագներ վոկոյ .

Սուրբ պատարոգ վոկոյ .

Սուրբ Պարսոմ վոկոյ .

Սուրբ Թիւրիւս վոկոյ .

Սուրբ Մեռեկերիօսը խըշտը ճիկէարիս թուղ ցցուը .

Տէրաիւրիւջը կորդը հուգոս խասիմ թուղ նը .

Փիւրիւստիւս վոկոյ .

Քեղքերութընը (քու եղբայրութիւն) վոկոյ .

Քու պապութընը վոկոյ .

Քու աղ ու հոցը էշվէս թուղ բոնէ .

Քրիստոնեայ իս նը աւտոյ .

Քու քուրութընը վոկոյ .

Քու մերութընը վոկոյ .

Քու մեղոցը ճոշոյոպը թուղ տոմ իս , եկեալ էաթ
բանըն խասպոս ունիմ նը .

Քառսոն բեռ աւտարէօն վոկոյ .

Քառսոն մանուկ վոկոյ .

Քառսուն էօրը վիրէաս թուղ բիւլէ .

Օտոյ արիւ վոկոյ .

Օսոյ բարը էօրը բարըխէօս թուղ կինոյ թը չ'սպա-
նիմ գքիզ :

ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆՔ

Եթէ մէկը մարդ մ'սպանէ՝ ժամանակ անցնելէ յետոյ հաշտարարք առ տէրն սպանեւոյն ղխմելով ներողութիւն կը խնդրեն եւ կանխաւ հաճութիւնն ստանալէ յետոյ՝ պատուաւոր թաղեցւոց հետ միանալով մարդասպանն նորա տունն կը տանին. սոյն պարագային մէջ ոճրագործն եօթն կանգուն կտառ կ'առնու իւր հետ իբր պատանք եւ յորժամ մերձենայ սպանեւոյն տան՝ զլուխը կը փաթտէ եւ նորա տիրոջ ոտից փարեւով կ'ըսէ « հախի իս՝ հախի պատժութիւն, չի՞րք կուզիս էրօ » որոյ կը պատասխանէ — « բոն ըջ պիտը էնը, չի՞րք էր էտա զանոթնու բեշիցիր » . նմանօրինակ փոխանակեալ խօսքերէ յետոյ՝ հաշտարարք վերստին կը թախանձեն, որ վերջապէս կը ներէ — « դոն իմ տեղէս իս, պիտը սպաննըէս նը՝ բոն չիմ էնի էալ » ըսելով:

Յետոյ՝ գինի կը հրամցնեն եւ սպանելը իւր հաւառակորդին բաժակ մը գինի տալով ձեռքն կը համբուրէ, այսպիսեօք եւ ի հնդումն մի քանի հատ փօսքալի (Զէյթունեցւոց կօշկի տնուն) խոնձ եւ առ առաւելն հազար դահեկանի չափ դրամ տալով խնդիրն կը վերջանայ եղեր. բայց մի քանի տարիէ ի վեր փոխարինութեան կամ տուգանաց դրամն աստիճանաբար առաւելած է:

Եթէ մարդասպանն կամ ոճրագործն քան զիւր հակառակորդն զօրաւոր լինի՝ առանց բան մը վը-

ճարելու յայս սպանելոյն ազգականաց համարձակ
կը շրջի եղեր :

Ոճրագործ մը մինչ հաշտութեան օրն եւ եթէ
չ'գոյանայ իսկ՝ սոյն ազատութիւնն կատարելապէս
կը վայելէ այլ թաղի մէջ :

Որ եւ է վէճի առթիւ՝ հակառակորդաց մին ի
գիշերայն գաղտագողի միւսոյն տունն կը մտնայ
եւ նորա ննջած ատեն զոյգ մը գնտակով հրացան
մ'արձակելու չափ վառօդ բարձին քով կը դնէ ի
տես եւ ընդ փոյթ կը հեռանայ . սա՛ առաւօտուն
արթննալով կը տեսնէ ու կ'երկնջի . նշանակութիւն
որա է « ահա՛ եկայ քովդ եւ ունէի ամէն միջոց
զքեզ սպանելու բայց չըրի , դադրէ՛ ուրեմն եւ
գու այլ եւս ինձ հակառակելէ » :

Եթէ հակառակորդն քան զառաջինն զօրաւորա-
գոյն լինի՝ իրարու հանդիպած ատեն զինուք կը
կռուին :

Նոյնպէս՝ հակառակորդաց մին ի գիշերայն եկե-
ղեցւոյ բակէն դագաղն կը գողնայ ու կը տանի
թշնամոյն դուռն ի վեր կը կանգնեցնէ , այս ըս-
տառնալիք մ'է , որ կը նշանակէ « զքիզ լեշիեալն
վիրէան կո հանիմ » — զքեզ դագաղին վրայ կը հա-
նեմ (կ'սպանեմ) :

Իրարու այգի մտնելով որթերն կը կտրեն յար-
մատոյ :

Այգեաց մէջ դաճուած տուններն կ'այրեն :

Եզին , ձիին , ջորիին եւ իշուն ագին կամ ական-
ջըն կը կտրեն .

Ժամը 12ին կամ անկէ վերջ եթէ իրարու կնոջ
հանդիպին՝ գլխոյն եւ երեսին ծածկոցն կամ ճակ-
տէն ոսկին կը յափշտակեն :

Այգեաց մէջ փռուած չամիչն եթէ թարմ է՝ կը կոխոտեն, իսկ եթէ չոր՝ կը գողանան։

Երեկոյէն սկսեալ ցկէս գիշեր իրարու տուն կը քարկոծեն։

Տանեաց վերայ գտնուած լող քարն՝ բարձր տան մը վրայէն թշնամւոյն տանեաց(*) վերայ կը նետեն, որ առաստաղի ձողերն կը կոտրէ։

Միսնելոյգքն, որք հողէ կամ փայտէ չինուած են՝ կը փլցունեն։

Եթէ հակառակորդաց մին ջաղացք ունի՝ ջրի ընթացքն կը խափանեն խողովակին մէջ քար ձգելով։

Վրիժառութիւնն ընդհանրապէս սերնդական հանգամանք մ'ունի։

ԳԼՈՒԽ Զ.

Ա Ռ Ա Կ Ք

Առուըն (առուին) վիրէան սլարտըզ (սլարտէզ) տիզ կո ծախէք.

Առչէ խուսէօղը ըչգիտէ թը խտէ խուսէօղը չի՞րք սլըտը ասէ.

Անուչ չէօը պեզիդկանըն բիրոնը չո մեչըցընի.

Ասըծու պեհոծը գէալը չէ խըլի.

Առչէ պատուըն պատու չէ հասնը.

(*) Տուներն և հետեւորար տանիքն այնչափ իրարու կից են, որ մարդ միոյն վերայ ելլելով՝ կարող է շրջիլ ամբողջ Զէյթունի տանեաց վերայ։

Անուշ (անոշ հրաձեցիք) ասոք ձեյի՝ քոսնէա
(քաս) հիտը մի կոչնո .

Ասրոծ էօաիւր հիգիյէ արվի չո կանը առնու .

Արքայութընը չո տանըն նը՝ դժէօղքը հափ հազրէ .

Ախանիս (ահնագ) չոնը տապկոծ հաւկըթըն ումը
կենէ .

Աղբոտ էրիցոն (երիցուն) քէարիւզը չո բոնըվը .

Ամանոք իշոն էնըսը դավիրը իւլլէնիհան կո կըարը .

Ասրոծ մորդը սուշու չենէ .

Ասրոծ մորդը քեքիրկին չենէ .

✚ Ասրոծ մորդը տխոծ աւուրը խա չո թուզու .

Արիւր արիւ է նը՝ ամին տիզ չէ ցեթի .

Ալկիա (ալլի , եհմ) կուրոյ խոլխոնճոյ .

Ամին գոտոկ դնէօղը էրիկ մորդ չէ նը , ամին չէաշ
կէապէօղնէա կընըկ չէ նը .

Բարը հրիշտոկ հասիւ է էօաիւր կիսըն (կ'ըսեն) .

Բոց բիրոնը անըթը չո մոնոյ .

Բիւլիս բիւլիս՝ ջաղորցքը պիտը գոս .

Բարը չէօսը ըսընա է գէնա փերեան .

Գըլարբուիցով արսարկը գոտով խըփներկը .

Գոլոխիտ Պերիա (Պերուր) լիւոնը գոլոխը կո մանը
հեշ տումնը պակոս չէնը .

Գիւզը գիւզէն գուզցով Ասրոծ տխոծ զարմացով .

Դրացնոն համոր ջիրէ մը ուզէ ուր՝ Ասրոծ քիզ էշ
մը տոյ .

Դոսիա դայիւմ էրո՝ դրացընիա գիւզ մենի .

Դրացնոն տպուրը անուշ կուներ .

Եօր (ուր) իրթոս նը՝ դուրուշը քառսոն փաւոյ է .

Զըգ (զոյգ) Տալոլը (Տալուլ — թմբուկ) հարըսարն
հարսնըցը կո ծիծուր .

Ձիպիլիիք պառկելէօվ՝ Թէագէավիւրէ՝ Երոզ մի՝
տիանու .

Ձաղոռ դագովը (կաքաւ) իրկու իւտէօքնէա կընկնը,
Էօջոն (արջուռն) էվէաչքը (երգն) իվրի տանծըն .

Էրդը քինը չէր նը՝ էօրդիւցնէա քինը չէր, Էանի
հօցը քինը չէր նը փիւրնէա քինը չէր

Էօծը էօծ է նը՝ ջոր խոււմիլնիսկան չէ՝ խեթի .

Էջը՝ Էջոն քէօվը կապիա նը Էա առէօցը կառնու Էա
փառէօցը .

Էօճիճի Էերեան կո սաղնոյ՝ իլկա լիզուէ Էերեան
չէ սաղնոյ .

Էօծը պըտիկ իսկան սպանիլոյ է .

Էառջը էգոն (այգւոյն) պէհիլէ դորոծ նը՝ Էացիր
է թը չիմ պէհի .

Էգէն ասիր է թը՝ իմ էգրէարը սպանէ՝ իա էրինը
կոտոմ .

Էօծը կիտէ թը չուր իա իմ ագէն հեյիմ նը՝ քիզ խեր
չիմ էնի .

Էատ հին՝ հազոր նիւր կիտին .

Էրինը էրինէօվ չին վոլ .

Էսէաչ քիզ ասիղը ցըցէ՝ հապոյէա Էնկըրիւջիւտ
մախոք մը ցըցէ .

Էկիւար բո մը (բան մը) միկի մը հիգէ չոտ կուզէ
նը՝ կիտին թը հըվընար (հիւանդի) կո հարցընիա .

Էրկըթէ դոռը փեաէ դոռոնը մկոհսկան է .

Էրվընէօզ ֆոյը ցըցընիլ չո՛ւզէ .

Էչ գիտիա չափախէ՝ կո խուսըս քուփախէ (քոփազ,
սկսիր քոփաղը) .

Թըտ կապոռը կոյ .

Թեաֆ (թեֆ) քոր նիր (լինէիր) ու գոլոխիա պատուր .

Թուրքահանութեան անոնք իշխոյ համար՝ թեո քեչոյ
կիսին .

Թըղլըկ մը կո բիլէ Ասրոծ գիտէ օմ (ո՛ւմ) գոլթա
սիտը դրուը .

Թեհերիս քոր մի դնի .

Թեռը հասոծ տիղը հանկըցէ (հանգոյցէ) .

Թո՛ւղ ուր անմիղք միկ մը քործըծէ .

Խառէն (ոտք) կարի թը՝ ծոռ սիտը փուսնոյ ,

Իրկիր քու բիրոնը հոց դընը նը՝ փիւրիտ չէ լըցուը .

Իրր ածիս նը՝ էան տեամը գազըճէ .

Իրկէնքըն ի վիր քոր կու քարիս՝ գոլթիտ գէմը
կո կոտոս .

Իմ թուրը կո քեչիս՝ իմ վըղը կո կըպցընիս .

Խառէտ ուղունկներն կուրոյ մեկնէ .

Իրկոթը չիւղ իսկանն ծիծիւյ է .

Իրկու խառէտ միկ քասլընը միջ կոյ .

Ինտէան չէօն կոտոս ուր՝ մեռիլնին կո ծիծաղըն .

Իս աղո (աղա) դոն աղո , ջաղորցքն իւզ թուղ
աղոյ (աղալ) .

Լոիս նը՝ էածիւթը օռուս կուտիս .

Լափըստիէ (նապաստակ) դալըրմին (գալուրմա) մի-
ջը քաքոր (ապականեցիր) .

Խապորը օլուուզ տըղէն օն (ան) .

Խեւն հասի մուրազըն՝ խըլանընէա տըստիր է կեօզ-
չիմիշ կո կենէ .

Խեւը հարսնըքնէ կիցոծ նը՝ ասիր է թը՝ էաս գէնտ
միր տոնը ըսընտ է .

Խըլանուն հիտը փուշ կիսուրս ըսընտ է՝ գէնտ խե-
ւուն հիտը խկի .

Խեւ մ՛ու խըլանը մը քառսոն տարը դերձոն մ՛է

քեզո՞ծ չէ՛ կանցո՞ծ կտրո՞ծ .

կեւը գիտէ թը աշխորհ խեւ է .

կըլանը տուշմոնը ըսընտ է զէնտ խեւ բարիկոմը .

կեւն ասոց խօսլքիւղըն (խալք իսկն) աւասոց .

Ծիր մուկը իրկոթ կո կտրէ .

կուրղը՝ քաղցածըն մոնտրը կո վրթէ .

կեչոսը շիրթո՞ծ իփեան մի սըթըվը (սոքսուիլ) .

կիսին թը՝ դոն էատ բոնը շենխա նը մըկնիբը ղըզըր
կիւլին .

կիսին թը՝ շիրք իւէ նը կարդացուղէն կիւլէ .

կիրիկը (կորեակ) ջըրլը տիղը կու ցանին .

կիսին թը՝ կուշկորը բիպեկ (բոպիկ) , ջհալոկը միր-
կիկ (մերկ) կուենը .

կոտրո՞ծ հոցը չէ՛ կցուը .

Հիգէս թըզըն կըտըն միջը կոյ .

Հիգէս քըթըս ծէարը կոյ .

Հարըստնոն համոր կիսին թը՝ էատ կիրիկ ունը էօ-
տիւր չէօուը կո բոնըվը .

Հոցը հոցպանըն տուր , կիսը ուտէ նը՝ կիսնէա
պէտք բիրէ .

Հիւանդութէօն համոր կիսին թը՝ դանդրէօվ (գան-
քար իլիկ) կո մոտնոյ շիրխմէօվէա կիւլէ .

Հաւկըթըն մըջը մող կը փնտռիս .

Հովը (հաւ) հովէ նը՝ ջոր խուսիլնիփեան դարվիբ
կո հիյէ .

Հալպոյ (Հալէպ—Բերիս) համբոնքը ըղտը իզ կո
փնարոէ .

Ձէառքիդ չը հասո՞ծ տիղը մի իրկէնցընի .

Ձէադըն(՝) մէարը ձագիրնի կիւնի .

(՝) Ձէագ (ձագ) բառն կը գործածեն ամէն Թուրքոյ համար :

Ղայէն (զայասան) ընկնէօղը չէ՛ մեռնը իլլիւ՛
իշու փորձովոն ընկնէօղը կո մեռնը .

Ղասնոխը նեղ պիտը բոնիս ուր՝ սրբամը կանը հաս-
ցընի .

Ղարդալորը (թաղի մ'անուն ի Զէյթուն) իրկու
հօվ ծիծուքն նը միգ զարոր է .

Մուսափիրըն զոնուսափիրը չէ սիրի , տոնը աէրը իր-
կուքնէա չէ սիրի .

Մուսափիրին ուզոճը տոնը ախլիւջը իրկու օյիկ
կուքնը .

Մինծ փիճուն տակը փիճէ չէ՛ փուսնոյ .

Միկ մը հիվանա նը նը՝ կիսին թը Ասըծու կոմքը
կո կատարը .

Միկ մարդը՝ հազոր մարդ կեծինոյ , հազոր մարդնէա
միկ մարդ .

Միկ ձիւքէօվ կո խեթին՝ հազոր ձիւքէօվ չի՛ն կա-
նը հանի .

Մէարնը մանուկն է կիշնի .

Մարդոն չուզոճը գոլսիը կոդոյ .

Մածունը ճիրմնի տախ՝ չիմ աւտոյ .

Միկի մը բոնը օոոս իդոյ նը՝ կիսին թը առնց
դամի կո խաղոյ .

Մարդուն ուախլուն իշսոնը ախլին տակը կո կինոյ .

Միկ մը միւրիկի նը նը՝ կիսին թը հոմնու մըսէն կո
խէ .

Միկ մը միկիմընէ բո մը ուզէ , էնէա քիշ տոյ նը՝ կի-
սէ թը մըսէա փըրցըցըր աըվըր .

Մարդոն էչը իւէ ըոքնա է՝ ղէնա անոնը .

Մարդ մարդոյ հրէտոկ կուքնը , մարդ մարդոյ էա
սասանոյ .

Նախը մը իրթոճ տեղիս նախըմէա իրթոս .

Նեհեա մարդոն կիսին թը՝ քըթըա կըճիրը կո կու-
տիս .

Նե՛ կուտին՝ նե՛ կը կըրցընին , կու դընին կու հը-
աըցընին (հոտեցնել) .

Շոնը (շուն) խառնէն շի՛րք կառնու .

Շոտ խուսուղըն կիսին թը՝ դուղը (դող) քոր դիտ-
նոյ չեկեկաւ .

Շոնը շո հարկին նը՝ տէրնէա շին հարկի .

Շոնը իշիցոք՝ դաղմոնը (դաւաղան) հազըրիցոք .

Ուրոք (մանգաղ) իր կիւթը շո՛ կիփի .

Ուտէօղըն ըշգիտէ , փրթէօղը դիտէ .

Ուշաը քերզութըն շո՛ կանը էնի .

Ուրոք կիւմի (կիւպի) տայիւմ դէտի քիզ մի՛ նը .

Չիքը (ինչ որ) ցանիս՝ էան կո քաղիս .

Չո հաւնոճ քորիդ էղեղ կո պատուէ .

Չո խալսիւնէօղ (զալք իրմեհ) մարդ չէ՛ նը , վար-
դոսկիտնէա կո խալսինոյ .

Չոքմըր (որչափ) բոնձրը լեռէա նը նը՝ վորձովոն
համբոնք կըլըվը .

Չի՛րք էնէ սիմը (սեւ) ու սէաղիւնը , խիվըն ու
խորոտը .

Պախըէն սէառիի նը՝ դանոկը կո շատնոյ .

Պույէօա իվիր մի՛ ցոտկո .

Պօլուզ աըղըն բոն աըր՝ խիւը դոնոյ .

Պոօլը աըղըն էգէ մ՛է աըվի՝ տեղէան պապոն կիզ
մը խէաղ շո՛ աըվի .

Ջորը դաքըր՝ անջըրդը իկիր .

Ջաղորցնէ կիշնի՝ ջախըլտիսը կո փնտըռէ .

Սիւը քեզ է (երազի կամ այլ դուշակութեան մէջ

սեաւն արագութեան նշան է) .

Սեան ներսեա՛ սեփական ներսեա սլուզըն ասոճնէ,
խայլու եւ նը նը՛ բոն չէ .

Վէդէօղ ջանիւր չո՛ւ լըցուր .

Վազէօղ ձիոն գոլօխը չի՛ն կըպցընի .

Վազէօղ ձըն ալիկը կո շապցընէ .

Տեկիկը (տեկիկ) ընկնը էաա՛ ցամաքը կիւլէ .

Տեկիկը ընկիր է՛ տղ կո փնտըռէ .

Տապսկը չափ թը խմ տակը սիւ է .

Տոն մը հնանոյ նը ծոկը կո շաանոյ .

Տէօկճիւր մը էյրուն կո բէճը՛ Ասրոծ գիտէ օմ քուչ
սկիտը անցընը (մարէ) .

Փուչը մատոծ տիղոցը կո հանին .

Փիս էչուէն քորը կո հալէ .

Քու իշոն մանոծ տիղը խոն (խան) մը չի՛նք կանը
չինի .

Քիմիկը ջոր չո կանը գոտնոյ խումիւոյ՛ փիմինէա
կէչուս չո կանը գոտնոյ անցնիւոյ .

Քեօքը միկ մը տոնը իւլէ նը՛ քոր կո քարին խաւը
թը՛ նախըմէա չի գոյ .

Քեօքը բոն բոնուզըն կիտին թը՛ մափա կո կալնուս .

Քարիբոն (ֆար, վաստակ, շահ) միջ էանկ ֆեօքիւն
շամպուրոյ քրթիւն է, էանէ էօր մը սկիտք կու
նը .

Քըթէն խըլընք՛ ուտոցնէա էրին հոռոզ .

Օղունկը (եղունք) մըսէն չի զատուր .

Օնթսիս արատը՛ մուրուքիս կո փիտիս .

ՊԼԱՌԻԿ Է .

ՅԱՆԴԱՒՈՐ ԶՐՈՅՅՔ

Ամին մօրդ իրինց տանը, խէաշն ու խէօնծիւրը դե-
ղիցոն դոռը, մուրն ու մօր ջօրը քշին դոռը .

Աւագու (°), խկի դոգու .

Արիգէն (**), խկի գիտէն .

Ալաչայիր (***), ճիրմակ սլայիր, սիւ ուլիունիր
(ուլիկներ) .

Արիւր իվրի քարըն, միր ջիրինիրը իվրի կալըն, դո-
ցէք օսէք միր շլարիսլըն՝ թուդ տոյ միր կիւ իլոյ
գարըն .

Աստուր, կիւ իլոյ խլու տուր .

Աստուր, փարի մը մըս տուր, կիւ նուկի սակոս
տուր .

Անթըփոյ կիւսէօղ, ան ատին խուսէօղ .

Աւախիս, գազով ուտիս, աղուընրկ մը բոնիս՝ հաւ-
կըթ ածըցընիս .

Բաւնոնք բեւը, իլինք լեւը, ուտինք լէօը .

Գեղ՝ արլմ մը դեղ (դեղ՝ վառօղի նշանակութիւն
ունի այս տեղ) .

Դացոնք Թոքոխ, բիրօք մախոք, ալայիս էա իղօք
սախոք .

Գեղիցէն մատոյ՝ մեղոյ մեղոյ, դօրս իլոյ՝ շահն պե-
քոս իղոյ .

(°) Աւագու . Զէյթունի շուրջն գտնուող գիւղի մ'անուն .

(**) Արիգէն—Արեգին, նոյնպէս :

(***) Տեղւոյ մ'անուն :

✓ Գեղիցոյ դռնով՝ կիր իշու կռնով .

Էլք՝ միր էգոն խեչք, ուտիմ խէաղք՝ իրթոյ վու-
րուս միջք .

Էլքր մաղինք՝ հոց խիինք, տախտով չուենք չոց
խիինք .

Ընկիր (ընկեր) դերվէար ընկիր .

Ընկիր, թափճըն մը լէշէակ կիր .

✓ Իս մալը (այս բառն մարդու անուան — Մնացական
— նշանակութիւն եւս ունի) դոն մալը (մալի) քե-
լէ ծիծուընք իլլէ քալը (քալս) .

Իմ աղջկինը խըս է, իփոծ մոս է, թէադէավիւրէն
սոյրուն քոս է .

Լոց լոց՝ կիր հոց .

Խիյուր (խըյար) պեհմէակ կիրոր, հեչ չէք տխի ի-
րոր .

Խայիլու նը հարկիրիտ, ջաղորցքն իրթոյ պարկիրիտ
Ասրոծ չիտոյ թարկիրիտ .

Կարապիտ կարմըր կարպիտ, կողնովիտ ծիծիմ՝
տանըմ պարպիտ (վարպետ, դպրատուն) համոր
տոմ՝ սամոր չինիմ, հիծնում իրթոմ Սուրբ կա-
րապիտ .

Հիւրը՝ դթիզ խեթ է կիւրը (կոր) .

Ձէայնէավիւր, ձիւրն ի վիր .

Միլիս (անուն) հիծնոմ իրթոմ Քիլիս, բիրիմ թելիս
(թելս, դերձան) .

Մարդարէ (անուն մարդոյ—Մարդար) տինիրն ի՛լ
քոր քարէ .

Մարդարէ՝ տըստէ կարէ, խոծ (խած) ու կեչին վո-
րոյ քարէ .

Մինոս, էօսէօր կինոս վողը չի կինոս .

Մանոծ , միր շոնը քիզ նիշանոծ .

Մըղինք , տինիրը ճըղինք .

Մըսէ բոն (մորթ) , օճ (առ) փեռէ բոնը կոպու ,
մըսէ բանն՝ մազէ բանըն վիրէան .

Ձիւ բոն , չիւ էնի բոն , չիւ հաւնը բոն , չիւ կա-
նը էնի բոն , չիւ թուղու էնին բոն .

Չախալցըք (Չախալցուոց—քրդաց ցեղի մ'անուն) դա-
ցոք՝ մածոն կիրոք , ծիծիցին՝ լացոք .

Չափոռ (ծակ) չանոխ՝ դըլը (դատարկ) պանոխ ,
կիւ փիլոյ՝ միկ փարոյ .

Պըտիկիկ տըստըկ , անուշիկ տալըք .

Սըփըրկիչ (Սուրբ Փըրկիչ-անուն վանքի ի Զէյ-
թուն) իսկի կիփիչ .

Սուրբ Սարգէս՝ բանէ ազէս , չիլէ չիգէս .

Վոնք՝ իսկի քիփոնփ (քիւփեկ - հրացան) .

Վարդէ՝ ծառնիրը զարդէ .

Վանըս (Յովհաննէս) տարըն տոսուիրկու տմըս ին-
ծէ բանըս .

Վարդոն , փըսկընըն (փըսիկ-կատու) էլեղիտ կար-
դոն .

Տաւսպուրոյ՝ տանը կուրոյ (կորհ) .

Քաղձիրիմ՝ հոց կուղիմ , քունիս կոզոյ՝ բորձ կու-
ղիմ .

Քեճը՝ մջկիտ կեռը , մածուն քըսիմ՝ ուղուրդը .

Ֆըրնէօս (Ֆանուզ—գիւղանուն) չիւրս դըհը բիւմ-
պէօս :

ԳԼՈՒԽ Ը.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ (Մասալլար)

ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՄԷԿ ԵՂԵԱՐՅ ՎԵՐԱՅ

Իլի կիցի քառսընը միկ էղբէար, քառսոն հոտը
 տեւիւրնի իղոծ է՝ միկնէա կշեկնի. էսիր քառսոն
 հոտը մէկմիկի ասոծ է թը՝ օտոյ միր կշեկնին
 իւր, էօնիւր անոննէա « Քեղոկ ֆեօուկա » եէ՝ իղա-
 տինք զէան, իղատոծ է. էնէա իլի տէ գացիր է՝
 էշը առիր է, փեաէ գացիր է նը՝ ճամբոնքը հա-
 րըստէ մը իրկուք իրիք խկի փիւխ առիր է. իբր
 էղբերատոցը խանութնուն մօտիցիր է նը՝ խկիքը ի-
 չուն տոկը խեթիր է, խանութնուն կիսը գացիրէա
 նը՝ էշը փընիր է, Քեօուկանէա դեշնիր է փընը
 քըքքըրիւ. էան վոխսը էղբերատէաքը մէկմիկի ա-
 սիրեն թը՝ տիսէք, տիսէք միր Քեօուկան խեւցով,
 փնտոկից խկիքը դոտով, իրթոնք օտոյ էշը զնինք
 չիւնֆիւ՝ էօրը իրիք, չիւրս խկի կո փընէ, միգ ին-
 տէատ էշ մը պիտք է. էալ նէ՛ չինք բանը եէա
 էան իւրը չէ՛ միկէալ էօրը պիտքիւնէա ըրըկվընէ
 գացըն խեշը ուր՝ Քեօուկան օջ գոյ (ոջ գոյ). էան
 վոխսը մօրդ ուղուրկիցին՝ աըվըն բիրի ու ասըն,
 Քեօուկա՝ օտոյ էշը միգ ծախէ. էանէա ասոց թը՝
 ունախնըս անցնը, էվէա տիսէաք ուր էշիա էօրը
 իրկուք, իրիք խկի կո փընէ, կո կառնում կո հա-
 րըստնոմ տեյի իկէաք. ինիրէա ասըն թը չէ՛ պէգ

(սլէք) մինք աշուշուիս (ալըշ վերիշ—աստ անդ
պահանջներ) ունընք, միդ կեօլիսկոկ (կեօլիսկ—ընդ-
հանրապէս բեռնարարձ կենդանեաց այս անու-
նըն կուտան) մը պիտք է Տէյի իկոք առնուլ. էան
Տէամը էանէ ասոց թը՝ հայտէ՝ կո ծախիմ, քոսոն
փառոյ տըվէք տում. էնիրէա ասըն թը՝ ճանըմ սուդ
կուներ ըմնը՝ դոն գիտիս. տըվըն քոսոն ֆեւկան ու
ասըն թը՝ չոց էնինք նը էաս շոտ կու փընէ իսկի.
էանէա ասոց թը՝ ութ աւուր ուտիլիքը դրէք առ-
ջիւը, ջորնէա իննոյ դրէք ինտէան ու՝ չը կանը
հասնը, եէօթը էօրէա խեչը միրթէաք: Չոցըր աս-
ոց նը ինտէան էրին. եէօթը էօր իղով ու ութը
լուսցով նը՝ գացըն խեչը դոօը հըրիցին նը՝ չը
բացվիով. օ՞խ ասըն, իլէնքը էդիր է իսկին, դոօը
չո բացուը, գացըն էալ մէկմիկի խապոր տըվըն ու
ասըն թը՝ տիսէք իսկին փառլամըշ կուներ— իշուն
ուտոցը լուսնըն (լուսն—նալ) համոր կոսըն: Ճը-
վացըն հաճորը (հիւսն) դոօը տըվըն բանոյ ուր՝
իսկի հե՛չ օչ գոյ, էչնէա կո սատկի. էան էօրը էչը
սատկիր է: Թա՛ էան վոխսը կո վագին կորթոն
Քեօսէն խեչը, չիրթոճէն կոսին թը՝ իրթոնք օտոյ
սպանինք. գացըն ուր Քեօսէան օչ գոյ:

էնիր էաս չէօը չիրոճէն Քեօսէան լեօը դոնոց
իրկու լափուստոկ (նապաստակ) բոնից, բիրով տո-
նը. միկը կոնկոնը խեչը դրով, միկնէա հիտը տա-
րով թը՝ իղով ուր էնիր տոնը իգոն նը՝ էան լա-
փուստոկը կընըկը փրցընէ թը, դոնոյ Քեօսէան օ՞ռ
ու արկոնը՝ էանէ լեօը կու փախչի չիրք գիտէ,
իս էա էաս լափուստոկը կառնու՛մ ու կուրթում,
թուդ փախըլլամըշ նըն ու աս ճապոյ էաս գնին
թը՝ աւըլ միդ էատ պիտք է:

Կընըկը ասո՞ծը կիսի էրո՞վ, իկին նը՝ կպուց լա-
փըսակէն թը՝ զոնոյ ճո՞վոյ, էանէա լեոը դոնոց,
անձոյ Քեօսեան իկիւր նը՝ մէկմիկի ասըն թը՝ անա՛ն
միզ անը ինտէատ բո մը պիտք է, էվէա լափուս-
տոկնէա զնիցին տասը ֆեսոյ, գացըն իրինց ասնը,
Գացըն պեզոքը, մանաբամէա ճարդըրիցին ու լափըս-
տըկէն ասըն թը՝ զոնոյ ճե՛ օնոյ քաղաքը օնոյ մար-
դոն տո՛ր էաս մանաբքը ու ասոյ թը, Կիկան (ա-
ղա) բարի ունը, կոսէ թը՝ օնոյ իրկիրիք դարուշը
թուզ տոյ. փըրցըցըն լափուստոկը նը՝ ճե՛ իլով լի-
ոը դոնոց: Քոսոն, էասուն էօր կիցոն՝ չը կանցին
լըոի. լափուստոկնէա չիկիւր (չեկաւ):

Իլով Քեօսեան էօնիւնց հէամբը կիցով, տիտով
ուր՝ կուզին իգոյ էան էօրը սօլանի զընք. հը՛մմըն
քեզ մը դոնոց պեզիւրէն քաղըրդ մը ասով, միջնէա
էրին լոցով, բիրով կանկոնը փիւզքը կապից ու ա-
սոց թը՝ էնիր իգոն նը տուշոկ մի՛ քարի, իս էա իլ-
լիմ տառընմընըմ, դանոկը փիւզքիտ խեթ իմ ու մե-
ռեր (մեռիւր) դոնէա, էան տոինը օսոյ տարտոկը
անկէճիտ զընիմ ու փըչիմ նը՝ իլ կանէ: Էան իր-
կոնը իկին քառասոն էզըէրտէաքը նը՝ կընըկը տու-
շոկ չի քարից նը՝ Քեօսեան իլով ասչէ՛ ասո՞ծը կի-
սի էրով, զենից նը, ասըն թը՝ թո՛ւ լը մուրն ի վը-
րէատ, չո՞ց զենիցիր կընըկիտ նը՝ ինքէա կո՛ ծի-
ծաղէր. իլով ասչէ՛ կանկոնը չիրք ասոց նը ինտէան
էրով. էան ճեաւը իրր էնիր տիտոն՝ էվէա ասըն
թէ՛ հը, հը՛ միզ ինտէատ բոն մը պիտք է, մի՛ր
կնկտէաքը գիժոր չօր ին ու իւժէօվ, չիւր մի՛ր ա-
սո՞ծըն անկէճ չո՛ զնին նը՝ զենիւք ու գոլոխը կըտ-
րինք, իլոն քանը մը ֆիտոյ էա էան դարտոկը ա-

աբն։ Առջէն ճիւղքը մինձ է զբէտորը ասով գոնոց տո-
նը իր կոնկոնը նիշացով ձրրը տիւ, էանէա ասոց
թը, ճա՛նըմ շի՛րք կուգիս լը սիվ խէանձիւղ, կըտ-
աբճ մեռիւ. էան վոխսը հեռիմբը տառնմը չ նէալէով
իլով սրտկըցուց իր կընընը զենից, մանտրրկը-
նիրնէա տմինը զըհ մը ճենշիցին նը՝ ինքէա ծիծա-
ղել զեշնից թը՝ պիտը իլէ սաղցընէ, իլով տարա-
կէօն ճիւղ էրով՝ բոն օշ գոյ, ճիւղ, պըրա՛ ճիւղ,
ճիւղ էրով բոն չիղով նը՝ մըտէօքը ասոց թը՝ էալ
իմը նալոն (ըլլալուն) փրի օտիւնց ալայունէա
թուղ նը։ Աս տապոյ միկէալը՝ մինձ է զբէտորը էրոծը
կիմի էրով կոնկոնը, տիտով ուր բոն օշ գոյ. չի-
կընցընինք, ալայինէա առչէ մինձ է զբէտորը կիմի
էրին ու ալայունէա միտով։ էան վոխսը պիտիւն
է զբերտէաքը տանուշուխ էրին թը՝ աս նախը իւ-
ղիւրդ իրթոնք սպանինք. իլոն կորթին նը՝ իրինց
մըջէն միկը ասոց թը՝ պիտիւն չ՝ սպանինք. հապը՝
զընզըռգիլէն սպանինք, էնիրէա ինտէատ թուղ նը
ասըն։

Գացըն Քեօուկան բոնիցին, հակէ մը միջ զըրըն
գացըն պայիրէ մը ծէար զըրըն ուր՝ էօնիւր տակ-
նէա մինձ կիօլ մը կէար, իրինքէա զազվոն կըտ-
ոիլ գացըն նը՝ անգոհօն չուպոն մը հի՛, հո՛ւ
տավըրնըն արծիլէն կոզէար նը, Քեօուկան ասոց
թը՝ իս թէազէազիրէն աղջկինը չի՛մ առնու. էա-
նէա ասոց թը՝ իս կառնոււմ. Քեօուկանէա ասոց թը
ինտէատ է նը՝ հուսոյ քելէ մոււա. իկիք չուպոնը
մտով Քեօուկն տիղը. Քեօուկանէա իլով տավրըն ար-
ծիլէն ճէ՛ գոնոց։ էնիր է զբերտէաքը իկին զեշնի-
ցին էօտիւր կըպընիլ (զարնեւ, հարկանեւ) էանէա

ասոց թը՝—թէ ազէ ամբիրէն ազջկինը կառնում— է-
նիրէ, ա նըդացոն թը՝ ամիս (ան'ս) սէ ասակկուն գեա
չէ օն կո կուտոյ, հի'ւս, հի'ւս (սո'ւս սո'ւս) ասըն
կըսըցըն, գուլութիցին ջորը բձգիցին:

Քանը մը տարը խորը Քեօսկան իկիք (եկաւ) էդ-
բերտոցը խանութնուն ասչիւր նը՝ էդրերտէտքն-
էա միկ միկի ասըն թէ ը՛, ը՛ օտոյ միք Քեօսկան
է. Քեօսկան էա ասոց թը՝ մուրն ի վրենէ՛դ, ջը-
բըն նէօրօք տիղը շուրճ քարիցիք, խուսու տիղը
թուդ քարըք (քարէիք—նեաէիք, ձգէիք) եուր՝ աս-
հն շոտ տափոր բիրը (բերէի), էան վոխքը էնիրէա
ասըն թը՝ զմիգ էա ջորը քարէ. իրով Քեօսկան գո-
նոց ալալինէա ջորը քարից, կո քարիք նը՝ պառ-
պուկ (պառաւ) մը իկիք. հարցուց թը՝ շուրճ ջո-
րը կո քարիւ. էանէա ասոց թը, կո քարիւ թը
սիտը իրթոն տափոր բիրին. ե՛, ասոց իմ պոկին
էա քարէ. էանէա քարից. ջըբըն միջը դը՛, դը՛
կո կենէր նը՝ կընըկը գիտէր թը, կոսէ թը քառ-
սոն հոտ կու բիրիւ. էանէա ասոց թը՝ «դըրզը
մըրզը պիլմեալ՝ քոսիլա աս կերիւ»:

ԱՂԲԱՏԻ ՄԸ ՎԵՐԱՅ

Իլի կիցի աղքատ հերիժիկ մը, էաս հերիժը չե՛
դուրպեաք կորթոյ. իրթուլիֆեալն իրինց բընը տե-
տիք է ուր իրիք հաւկըթ կոյ, իրիքնէա կո կառ-
նու ծխցը կո գնէ չե՛ կորթոյ. մատը մը (լեա, բլուր
կը նշանակէ) ծէար կորթոյ նը՝ գեւ մը օոռսն կո-

գոյ « բարեկոն » (բարի երեկոյ) կոսէ նր՝ դեւ-
էա կոսէ թը եօր կորթոս էգրէար, էնէա կոսէ
թը դուրպեար կորթոմ: Դեւը կեւիր է գիտ-
նէն քոր մը առիր է, ափըն միջ փոխիր (սեղմել)
է ու էլիր էրիր է. ազքոտնէա կո կեւը գիտնէն
քոր մը կո կառնոււմ չեյի՝ ծուցէն հաւկրթըն միկը
կո կառնու կո փըսիտէ, ջոր կո կեւնէ. դեւը կոսէ
թը՝ ճաննքմ, իս իմ դեւ՝ դոն իս ֆեօթիւ (տկար)
մորդ, շոց կոնը ուր դոն ինտէատ կարըճութըն
կո կեւնիս. հաղը շիւք պեղլու կո կեւնըր, ինտէատ
կըտըրճ իմ կոսէ մորդը. դեւը կոսէ թը քու հիտը
էգրէար շինընք. էնէա կոսէ թը՝ նընք:

Կորթոն գիւէն տանը, էօր մը կո կրնան. էան
միկէալ էօրը դեւը կոսէ թը՝ դոն ջորը գոնոյ, իս-
է փեաէ իրթոմ. կո կիւէ հաւկրթ կըտուէօղը
գուճոյ տէօկճիւր մը կո կառնու, իրթոլնիֆեան
տէօկճիւրը շո՝ կանը շալկի՝ գուտըն կո կածկէ, կո
կապէ քեշիլէն ջըրըն խեշը կո տանը, կո փշէ, կո
կուռուցունէ տէօկճիւրը, քեշիլէն կոգոյ տանը ուր՝
դեւ դեւը շիկի. դընքիկ մը կեցիր է նր՝ դեւը ի-
կիր է գաղաոմ տըտտիր է, ասիր է թը՝ իլ ջոր մը
տոր. իլի էանէա էսէաջ ինք խուժի պապըցի,
դընքիկ մը ջոր թուգիր է, էանէա գիւէն տըվիր է.
դեւը շաշմըշ էգիր է էօսիւր կըտըրճութոնը հա-
մար. էան միկէալ էօրը ազքոտը ասիր է թը իս
կուրթոմ փեաէ. իլի գացի, շէ՝ կանցի կալի ճօկու-
ոը, ուր փէատ կըտրէ, հէօն ձիւր (ձոր) մը քա-
րիր է ճօկուոը չէ՝ իկի գացի, ասիր է թը ճաննքմ
նեշ քէնէատ թիթիւ ճօկուո կունը, կաղոյ՝ կըտը-
ցը ձեռոցիս թոռով չէ՝ գոնոյ. կորթոն գիւէն հի-

տը կո շալկէ դեւը փէսա՝ կոգոն. դեւը կոսէ թը՝
էալ քու տունը շիրթոնք. իրթոնք կոսէ աղքատը:
կո կունոյ շալսկ մը խակի քըրձը մը միջ ճէ՝ կորթոն.
էալ տոնը մուտցոն նը՝ աղքատը ասոց թէ՝ դոն
եաւիոշ եաւիոշ արկոյ, իս իրթոմ տոնը տխանում կը-
նիկիս կոյ. կոգոյ տոնը կոսէ կոնկոնը թէ՝ միկ մը
կոգոյ ըմմը՝ շալկին խակի է, իգոնը շալկէն խակին
օռ, տիղ մը սրապցու՝ ամոննէա բամպուկ լըց (լից)
տըստէ եէա նը կո՛լ (կա՛լ) քուրձը գիտենը կոպու:
կոգոյ դեւը, կընըկը կո կալնու քուրձը գիտենը
կո կըպցընէ թը՝ օսոյ եէ բիրոծ վաստոկիւմ. դեւը
վախէն կո հիւոնտոնը. դիւէն դուլաքէօն հերիֆը
արուստիսը կո կիլլէ. դեւը կոսէ հէօտ շիբք կո
կենիս, էանէա կոսէ թը՝ իմ պապուն թուրը հէօս
կոյ, էան կո փնտոխ:

ԳՈՂԻ ՄԸ ՎԵՐԱՅ

Իլի կիցի պառոտ (պառաւ) մը, էաս պառոպը
աղջկին մը ու տողոյ մը ունցիր է, աղջկինը միկի մը
նիշանիր է, էաս աղջկընըն նիշանոծը գուղութըն
կո կենէ՝ ինք էա ուզացիր է էնիլ. էաս մըտքէօվը
գացիր է մէօրը ասիր է թը անն (մայր) հնիշտեն
գուղութըն կո կենէ, իսէա կենիմ. էանէա ասիր
է թը՝ եւսիրլմ Ասրոծ կու նիզանոյ. տըղէան դոք
մէա ասոց թը իղիա կենիմ. մէարնէա ասիր է թը՝
հ, կանէ գեղիցէն իրթոմ, Ասրոծ տխանում շիբք
կոսէ, հիկար իզին տոյ նը՝ էրոյ, շիտոյ էա նը՝

մենի: Էսա ասած վոխսը տեղէան գաղտով կորթոյ
գեղիցէն կո մուտնոյ ու խուրանըն խաւը կո պահ-
ուրաը, չիւր էան ատինը մէարնէա կորթոյ գեղի-
ցէն կո մուտնոյ ու Ասուծու կո ճովոյ կոսէ թը,
Ասրոճ իմ տեղէան կոսէ թը գուղութըն կենիմ,
տոս հրամանն նը՝ թուղ էնէ, չէա նը՝ թուղ չէնէ: Էան
վոխսը տեղէան կոսէ թը՝ Ասրոճ կոսէ թը թուղ էնէ:
Մէարը գեղիցոն իլոժ վոխսը գաղտով տեղէան կո
փախչի, տոնը կողոյ կը աըսաը, մէարը սանաոխը
կո կիւլէ նը՝ տեղէան կոսէ թը՝ քելէ՝ տիսնուժ Աս-
րոճ չիւրք ասոց. էանէա կոսէ Լաւրիւմ էսէօր բոն
չասոց, ասոց թը Լախարլմէա իգոս նը՝ բոն մը կի-
սինք. ինտէաս էօնիւր վիրէան իրկու Լախարլ էա
կորթոյ, տեղէանէա Ասրոճ Տէյի ինտէաս պատաս-
խոն կոտոյ. իտէ Գիւրը մէարը կողոյ կոսէ թը՝
Լաւրիւմ Ասրոճ հրաման տովով, գոնոյ չիւրք կու-
ղիս էրոյ:

Էան սահորը կորթոյ Կենիշեան կո գոտնոյ կոսէ
թը՝ Կենիշոյ ըսըկ էա (ղիս եւս) հիտիա ընկիր պի-
աը էնիա. Կենիշեան էա կոսէ թը՝ գոն իմ հիաը հեչ
ընկիր կանըն նը. քելոյ կոսէ սընամըչ էրոյ. էա-
նէա կոսէ թը կենիմ. կո կիւլին կորթոն միկտիղ
բարաու մը (բարաի ծառ) տոկ, Կենիշեան վիր կո
հեյէ կո տիսնու ուր՝ բարաուէն ծէարը քըղըկ մը
կոյ, կոսէ թը իւ օտոյ քըղըկը օ՛ւ. էանէա ղըն-
քիկ մը տիղ կո կիւլէ, խտիվոնց կո կիջնոյ կոսէ թը՝
էղբէաը, գոն իւ ճապոյ մը տիսնուժ՝ ուսնուժ՝
հապո իո էա իլիմ. Կենիշեան էա կո կիւլէ քիչ մը
տիղ նը՝ փեչը տեղ կո կանցնը, շարվորը տիղ կո
փակչի նը՝ կո հանէ, նիւրիկէն կո կիւլէ, կո կառ-

նուր քրդիկը, կո կիջնոյ կո տիսնոյ ուր շարվորը օչ գոյ. կոսէ թը շարվորիս շեղով (ի՞նչ եղաւ) պոլուզը կոսէ թը հասիկ, իշեկա ինտէաս կենին. էնէա աճեօպիւլով (աճայիպ) կոսէ թը՝ գոն գինաէս իվիլիս. է՛հ ինտէաս է նը՝ ուղէ՛ (քայլէ) իրթոնք. էնէա կոսէ թը եօր իրթոնք. էն էա կոսէ թը՝ թէազէափիւրէն խեզնեան պատուիլ (կը նշանակէ գողանալ) իրթոնք:

Էաս մոքէօվ կորթոն գիշիւրով կո պատուին թէազէափիւրէն խեզնեան, կոգոն տոնը. պոլուզը կոսէ թը հնիշնյ, իս բոն մը էնիմ, էնէա կոսէ թը չիւրք. — իրկու դուռուշ տուր՝ իրթոմ պեզիւրէն սումուս առնում, սերեան (սարայ) իրթոմ ծախիմ հեամիլէա (հեմ sk) տիսնում թէ չիւրք կոսին խազնին համոր. հնիշեան էա իրկու դուռուշ կո կուտոյ: Էաս կորթոյ կո կառնու սումուսը ծախիլ, սերեան կո մոսնոյ սումուսը կո ծախէ, կո տիսնու ուր պիւնպաշին կոսէ թը՝ գիշիւրիս թէազէափիւրէն խեզնեան պատուոժ է. պոլուզը կոսէ թը հապը չիւրք պիտը էնիք. պիւնպաշիքնէա կոսին, ինցո ինցո տիլ պիտը իրթոնք տըսաընք, պեհինք (հսկել, պահպանել) եկեար գիւզը իգոյ նը՝ պիտը բոնինք սպանինք. էաս քելուրը կո լսէ, կոգոյ հնիշնին կոսէ թը՝ ինցո ինցո կոսին: Էաս քելուրը քանուշուխ էնիլէօվ՝ էան գիշիւրը էան տաստոժ տիլվըն ի վիր չորթոն (չեն երթար) հասօր պաշխոյ տիլոց մը կորթոն կո պատուին, կո գոն իրէկու տիլը կոնոն նը՝ պոլուզը էվէ իրկու դուռուշ կո կառնու կորթոյ սումուսը կո կառնու, սերեան կորթոյ սումուսը կո ծախէ, կո տիսնու ուր պիւնպաշիքը կո-

սին թը՝ գիշիրսէա էվէա պատռած է. պոլուզնէա կոսէ թը հապը շիրք պիտը էնիք. էնիր էա կոսին թը գիշիրիա պիտը իրթոնք, հիւր (հոր) մը պիտը բանոնք, քաացոծ ձըդ պիտը նոնք (լեցնել) գիւղը իգոնը՝ միջը ընկնը, էաս քեւիւրը կո լտէ, կոգոյ իր մըտքը կո դնէ, կոսէ թը՝ հնիշին չասիմ. էան գիշիրնէա ձըդըն պարսպորնէա (կը նշանակէ ուղ- ղութեամբն, գէպ ի ձիւդն) դացըն նը՝ հնիշին կոսէ թը դոն էսէաջ անցէր. էանէա էսէաջ կո անցնը, ղընթիկ մը կորթոյ նը՝ կո կընկնը ձըդըն միջը, շիւր փիւղքը կո կիւլէ, պոլուզնէա քեզ մը ֆիլիքան կո կարէ կո պահէ, թէադէալիւրէն խեզ- նեան կո փնտռէ, կո պատռէ, ֆիլիքնէա կո կառ- նու, կոգոյ տոնը կո քեկպեհէ թը հեչ մի՛ լէաք. ինտէաս կոսէ, կորթոյ սովուս կո կառնու կորթոյ սերեան. էվէա սովուսը կո ծախէ նը՝ պիւնպաշիքը էվէա կոսին թը՝ գիշիրիա գիւղը գոտոք ըմմը՝ ֆի- լիքան ո՛չ գոյ. պոլուզը կո հարցնէ թը հապը շիրք պիտը էնիք. էնիր կոսին թը քաղոքը պիտը բիւ- լինք իւվ կո կուլոյնը՝ էան տուներ պիտը կըտըցը- նինք. պոլուզնէա քեզ մը կո վաղէ տուներ կոգոյ, կոսէ թը՝ շիւլէք, շիւլէք կուլէաք (մի՛ գուցէ լայք) էնիրէա կոսին թը շիրք լոյ:

Պոլուզը բլրվիցով նը՝ լոլ ու խաղոլ դեշնիցին. անձոյն էան ատինը պիւնպաշիքը շոտ հսֆաւ էա հիւմուսն իկին տխոն ուր կո կուլոն, հիւմմըն դոտը մեհիւրիւրիւր էրին՝ իլոն ճէ գացըն: Պոլուզը իկիք տխոմ ուր դոտը մեհիւրիւրիւր էրոծ է, հարցըցիր է թը էաս միհիւրին ուտալը (ասլը, սեպեպի) շիրք է. էնիրէա ասոծ է թը՝ մինք կո կուլք նը պիւն-

սրաշխարհը իկին մեծահարկանիչ էրին Տէ գացըն. սո-
լուզնէն գեշնից խշխացք (յիշոցք, հայհոյութիւն)
ասիւ, Մթնիւր է նը՝ սոլուզը ճիւղիւնմիչ էդիր է,
հը՛մմըն էդ ու մուր էրիր է, գացը աշխարհը գոռ
իրինց գոռը կիմի մեծահարկանիչ էրիր է. լուսցիր
է նը պիմպաշխարհ, կսկերնին էա իկոծ է թը՝ պիտը
կըտըցընին, տիտոծ է ուր՝ աշխարհը գոռ մեծահար-
կանիչ էրոծ է, կորթոն կոսին թը մինք իրէկ գոռ
մը մեծահարկանիչ էրոք, էօսէօր գացոք տիտոք ու
աշխարհը գոռ մեծահարկանիչ էրոծ է: Թէագէտա-
վիւրը ճիւղիւնմիւչ իզով ասոց թը՝ ինտէատ է նը
իւվ իւր ասէ թը քու գիւզն իմ նը՝ աղջկին մը ու-
նըմ, իր կուտոմ: էաս սոլուզը կո կիւէ թէա-
գէտավիւրէն սկերան կորթոյ, կոսէ թը՝ իս իմ
թէագէտավիւրէն գիւզը. պիմպաշխարհ կոսին թը՝
մուրն ի վրէճոտ, գոն օմ շունիս (գու ում, որոն
շունն ես, կամ որպէս սովորաբար ռամկօրէն —
գունն ո՞ր շունն ես) ուր թէագէտավիւրէն խեղճեան
պիտը սլատոիս. էան էա կոսէ թը գացէք, ասէք
թէագէտավիւրէն. կուզէ նը՝ թուզ գոյ փերեան (փա-
րայ) ցըցընիմ. էան է ասոց, գացէք, տիտէք
ասիւր (ասիին) իրո՞վ է. էնիր էա կորթոն կո տիտ-
նուն ուր՝ հուրը (հոր) մը միջ իլէնքը իսկի կոյ,
կոգոն թէագէտավիւրէն կոսին թը սահի տիտոք
էսո է: Թէագէտավիւրը կո կավտոյ, կոսէ թը չէօս
ճըվացէք. գացըն ճըվացըն, բիրըն թէագէտավիւրէն
առչիւր, թէագէտավիւրը ասոց թը՝ եսվոը՛մ, հում-
մոյ իւղիւրդ գոն իս իմ գիւզը. էանէա ասոց թը
իս իմ. Է եսվոըմ, ասոց, հումմոյ իս աղջկին մը
ունըմ՝ քիզ պիտը տոմ, կիկար բոն մէա ասիմ կանըս

էնի նը. էանէա ասոց թը չի՞րք է. ասոց թը հում-
մոյ ճէ օնոյ միկէալ թէադէավիւրը զըսրկ (զիս) թո-
ւոք կո կենէ, կոսէ թը՝ չոց գիւզ էզիւր է ուր քէ-
նիկէաս ասին չո կանըս գոտնոյ, հեյէ՛ ասիմ,
հումմոյ դոն էօնիւրէա բոն մը կանըս էնի. էանէա
կոսէ թը բոնը դուրոյ է, իլէք կոսէ մաքի մը ու
էած մը բիրէք. էնիրէա կո բիրին, քեզ մը կո զենէ,
տէօկճիւր կո հանէ, կո կառնու հիտը ճէ կորթոյ
թէադէավիւրէն սարին խաիւր. հէօն էա պըտիկիկ
ճէնիկ (ճէնիկ) մը կո կինոյ. էաս պոլուզը տէօկ-
ճիւրը կո կուռուցունէ, կո հիծնոյ ջըրըն վորձովոն
կորթոյ թէադէավիւրէն սարին քէօվը. մաքուն
տէօկճիւրին վիրէան մազը գոլօի (ամէն մէկ մա-
զի զլուխ) զիլ մը կո էանցնէ, տէօկճիւրը կո
հադնը, խըչա մէա ձէաուր կո կառնու, քառսոն
սիփկոյ (գամ) կո կունցնոյ, կո կալցընէ սիփկոյ մը՝
կո կիլլէ, քառսուննէա կո կալցընէ պատիհնէն կո
հիյէ ուր՝ թէադէավիւրը սաղմիւս կոսէ. պիրսկան
կիսիմ՝ պէաստիհնէն նիրսը կո մոտնոյ, գադլոնը քե-
լածը կիւնի արքսիւրնըն կո չափէ, զիլիւրը կո խըլ-
լըլցընէ, կոսէ թը՝ իկիք հիգէա տանէօզը. ին-
տէա ասոժը կիւնի թէադէավիւրը կո դոդոյ, կոսէ
թը աման մեզոյ, իրիք էօր մեօհիկաք տուր. էա-
նէա կոսէ թը մեօհիկաք թուզ նը. կո կիջնոյ սիփ-
կենին կո հաւքէ, կո պառկի սարին տոլը:

Թէադէավիւրը առաւտուն կո կիլլէ, կո ճովոյ
խիւշիւր մարդկոցը (աւադանի) կոսէ թը՝ իրիք ա-
ւուրը իս պիտը մեռնըմ, հրիչտոկ իկիք, հիգէս
ուզից, իսէա չոտ իրիխտիցի ասը թը՝ ամա՛ն իրիք
էօր մեօհիկաք տուր, էան էա տալով հիս ձիզ

հազարյաշմըշ նաւոյ համօր. էնիր էա թուոք էրին, ասըն թը, իւվ է էաա իւթէօվ հրիշտոկը իւր պիտը գոյ քու հիգէն առնու. էանէա կոսէ թը ճանըմ գոք էան տիսնէաք նը՝ սըրտվընըդ կու փըրթը: Իրիք էօրը կո կոլումնոյ. պիւնպաշիքը հսկերտէաքը կո հազարին թը հրիշտոկը իգոյ նը՝ պիտը սպանին ճէյի. ա՛նճոխ էվէա սոլուզը էան թիվուրը իկիք նը գազվոնը քեշից, զիլիրը խըլխըլցընիլ դեշնից, չոք մը մօրդ, հսկար, պիւնպաշի կէար նը՝ վախվունուն մեզու կիւմի մեռոն. սոլուզը կո տիսնու ուր քէօվը մօրդ օջ գոյ՝ թէազէամիւրը առօծը կիւմի տէօկ՝ ճիւրը գորով, բիրոննէա կապից, մաքընին ուռուցուց հիծով ջօրը ըլըվիցով. իկիք քաղոք մը նը՝ պըղընձ շինէօղ մը օոօս իկիք. թէազէամիւրը աւոց թը եօր է էաա տիեղը, չի՛րք է էաա քախ քուխ կո կուներ նը. սոլուզնէ կոսէ թը սուտ աշխօրհը պըղընձ շինուղընն ծախոծ է ու հուամոնէա գըլխընըն կո ծիծին. թէազէամիւրը տէկճիրին մըջը իփեան մեզոյ, մեզոյ կոսէ:

Ճամբոնքը կո պապընին կողոն առջէ քաղօրը, թէազէամիւրէն կո մօանոյ նը՝ կոսէ հաաիկ (ահաւաօիկ), կո փըրցընէ տէօկճիրին բիրոնը. ճէ էան միկէալ թէազէամիւրը կո տիսնու ուր զինտէք կիւմի ինսոն (ինսան) ին, թէազէամիւրը կոսէ գէպի էօնիւր — էաա է իմ գիւզը — հէօն աճայիայ կո մանոյ էան թէազէամիւրը:

Էալ՝ էան պըլըզըն ֆելիշ լաթիր կո բիրին, կո հազընին կո աըսօրցընին մեճլուսըն մըջ, էալ առջէ թէազէամիւրը կոսէ, ե՛, հալիոքմ, աղջկինիս քիղ պիտի տամ. կո կիւլէ փաւին կիսնէա կո կու-

տոյ, աղջկիննէա, ու ութ էօր ութ գիշիր հարսնըք
կենին:

Էան է հասի մուրազըն, մինքէա հասնընք:

Ի ՎԵՐԱՅ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԵՒ ԱՆՎՐԷՊ

ՎԱԽՃԱՆԻ ՆՈՐԱ

Թէադէավիւր մը ու վեգեր (վեգիր) մը քեփսիլ
բիւլիլ գացըն ու գույըն (գիւղին) ճիւրը աղքատ մի-
կու մը տոն իջոն. էան գիշիրը տոն տիւրիւջը կը-
նըկը պոլուզ մը ունցով. իրինքէա հէօն իջնալնըն
փուշմոն իղոն. էան սահորը նիքսէն Տէլիդանլը մը
մատով, դորա կո կիւէր նը՝ Թէադէավիւրը քըշրիւ
կիւմի ասոց, ճա՛նրմ դոն շո՛ց մարդ իս, մինք հէօս
սըստըլոյ էա կամչնոնք ու դոն էա իկիր նիքսէն
մատոր. Տէլիդանլըն ասոց, ճա՛նրմ ինցո ինցո Թէա-
դէավիւրէ մը կընըկը աղջկին մը ունցով ու էօսիւր
ճակոտը գրիցի Թը՝ էաս պոլուզը էան աղջկինը պի-
տը առնու: Էան սահորը Թէադէավիւրը շաշմըշ ի-
ղով Թը՝ հեչ միւլփի՞ւն է (հիչ միւլփիլին մի սիր) միւր
աղջկինը էօսիւր տոնք: Էնիկէ սոնդրոյ Թէադէա-
վիւրը ու վեգերը Տաւնուշուիս էրին Թը՝ շո՛ց քիվուր
էատ պոլուզը կանընք սպանի օլա. վեգերը ասոց,
էրկոնը ասինք Թը միկիս Թէադէավիւր ինք՝ միկ-
սէա վեգեր, էաս տիղվինքը քեփսիլ կո բիւլիլք Թը
ըշի սոլուզ մը կանը՛նք գնի, չիւմփի, միկսէա
պոլուզ շունընք, ըրընտ իղով դոն շիւր հինգ պո-
լուզ ունըս դուհանամ զկարոճ, հուամոյէա դոն պո-

լուզ մը ունցոր ու կըրցընիլոյ բոն շունքս, քելլ' օտոյ նիւր իզոժ պոլուզը միզ ծախէ, կոշոտէօքը (կշոտվքն) խկի կուտոնք. կընըկը սրբա շունցով ըմնլ' էրիկը ասոց թը կուտոնք: Աօըն պոլուզը ու զույըն դորս գացըն նը՝ թէադէամիւրը ասոց վեզիւրէն թը հուտոյ զենէ՝ քարէ. վեզերէնէա ասոց թը զենիւն՝ օտոյ ուրմուներն (օրման — անտան) միջնէա քարիմ նը՝ կու մեանք քարից: Էան տիզվընքը չուպուն մը տափոր կո կարծէր, էծուն միկը գոնոց էան պոլուզը ծծցուց: Քէլէյու (եկ աես օր) էածը պառպուկոն մ'էր. իրր բրկըվընէ իզով՝ չուպունը տոնը գոնոց. պառպուկը ճենչից (պոռայ) չուպունըն վիրէան թը՝ Ասըծէ շիւ վախի, չոց իս միկ էծուկ ունըմ նը՝ էան կո կըթիս. չուպունը ասոց, մինծ անն (մեծ մայր) իս խապոր շունըմ: Ու ճանկիմանազը իզով նը՝ էվէա չուպունը արծիլ գոնոց. բրկըվընէ իկիք չուպունը նը՝ էվէա պառպուկը ճենչից, անն իմ էվէա կըթիցիր, Ասըծէ շի վախոժ միկ միս իզի գոն: Էան միկէալ էօրը պառպուկը ճառըմնընէալով իլով իծկոնը խիւր գոնոց, էածնէա արծիլէն արծիլէն՝ իլով խզիւրդ պըլըզըն խեչը գոնոց ու կո ծծցընէր. պառպուկը ուրախնիլէով առով պոլուզը տոնը գոնոց, ճովոց դրացնիրը ասոց թը՝ աննն, չուպունը չո կըթի էզիր էծիկիս, իմ էծուկը պըտրկ մը ունցիր է:

